

# Կրթություն

Շաբաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 27.04.2022թ. չորեքշաբթի թիվ 18-19 (1043-1044)

## Կգա օրը, եւ մենք կվերադառնանք Յայրենիք ...Լինի 107, թե էլի մի քանի տարի անց

Ապրիլի 24-ին երկիրը խնկարկեց Յայոց Մեծ Եղեռնի զոհերի՝ սուրբ Լազարյանների հիշատակը



1915-2022  
Յայոց Ցեղասպանության  
107-րդ տարելից

**Հիշում եմ  
եւ պահանջում**

### Պիտի կերտենք և՛ր արշալույս

Այն, ինչ տեղի ունեցավ 1915-ին ու դրանից առաջ եւ շարունակվեց մինչեւ 1923 թվականը, սկսվել էր 1878 թվականին, երբ միջազգային դիվանագիտության պատմություն մտավ Յայկական հարցը: Թուրքիան, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորություններից, հղացավ մարդկային պատմության մեջ մինչ այդ չլսված, նույնիսկ իրենց՝ թուրքերի պատմության համար աննախադեպ հրեշավոր մի ծրագիր եւ ձեռնամուխ եղավ դրա պետականորեն կազմակերպված իրագործմանը՝ Յայկական հարցից ազատվել Յայաստանում հայ բնակչության ոչնչացմամբ, մեկընդմիջտ տիրանալ հայ ժողովրդի պատմական հայրենիքին:

Յայոց եւ օգնությամբ ազատագրվել դեռեւս 11-րդ դարից Առաջավոր Ասիա եւ Յայաստան ներխուժած սելջուկ-թուրքերից... Սկսած 1722 թ. Դավիթ Բեկի ապստամբության օրերից, մասնավորապես արեւելահայոց մեջ ձեւավորվեց ռուսական կողմնորոշումը: Յայոց մի զգալի մասն էլ ուներ արեւմտյան (եվրոպական) կողմնորոշում: Երկարատեւ քաղաքական դեգերումներից հետո, վերջապես, 1878-ին կարծես թե «հասանք» մեր ուզածին. մեր դատը հանձնված էր օտար բարձր տայաներին, մտել էր օրակարգ... Շուրջ 40 տարի մեր «հովանավորները» առեւտուր արեցին, եւ բոլորն էլ ինչ-որ մի բան շահեցին՝ բացի մեզանից: Ռուս-թուրքական պատերազմները հայոց հույսը միշտ վառ էին պահում, սակայն դա միայն Ռուսաստանին ձեռնտու հետեւանքներ էր ունենում: Ի վերջո, Յայկական հարցի «մենաշնորհը» Ռուսաստանն իր ձեռքը վերցրեց: Սակայն Ռուսաստանին Յայաստանը պետք էր առանց հայերի: Տնտեսական տեսակետից ձեռնտու էր Յայաստանի բնիկ բնակչության աքսորումը եւ ռուսներով բնակեցումը: Ռուսաստանի քաղաքական շահը պահանջում էր խոչընդոտել Արեւմտյան Յայաստանի ազատագրությանը, որպեսզի վերջնականապես ձուլեր, յուրացներ, սեփականացներ 1828-ից իրեն անցած Արեւելյան Յայաստանը...

Տարիներ հետո «հայր» Ստալինը պիտի ասեր՝ չկա մարդը, չկա պրոբլեմը: Ֆյուրերի Հիտլերը պիտի ավելացներ՝ ո՛վ է այսօր հիշում հայկական կոտորածները: Բայց իրենք՝ թուրքերը, արդյո՞ք բավականաչափ հիմքեր ունեին մտածելու, որ մնալու են անպատիժ: Եվ արդյո՞ք հայերի ցեղասպանության համար ողջ պատասխանատվությունը ընկնում է միայն Թուրքիայի վրա, թե՛ կան նաեւ մեղսակիցներ: Կայգերական Գերմանիա՞ն... Ռուսաստան՞ը... Անգլիա՞ն... Առայժմ մեզ անծանոթ են եվրոպական պետությունների, Ռուսաստանի դիվանագիտական խարդավանքների ու խաղերի բոլոր մանրամասները, որ հիմքեր դառնային ուղղակի մեղադրականի, Յայկական հարցի պատմության՝ 1915-ին նախորդած 37 տարիների ընթացքում: Սակայն տարրական տրամաբանությունը մեզ հուշում է, մանավանդ, երբ համադրում ենք պատմական իրադարձությունները եւ հայտնի բազմաթիվ փաստեր, որ եւ եվրոպական պետությունները, եւ Ռուսաստանը իրենց քաղաքական շրջապտույտներով այնուամենայնիվ նպաստեցին Թուրքիայի ոճրագործ դիրքորոշմանը...

Հիշենք 1914-ին Պետական Դումայում դեպուտատ Մարկովի ելույթը. «Ինչո՞ւ համար, իսկապես, Ռուսաստանը պետք է Կովկասի սահմանազխում ստեղծի Մեծ Յայաստան: Դա ավելի վատ կլինի, քան Մակեդոնիան: Դա կստեղծի երկրորդ Լեհաստան: Հայերը լավ են ապրում, թե վատ, դա նրանց գործն է, իսկ մենք, եթե օժանդակենք ստեղծելու հայկական պետություն, նշանակում է՝ օժանդակենք կորցնել ամբողջ Կովկասը»:

Հիշենք Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, ապա՝ Բեռլինի կոնգրեսը եւ Խրիմյան Յայրիկի «Երկաթե շերտի» պատվիրանը... Հիշենք դրանից առաջ քաջ զեյթունցիների՝ դեռեւս 1862-ին ժայթքած հերոսական ապստամբությունը: Ավաղ, 1915-ին Արեւմտյան Յայաստանի միայն մի քանի գավառներ ու քաղաքներ հետեւեցին քաջ զեյթունցիների օրինակին: Իսկ ընդհանրապես՝ 600 տարի պետականությունը կորցրած հայ ժողովուրդը, այլեւս անվստահ սեփական ուժերի հանդեպ, հույսեր էր փայփայում օտար միջամտու-

19-րդ դարի վերջին, հատկապես՝ 90-ական թվականներից, հայ ազգային-քաղաքական կյանքը զարթոնք էր ապրում: Թվում է՝ ուր որ է պիտի արվեր ազգային-ազատագրական պայքարի մի վերջին հզոր ճիգ, եւ վերականգնվում էր Պատմական Յայրենիքը: Սակայն այդպես էլ չկարողացանք մի բերել մեր ուժերը, ապավինեցինք օտարին ու ոչ միայն չհասանք մեր ազգային բնականոն երազի իրականացմանը, այլեւ եղեռնագարկ եղանք, եւ ոսոխը տիրեց մեր հայրենիքի 9/10-րդ մասին...

տես՝ նաեւ էջ 8-10

### Պատմության դասը

Յայ ժողովուրդն այլեւս երբեք թույլ չի տա իր հետ վարվել այնպես, ինչպես 1915 թվականին ու դրանից առաջ, դրանից հետո... Յայ ժողովուրդն այլեւս երբեք չի խաբվելու, որովհետեւ անվերադարձ թոթափել է մշուշը իր գիտակցության վրայից եւ այսուհետեւ ապավինելու է միայն ու միայն իր սեփական ուժին...

Յայ ժողովուրդն այլեւս երբեք չի պարտվելու, որովհետեւ յուրացրել է արդեն պատմության մեծագույն դասը. *չկան լավ կամ վատ ժողովուրդներ, այլ կան միայն ազգային շահեր*, որոնք կարող են համընկնել կարճատեւ պահերի միայն, իսկ ընդհանրապես՝ զտնվում են հավերժական բախման ու պայքարի մեջ, եւ «հաղթում է ոչ թե արդարը, այլ՝ ուժեղը»:

\* \* \*

Ու որպեսզի աշխարհը թոթափի իր գերանտարբերությունն ու դառնա փոքր-ինչ հայասեր, մենք ստիպված ենք թոթափել մեր գերնարդասիրությունն ու դառնալ փոքր-ինչ եսասեր: Մնացածը՝ մեր պատմական, քաղաքակրթական, բանական ու բարոյական գերներուժով ժամանակի հետ:



## Յայկական հարց՝ համայն հայության եւ յուրաքանչյուր հայի գերագույն խնդիրը մինչեւ ի սպառ լուծում

Հետահայաց

Նահանջ հազար տարով Երկաթ շերտի դասը

Ուզենք, թե չուզենք, լինենք հանրապետություն, թե մի-ապետություն, ժողովրդավարությանն անկեղծորեն փար-վենք, թե խաղանք ժողովրդավարություն, մեր իրական կամ արհեստականորեն մեր կողքին հայտնված հարե-անների հետ լինենք պատերազմի, թե բարիդրացիական հարաբերությունների մեջ, միեւնույնն է, մեր խնդիրը մնում է նույնը արդեն հազար տարի: Իսկ թե որն է մեր ընդ-հանրական խնդիրը, գիտե՞նք անգամ յուրաքանչյուր հայ երեխա. ձեռակերպենք այն գեղարվեստորեն՝ վերադարձ դեպի Արարատ, կուսակցականորեն՝ ազատ, անկախ, միացյալ, պատմագիտորեն՝ Պատմական հայրենիքի վերականգնում... թե մի այլ եզրով՝ էական չէ: Բովանդա-կությունը նույնն է: Ու քանի դեռ խնդիրը լուծված չէ, միշտ մնում է այժմեական:

Մեր (միջին սերնդի) պատմության տարիներին մի-ջազգային դիվանագիտությունն ու նրա պատմությունը մեզ համար հետաքրքրական էին հենց այն մասերով, որ առնչվում էին Հայկական հարցին: Հետագայում այս հասկացության փոխարեն ավելի հաճախ սկսեցին կի-րառվել Հայ դատի խնդիր, պահանջատիրություն եզրե-րը: Վերջին տարիներին առավել գործածականը Հայոց ցեղասպանության ճանաչում հասկացությունն է:

Առաջին հայացքից՝ երեքն էլ նույն իմաստն ունեն կարծես, բայց նրբերանգային մեծ տարբերություն կա դրանց միջև և նույնիսկ՝ ակնհայտ նահանջ: Ստացվում է, որ մեր հազար տարով նահանջը նորից նահանջ է ապ-րում: Այնինչ, Արցախի ազատագրական պայքարը եւ հաղ-թանակը որոշակիորեն կանգնեցրին մեր հազարամյա նա-հանջը. վերականգնված է Հայաստանի Հանրապետու-թյունը՝ իբրեւ անկախ եւ ինքնիշխան պետություն, եւ ազատագրված է Պատմական հայրենիքի արեւելյան կողմի մի հատվածը: Թվում է, թե ժամանակն է պետակա-նորեն անդրադառնալ Սեւրի դաշնագրից բխող մեր իրա-վունքների...

Սակայն քաղաքագետը կամ պետական քաղաքակա-նության մեջ գործող անհատը կարող է մեզ դիվանագի-տական խրատ տալ, թե՛ քաղաքականությունը հնարա-վորի իրագործման արվեստն է, եւ Հայոց ցեղասպանու-թյան ճանաչումով այսօր բավարարվել տրամաբանորեն ճշգրիտ տարբերակ է: Գուցե դա ճիշտ է արտաքին դիվա-նագիտության դաշտում, բայց ոչ երբեք՝ մեր հասարակա-կան գիտակցության մեջ: Նկատի ունենք մեր հազարամյա նահանջի պատմական ցավալի փաստը եւ վերածնված Հայաստանի առաջիկա հաջողությունների հանդեպ մեր մեծ ակնկալիքը: Այն հզոր ներուժը, որ ունի աշխարհասփ-յուռ հայ ժողովուրդը, թերեւս կարոտ է հայության բոլոր հատվածները միմյանց սոսնձելու կարողությամբ օժտ-ված մի գաղափարախոսության, որը չի վախենա ազգայնական հորջորջվելուց եւ միանշանակ կտարփո-ղի ազգային շահը՝ առանց որեւէ այլեւայլության... մին-չեւ որ դա կարողանանք անել նաեւ պետականորեն:

Ամեն մի կառույց, անգամ տիեզերքը Արարչագործու-թյունից առաջ, նախ հանդես է գալիս իբրեւ միտք, գաղա-փար, նախագիծ եւ նոր միայն իրական տեսք է ստանում: Ունենք մեր երազների երկիրը՝ իբրեւ Հոգեւոր Հայաս-տան, Պատմական հայրենիքի տեսիլ, այժմ արդեն պիտի ունենանք՝ իբրեւ գաղափար, նախագիծ ու ծրագիր: Ամեն մի ծրագրի (խնդրի) իրագործման համար անհրաժեշտ են ռեսուրսներ (թող ներքին պաշար բառի փոխարեն օտար բառի գործածումը)՝ հոգեւոր, բարոյական, գաղափարա-կան, տնտեսական, նյութական եւ այլն...

Ուրեմն՝ ունենանք գաղափարը մեր ուղեղներում, հավատը՝ մեր սրտերում, ծրագիրը՝ մեր գործերում ու անդուլ, անդադար կուտակենք անհրաժեշտ պաշարները (ռեսուրսները)՝ առանց երկմտելու, առանց երկնչելու, առանց տարբեր խիտերով միմյանց վարակելու եւ, ամե-նակարեւորը՝ ազատվելով ստրկախտից: Կա քարերը հավաքելու ժամանակը, կա քարերը նետելու ժամանա-կը: Մենք միշտ այդ ժամանակը դիմավորել ենք առանց քարերի, թղթե շերտիով (հիշենք Խրիմյան Հայրիկի խրա-տը), դրա հետեւանքով էլ քարերը հավաքելու եւ քարերը նետելու ժամանակները երկբազայել են միմյանց (արդեն հազար տարի), ու այդպես էլ չի եկել մեր ժամանակը:

Արդ, ժամանակն է նախապատրաստելու մեր ժամա-նակը: Երկար թե կարճ, մեծ թե փոքր, ամեն մի ճանա-պարհ կամ գործ սկսվում է առաջին քայլից:

Սկսենք նաեւ մենք: Թեկուզ մեզ հետ տեղի ունեցածը հստակ պատկերացնելու, մեր պատմությունն ու մեզ ճանաչելու պարզ քայլից:

Վ.Մ. «Կրթություն», թիվ 17-18, 22.04.2009 թ.

Հարգանքի տուրք՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի եւ երկրի բարձրագույն ղեկավարության հետ Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցու-թյամբ այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հար-գանքի տուրք մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Նիկոլ Փաշինյանը ծաղկեպսակ է դրել հուշակոթողին, ծաղիկներ խոնարհել Հայոց ցեղասպանության զոհերի հիշ-ատակը հավերժացնող անմար կրակի մոտ:

Այնուհետեւ վարչապետն այցելել է Հայոց ցեղասպանու-թյան թանգարան-ինստիտուտ՝ ծանոթացել «Հայկական

վարժարանների հետքերով. ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով ցուցադրությանը ներկայացված նյութերին:

Ցուցադրությանը ներկայացվում են Արեւմտյան Հայաս-տանում, Կիլիկիայում եւ Օսմանյան կայսրության հայաբ-նակ վայրերում գործող շուրջ 2000 հայկական կրթօջախի երբեմնի բեղուն գործունեությունը, որն ընդհատվեց Հայոց ցեղասպանության հետեւանքով:

Տասնվեց խորագրային պանելից կազմված երկվեզու (հայերեն եւ անգլերեն) ժամանակավոր ցուցադրության մեջ ներկայացված են շուրջ երեք տասնյակ բնօրինակ ավար-տական վկայականներ, լուսանկարներ, դասագրքեր եւ այլ դպրոցական պարագաներ:



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձը՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 107-րդ տարելիցի կապակցությամբ

Սիրելի՛ հայրենակիցներ, Այսօր հարգանքի տուրք ենք մա-տուցում Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին:

107 տարի առաջ հայ ժողովուրդը բախվեց անմարդկային արհավիրքի՝ ցեղասպանության: Օսմանյան Թուր-քիայի նպատակն էր՝ բնաջնջել մեր նախնիներին: 1.5 միլիոն հայ սպան-վեց, հարյուր հազարավորները գաղ-թեցին աշխարհի տարբեր ծայրեր, ին-չի հետեւանքով այսօր երկրագնդի վրա դժվար կլինի գտնել մի այնպիսի վայր, որտեղ չի լինի ազգությամբ հայ: Անդամալի կորուստներ կրեց հայ ժո-ղովրդի մշակութային, հոգեւոր եւ կրո-նական ժառանգությունը, ոչնչացվե-ցին հազարավոր դպրոցներ, եկեղեցի-ներ եւ վանքեր:

Զնայած անմարդկային դաժանու-թյուններին՝ մեր ժողովուրդը վերջին հարյուրամյակում կարողացավ միաս-նականության, ամենացորդ աշխա-տանքի, հետևողական ջանքերի արդ-յունքում ուղղել մեջքը, պահպանել ինքնությունը, վերականգնել անկախ պետականությունը: Եվ սա մեր ժո-ղովրդի կենսունակության ամենամեծ ապացույցը դարձավ:

Հարգելի՛ հայրենակիցներ, Պատմական փաստերի, ցեղաս-պանությունների եւ ոճրագործություն-ների հերքումը, խեղաթյուրումը, ճշ-մարտությանը չառերեսվելը, միջազ-գային հանրության թողտվությունը ծնում է նոր դաժանություններ եւ հան-ցագործություններ:

Քաղաքակիրթ աշխարհը, միջազ-գային հանրությունն այս ուղղությամբ ունի բազմաթիվ անելիքներ՝ անկախ քաղաքական շահերից թույլ չտալու այլեւս նման ոճրագործություններ, առաջին հերթին արժեւորելով մարդ-կային կյանքը՝ անկախ ազգային պատկանելությունից: Ցեղասպանու-թյան ճանաչումն ու դատապարտումն է, որ պետք է կանգնեցնի նոր ոճրա-գործությունները: Ցանկանում են ընդգծել, որ Հայաս-



տանը շարունակելու է ակտիվորեն նպաստել ցեղասպանությունների, մարդկության դեմ հանցագործություն-ների կանխարգելմանն ուղղված մի-ջազգային հանրության ջանքերին, էթ-նիկ, կրոնական եւ ռասայական հողի վրա խտրականության եւ անհանդուր-ժողականության դրսևորումների դեմ պայքարին:

Հայոց ցեղասպանության միջազ-գային ճանաչման օրակարգը պիտի ծառայի Հայաստանի անվտանգու-թյան երաշխիքների համակարգի ամ-րապնդմանը: Այս օրակարգը կառավա-րությունը ծառայեցնելու է ոչ թե տա-րածաշրջանային լարվածության աճին, այլ ընդհակառակը՝ տարածաշր-ջանի լիցքաթափման նպատակին:

Սիրելի՛ հայրենակիցներ, Մեծ Եղեռնը հայ ժողովրդի պատ-մության ամենաողբերգական էջն է: Եվ այն մեզ համար ոչ միայն մեր ամենը նահատակների հիշատակը խնկարկե-լու, նրանց առաջ գլուխ խոնարհելու, այլև մեր պատմության անցյալի, ներ-կայի եւ ապագայի մասին մտածելու առիթ է: Այն մեզ համար առիթ է՝ արձա-նագրելու, որ հայ ժողովուրդը սեփա-կան ճակատագրի տնօրինման ավելի ու ավելի մեծ հնարավորություններ ու լծակներ պիտի ունենա, պիտի կարո-ղանա սեփական ճակատագիրն ու-րիշների որոշումների տիրույթից սե-

փական որոշումների տիրույթ տեղա-փոխել:

Նման իրավիճակի ամենագործուն արտահայտումը անկախ պետակա-նությունն է, իր բոլոր իմաստիտուտների առավելագույն կայացվածությամբ, որոշումների կայացման ընդունակու-թյուններով ու մեխանիզմներով: Այս գիտակցումն է մեզ հանգեցրել մեր ժո-ղովրդի ու տարածաշրջանի համար խաղաղ զարգացման դարաշրջան բա-ցելու օրակարգին, որովհետեւ սեփա-կան անվտանգության ապահովման ամենաարդյունավետ գործիքը կայա-ցած պետականությունն է եւ խաղա-ղությունը: Ու մենք պիտի գնանք այս ճանապարհով:

Նաեւ այս է պատճառը, որ Հայաս-տանի եւ Թուրքիայի միջև հարաբե-րությունների կարգավորմանը միտ-ված բանակցություններ ենք վարում: Հույս ունենք թուրքական կողմի ձգ-տումներն անկեղծ են, եւ մենք կկարո-ղանանք այս ուղղությամբ շարժվել առաջ:

Միաժամանակ, այսօրվա մեր խն-դիրն է՝ համայն հայության ներուժի իրացմամբ կառուցել արժանապատիվ եւ կայացած ժողովրդավարական պե-տություն:

Համահայկական ներուժի, կարո-ղությունների համախմբումը պետք է հետևողականորեն ուղղենք հենց այս նպատակին: Հայոց պետականությու-նը Մեծ Եղեռնի զոհերի, մեր բոլոր նա-հատակների հիշատակը հարգելու ամենատպալուրիչ միջոցն է եւ պիտի դառնա հայ ժողովրդի ապրելու ան-կոտրում կամքի խորհրդանիշ եւ երաշ-խավոր: Հենց մեր այս կամքն է խորհր-դանշում ապրիլքսանչորսյան ժողովր-դական երթը դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որը Ազատ, Հզոր, Եր-ջանիկ Հայաստանի խոստումն է մեր նախնիներին եւ մեր սերունդներին: Այդ խոստումը պիտի կատարվի, այդ ուխտը պիտի ի կատար ածվի: Սրա-նում է Ապրիլի 24-ի ամենամեծ խոր-հուրդը:

# Հայոց Ցեղասպանության Սուրբ Լահատակների բարեխոսական կարգ

Ապրիլի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ոգեկոչելու Հայոց Ցեղասպանության սուրբ Լահատակների հիշատակը:

Ծաղկեպսակի գետեղումից հետո հուշահամալիրում անմար կրակի առջեւ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայոց Ցեղասպանության սուրբ Լահատակների բարեխոսական կարգ:

Օրվա առիթով Ծիծեռնակաբերդի հուշահամալիր էր բերվել նաեւ Հայոց Ցեղասպանության սրբոց նահատակաց մատուցարանը:



## Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Հայոց ցեղասպանության Սուրբ Լահատակների հիշատակի օրվա առիթով

Սիրելի՛ ժողովուրդ հայոց ի հայրենիս եւ ի սփյուռս,

Այսօր, համախմբվելով մեր սրբազան տաճարներում, մեր քայլերն ուղեկոչելով դեպի Ծիծեռնակաբերդի բարձունք, դեպի աշխարհասփյուռ համայնքներում կանգնեցված խաչքարեր ու հուշակոթողներ, մեր խոնարհումն ենք բերում Հայոց ցեղասպանության սուրբ Լահատակներին: Նրանք զոհ գնացին օսմանյան իշխանությունների ցեղասպան ծրագրին իրենց հայրենի բնակավայրերում եւ գաղթի ճանապարհներին մարտիրոսությամբ վկայելով հավատարմությունը նախնյաց հավատին, դավանած արժեքներին եւ ազատ ու անկախ կյանքի տեսլիքին:

Եղեռնահար ու հայրենագրված մեր ժողովուրդը, առ Աստված ապավինությամբ, կամք եւ ուժ գտավ՝ վերընծալու իր անկախ պետականությունը պատմական հայրենիքի արեւելյան փոքր հատվածում եւ շեն ու բարօր կյանք կերտելու իր զավակներին ապաստան տված աշխարհի տարբեր երկրներում:

Ցեղասպանությունից մեկ դար անց՝ արցախյան 44-օրյա պատերազմից հետո, մեր երկրի առջեւ ծառայած մարտահրավերները, հայրենիքի շուրջ ծա-

վավոր աշխարհաքաղաքական գործընթացները, Ադրբեջանի ագրեսիվ ու հայատյաց քաղաքականությունը փաստում են, որ վերացված չեն հայրենաբնակ մեր ժողովրդի, ի մասնավոր՝ Արցախի հայորդիների ապահով ու անվտանգ կյանքի սպառնալիքները: Մեր սուրբ Լահատակների հիշատակի առջեւ նվիրական մեր պարտքն է համախմբվել եւ պաշտպանել արցախահայ մեր ժողովրդի ազատ ու անկախ ապրելու իրավունքը, Հայաստան ու Արցախ մեր աշխարհի անվտանգությունը, կանխել Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության բարբարոսաբար ոչնչացումը, որ չլրկնվի Նախիջեւանում իրագործված մշակութային եղեռնը: Այլեւ նվիրական մեր պարտքն է հետամուտ լինել Հայոց ցեղասպանության հանընդհանուր ճանաչմանն ու դատապարտմանը, որ երբեք նման ոճրագործություն տեղ չգտնի մարդկության կյանքում, եւ արդարություն իրականացվի ցեղասպանության զոհերի եւ ցեղասպանություն վերապրած բոլոր ժողովուրդների նկատմամբ: Պետական եւ ազգային-եկեղեցական կառույցների, ամենքիս հանձնառությունը



պիտի շարունակի մնալ միջազգային հարթակներում բարձրաձայնումը Արցախի մեր ժողովրդի ուսմահարվող իրավունքների եւ հայոց արդար դատի՝ ի խնդիր ազգիս արժանապատիվ եւ լուսավոր կյանքի ու զալիքի:

Մեր աղոթքն է, որ հարուցյալ Տերը, մեր սուրբ Լահատակների բարեխոսությամբ, խաղաղություն պարզեւի ողջ աշխարհին, ապահովություն ու բարօրություն Հայաստան եւ Արցախ մեր երկրին եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին: Թող Բարձրալի ողորմությունը, օրհնությունն ու խնամքը հովանի լինեն ամենքիս, այսօր եւ միշտ. ամեն:

## ՀՀ նախագահ Վահագն Խաչատրյանի ուղերձը՝ Հայոց ցեղասպանության տարելիցի կապակցությամբ

Այսօր հայ ժողովուրդն ու նրա բարեկամները, ողջ առաջադեմ մարդկությունը ոգեկոչում են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:

Անցյալ դարասկզբին, օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի խառնաշփոթից եւ մեծ տերությունների թողությունից, Օսմանյան կայսրության երիտթուրք պարագլուխները ծրագրավորեցին եւ իրականացրեցին հայ բնակչության դաժանագույն ջարդերն ու կոտորածը: Այդ ողբերգությանը զոհ դարձավ ավելի քան 1,5 միլիոն հայ, հարյուր հազարավոր հայեր ստիպված լքեցին իրենց բնօրրանը, տարհանվեցին, զրկվեցին հայրենիքից ու գույքից բռնելով գաղթի ճամփան: Փրկվելով մահից, կորցնելով հարազատներին մեր հայրենակիցները սփռվեցին աշխարհով մեկ, գտան իրենց նոր հանգրվանն օտար ափերում, տարբեր հյուրընկալ երկրներում: Դրսեւորելով ապրելու եւ արարելու անկոտորում կամք՝ նրանք կազմեցին ընտանիք, կառուցեցին դպրոցներ ու եկեղեցիներ, հիմնեցին գաղթօջախներ, հայրենակցական միություններ ու տարաբնույթ կազմակերպություններ: Սփյուռքահա-



յությունը հարստացրեց իր ապրած երկրների հասարակական, գործարար ու մշակութային ներկայակնը՝ ի ցույց դնելով հայի տաղանդն ու բացառիկ ընդունակությունները, փառք ու պատիվ բերելով մեր ժողովրդին:

Այսօր Հայոց ցեղասպանությունը ճանաչել է դատապարտել եւ մի քանի տասնյակ պետություններ եւ հեղինակավոր միջազգային կազմակերպություններ: Համոզված ենք, եթե Հայոց ցեղասպանությունը ժամանակին դատապարտվեր, ապա կկանխարգել-

վեին հետագա ցեղասպանությունները: Հենց այդ պատճառով է Հայաստանի Հանրապետությունը միջազգային ասպարեզում հետեւողական պայքար մղում ցեղասպանության հանցագործության դատապարտման եւ կանխարգելման ուղղությամբ: Հայաստանի ջանքերով դեկտեմբերի 9-ը ամրագրվել է որպես Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի ու արժանապատվության եւ այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր: Ցեղասպանությունների կրկնությունը բացառելու նպատակով կարելու է պատմական հիշողությունը, շարունակական կրթությունը ու կատարվածի մասին ճշգրիտ տեղեկատվության տարածումը:

Մենք գիտակցում ենք, որ մեր նահատակված հայրենակիցների հիշատակին հարգանքի տուրք մատուցելու լավագույն ձևը՝ հզոր եւ ժողովրդավար Հայաստանի կայացումն է, մեր ժողովրդի բարօր կյանքի, մեր երկրի սահմանների ամրության ու անվտանգության ապահովումն է, Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդումն է:

## Կգա օրը, եւ մենք կվերադառնանք Հայրենիք

Ուզենք, թե չուզենք, համարենք պարտություն, թե պատմական անարդարություն, Հայոց ցեղասպանությունը իրողություն է: Ոչ թե սոսկ պատմական մի փաստ, որ եղել է անցյալում, այլ՝ իրողություն, որի ոչ թե հետեւանքները, այլ ինքն իր ողջ բովանդակությամբ շարունակվում է ահա արդեն 92 տարի, իսկ սկսվել է դրանից էլ շատ առաջ:

Ճանաչենք, թե չճանաչենք, անվանեն *ողբերգություն*, թե *զեմոցիոն*, միեւնույնն է, այդ իրողությունն ունի մի պարզ ձեւակերպում. **մեզանից գողացել են մեր Հայրենիքը:**

Այսօր մենք ստիպված ենք պայքարել 1915-23 թվականներին տեղի ունեցած Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար... Միջազգայնորեն **ցեղասպանություն** է դիտվում անգամ մեկ մարդու սպանությունը՝ իր ազգային պատկանելության պատճառով... Մեզ հետ տեղի ունեցածը լույս ցեղասպանությունն է: **Էթնոցիդ** էր... Մի ողջ ժողովրդի՝ էթնոսի ոչնչացմանը նպատակաուղղված կազմակերպված ծրագրի իրագործում... Եւ ոչ միայն: Մեզ հետ տեղի ունեցածը **հայրենասպանություն** էր... Եվ ուզենք, թե չուզենք (հպարտանալու բան չէ), անօրինակ մի բան, որի հետ չեն կարող համեմատվել ոչ հրեաների Ղուրթուստը, ոչ էլ մի այլ ժողովրդի դեմ գործված որեւէ ոճիր: Հրեաներին ոչնչացնում էին **ոչ իրենց հայրենիքում**: Եվ այսօր, երբ նույն հրեաները հաճախ դժկամությամբ են համեմատում կամ անհամեմատելի են համարում իրենց հետ տեղի ունեցածը մեզ հետ տեղի ունեցածի հետ, իրավացի են: Մեզ հետ տեղի ունեցածը, այդ, **ցեղասպանություն** էր, բայց՝ ոչ միայն: Մեզ հետ տեղի ունեցածը **էթնոցիդ** էր՝ ժողովրդասպանություն, եւ ոչ միայն: Մեզ հետ տեղի ունեցածը **հայրենասպանություն** էր... Եւ դարձյալ՝ ոչ միայն: Որովհետեւ մեր **Հայրենիքը** միայն հայրենիք չէ, լույս մեզ համար մի անգին պարզեւ, որի կորուստը չի կարող ենթադրել որեւէ այլ փոխհատուցում, բացի միայն նրա **վերադարձից** կամ մեր վերադարձից դեպի մեր Հայրենիքը: Մեր Հայրենիքը **Ավետյաց** երկիրն է, Մարդկության **բնօրրանը**, Երկրագնդի երկիր **դրախտավայրը**, որ **Աստծո** կամքով տեղադրված է **Հայկական լեռնաշխարհում, որտեղ կիզակերպվում են տիեզերական բանականության բոլոր շնորհները** եւ ապա նոր տարածվում ամբողջ աշխարհի վրա: Ուրեմն՝ մեզ հետ տեղի ունեցածը, միջազգային սահմանումով, թե առանց դրա, անմախաղեպ, անօրինակ, որեւէ բնութագրականի մեջ չտեղավորվող ոճիր էր **Մարդկության** դեմ, **Տիեզերքի** դեմ, **Աստծո** դեմ... Ու **Նախաստեղծ, Աստվածաբայալ** մեր տեսակին էր վիճակված անցնել այդ **Գողգոթան**, ինչպես **Աստվածորդին** խաչի վրա, ու մեր տեսակին էլ վերապահված է նաեւ **Հարության Արշալույսը**:

Եւ դարձյալ՝ ուզենք, թե չուզենք, աշխարհը չէ, **մենք**, միայն մենք պիտի նախ ճանաչենք, հասկանանք, թե ինչ է տեղի ունեցել մեզ հետ, ապա ըմբռնենք, գիտակցենք, հավատանք ու ավելի կազմակերպված, քան մեզ հետ տեղի ունեցածը կազմակերպողները (ոչ միայն իրագործողները), վերցնենք այն, ինչ մերն է **Աստծո կամքով**, վերադառնանք դեպի **Արարատ**, դեպի մեր **Պատմական Հայրենիքը**, որպեսզի շարունակվի՝ մեր բնականոն **Առաքելությունը** երկրի վրա, որ մեկնարկել է **Աստված՝ Արարչագործությամբ...** էլ ունի՞ց ենք վախենում...

**Աստծունը՝ Աստծուն, հայերինը՝ հայերին:**  
Եղիցի:

Գ.Մ.

«Կրթություն», թիվ 18-20, 25.04.2007 թ.



Հետահայաց

Համընդհանուր խռովքի թելադրանքով Կամ՝ մի քիչ թվաբանություն

Այդ ե՞րբ եղավ... Ինչպե՞ս եղավ... Ինչո՞ւ եղավ... Ո՞րն էր այն առաջին ճակատագրական զիջումը, նահանջը, որ շարունակվեց 10 տարի, 100 տարի, 5 դար, հազարամյակ... Դարձավ 1045-ի Անիի կործանումից, Գագիկ Երկրորդ վերջին Բագրատունի արքայի եղերական վախճանից մինչև 1915-ի ցեղասպանությունը ձգվող մի չարչարանաց հավերժություն... Այդքան երկար մի հոգեվա՞րք... Այդքան հզոր, ամեն բանով հզոր, մարդկային պատմության ամեն նոր հանգրվանի առաջամարտիկ, Զրիստոնեությունն առաջինը պետականորեն ընդունած, աշխարհին ամենից ինքնատիպ ու փառահեղ քաղաքակրթություններից մեկը պարզեցած, այդքան կարող ու այդքան անքնն ու ամենասե՛ր, այդքան ամենքին նման ու ամենքին հարմարվող, ամենքին տեր ու ամենքին ծառայող, բայց այդքան ինքնասպան...

Ո՞վ էր, ի՞նչն էր ստիպում Պատմահորը գրել «Թեպետ եւ ենք ածու փոքր...»... Ախր, այդ ունի՞ց էիր փոքր, Քերթողահայր, այդ քանի՞ ազգ ու ազգություն կար աշխարհում, եւ դրանց ո՞ր մասն էր քեզանից մեծաքանակ կամ քեզանից առաջավոր ու հզոր... Այդ «փոքր» բառը մնաց ոչ միայն քո «Հայոց պատմության» կամ մեր պատմագիտության մեջ իբրեւ դառնացած մի պահի ասված խոսք, այլեւ դարձավ հոգեբանություն, անհաղթահարելի՞ մի հիվանդություն, որ ժամանակների մեջ ոչ միայն չբուժվեց, այլեւ վերածվեց «ստրկախտի» ընդհուպ մինչև 20-րդ դարավերջ...

Ո՞վ, ի՞նչը ստիպեց քեզ, Փո՛քր Սիեթ, որ անհա՛ղթ էիր, անպարտելի՞ ու անմահ, հեռանա՛լ աշխարհից, ինքնական գնալ ու փակվել Ազոփալքարում...

Սասունցի՛ Դավիթ, որքան ուժեղ, այնքան միամիտ Դավիթ, մինչև Ձենով Օհանը չկանչեց, չէլար հորից... Ի՞նչ է, չէի՞ր հավատում, որ հենց քեզ թափ տաս, ելնելու ես հորից, ինքնուրույն, եւ քո՛ ուժով, որքան էլ որ հորը խորը լինի կամ հսկա քարերով փակված...

Անպարտելի՞, անասելի՞ հզոր ու այդքան անվստահ... Եղե՛լ է գեթ մի դեպք, որ օտարից հոգնած՝ ապավինես միայն Քո՛ ուժին, ու սխալված ու պարտված լինես: Երբեք: Միշտ սխալվել ու պարտվել ես, երբ հույսդ դրել ես ուրիշի օգնության վրա:

Քո աստեղային ժամերին, երբ սթափվել ես մի պահ ու թափ ես տվել Քեզ Քո էպոսի հերոսի նման, մի՛շտ հաղթել ես, ու չկա՛ մի ուժ այս արեւի ներքո, որ կասեցնի Քո հաղթական ելքը ամենաանելանելի վիճակից անգամ... Եթե միայն Ինքդ, Ի՛նքդ կամենաս ու քայլդ անես միայնակ, մեն-մենակ, ինքնուրույն, Քո՛ սեփական բազկի ու մտքի ուժին ապավինած... Ինչպես Սարդարապատում, ինչպես Արցախում...

Այդ ունի՞ց ես փոքր կամ փոքրաթիվ... Աշխարհում շուրջ 5000 ազգ ու ազգություն կա: Դրանցից միայն մոտ 200-ը ունեն պետություն, որոնց աշխարհը ճանաչել ու հաշվի է առնում որպես այդպիսին: Դրանց շարքում Դու Քո բնակչության թվով առաջին հարյուրյակի մեջ ես, տվյալ լեզվով խոսողների թվով 75-րդն ես, իսկ աշխարհում տարածվածության հաշվարկով հայերենը գտնվում է աշխարհի ամենատարածված լեզուների առաջին տասնյակում... Դե, ասա՛, այդ ի՞նչ հաշվարկով ես Դու փոքր... Ու ասա՛ նաեւ՝ ունի՞ց ես պակաս եւ ինչո՞վ... Խելքո՞վ: Քաջությամբ: Ծագումո՞վ: Լեզվո՞վ: Մշակույթո՞վ... Գուցե ռազմական տաղանդո՞վ... Վիրավորվեցի՞ր... Անդրանիկն աշխարհի միակ գորավարն է, որ որեւէ ճակատամարտ երբեւէ տանուլ չի տվել... Հասա այդ ինչպե՞ս եղավ, ինչո՞ւ եղավ...

շարունակությունը՝ էջ 11



ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ուղերձը՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ

Սիրելի՛ հայրենակիցներ, Ապրիլի 24-ը հայ ժողովրդի բնաջնջման ծրագիր էր, որը զլխատեց մեր ժողովրդին, փրկվածներին սփռեց աշխարհով մեկ առանց վաղվա տեսլակացի:

Ամեն տարի մենք ոգեկոչում ենք մեր սրբադասված 1.5 միլիոն զոհերի հիշատակը՝ խնկարկունով եւ աղոթքներով:

Ցավոք, ցեղասպանության ճանաչումն ու սեփական պատմության ամոթալի էջերի տարատեսակ խմբագրումները շարունակում են մնալ ժամանակակից Թուրքիայի ժխտողական քաղաքականության հիմքում: Մեկ անգամ չէ, որ համոզվել ենք՝ հանցագործության ժխտումը նոր հանցագործության երաշխիքն է:

Հրաշքով փրկվածների չընկրկող կամքի, հայրենասիրության, համառության շնորհիվ Օսմանյան կայսրության՝ հայերի բնաջնջման ծրագիրը տապալված է:

Մենք շնորհակալ ենք մարդկության առաջադեմ հատվածին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու ցեղասպանության ժխտումը քրեականացնելու համար:

Ժամանակը դեր չունի պատմական արդարության վերականգնման գործում, մենք շարունակելու ենք հիշել ու հիշեցնել մեր դեմ գործած ոճիրը:

Լույս եւ խաղաղություն մեր մահատակների հոգիներին:



Հայոց ցեղասպանության դասավանդման մարտահրավերները 21-րդ դարում

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում ամփոփվել է ՀՅԹԻ հիմնադրամի «Հայոց ցեղասպանության դասավանդման մարտահրավերները 21-րդ դարում» խորագիրը կրող եռօրյա գիտաժողովը, որին մասնակցել են ցեղասպանագիտության եւ հարակից ոլորտների շուրջ 20 մասնագետներ Հայաստանից, ԱՄՆ-ից, Ռուսաստանի Դաշնությունից, Լիբանանից, Իսրայելից, Ռուսնդայից, Իսպանիայից եւ Հարավաֆրիկյան Հանրապետությունից:

Եռօրյա գիտաժողովն ունեցել է 6 մտաշրջան, որոնց ընթացքում քննարկվել են միջնակարգ եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում ցեղասպանության դասավանդմանը, դրա արժեքային եւ էթիկական խնդիրներին վերաբերող հարցեր եւ ոչ միայն: Ներկայացվել է 29 գիտական զեկույց:

«Հայոց ցեղասպանության դասավանդման մարտահրավերները 21-րդ դարում» խորագիրը կրող եռօրյա գիտաժողովի բացմանը մասնակցել էր նաեւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը:

«Նմանօրինակ գիտաժողովն այսօր առավել քան արդիական է: Հունամբ, որ այս քննարկումը ուշացած չի լինելու, ավելին՝ լինելու է մի քննարկում, որը թույլ կտա մեզ ավելի պարզ պատկերացնել առարկայի դասավանդման լավագույն ռազմավարությունները մեր առջեւ այսօր կանգնած մարտահրավերի պայմաններում», - նշել էր ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Գիտաժողովի մասնակիցները նաեւ այցելել են Հայոց ցեղասպանության հուշահամալիր, ծաղիկներ խոնարհել ամմար կրակի մոտ եւ մեկ րոպե լռությամբ հարգել անմեղ զոհերի հիշատակը: Երկրորդ օրը մասնակիցներն այցելել են Էջմիածնի Մայր տաճարի թանգարան:

Գիտաժողովի շրջանակում տեղի է ունեցել նաեւ աշխատաժողով, որին մասնակցել են 2019, 2020, 2021 թթ. ՀՅԹԻ կազմակերպած կրթական ծրագրերի հայոց պատմության ուսուցիչները: Նրանք ընդգծել են նմանօրինակ հանդիպումների անցկացման կարևորությունը եւ



հույս հայտնել, որ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը հետամուտ կլինի եւ կօժանդակի իրենց բարձրածայնած հարցերի լուծմանը:

Հարցուպատասխանի եւ քննարկումների ավարտից հետո տեղի է ունեցել գիտաժողովի փակման արարողությունը:

ՀՅԹԻ տնօրեն Հարություն Մարությանն իր երախտագիտությունն է հայտնել նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել գիտաժողովի կազմակերպման եւ անցկացման կարեւոր գործում: Ամփոփելով գիտաժողովի արդյունքները՝ բանախոսները շեշտել են ներկայացված թեմաների արդիականությունը եւ հույս հայտնել, որ առանձին ժողովածուի տեսքով լույս կտեսնեն ներկայացված զեկույցումները:

Եռօրյա գիտաժողովի շրջանակում ավելի վաղ կայացել էր նաեւ «Հայկական վարժարանների հետքերով. ուսյալ ազգի վկայագրերը» խորագիրը կրող ժամանակավոր ցուցադրության բացումը, որի նպատակն է ավելի քան մեկդարյա հեռավորությունից վեր հանել ու ներկայացնել Արեւմտյան Հայաստանում, Կիլիկիայում եւ Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում գործող

շուրջ 2000 հայկական կրթօջախների երբեմնի բեղուն գործունեությունը, որն ընդհատվել է Հայոց ցեղասպանության հետեւանքով:

16 խորագրային պանելից կազմված երկլեզու (հայերեն եւ անգլերեն) ժամանակավոր ցուցադրության մեջ ներկայացված են շուրջ երեք տասնյակ բնօրինակ ավարտական վկայականներ, լուսանկարներ, դասագրքեր, դպրոցական պարագաներ, որոնք ձեռք են բերվել ինչպես հայաստանյան, այնպես էլ սփյուռքում գործող տարատեսակ հաստատությունների արխիվներից, թանգարաններից, գրադարաններից, ինչպես նաեւ մասնավոր հավաքածուներից: Ներկայացված բնօրինակ վկայականներում կարելու տեղ են զբաղեցնում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդերում պահվող մեկ տասնյակից ավելի վկայագրերը, ինչպես նաեւ ուղեկցող փաստագրական հարուստ նյութը, որոնք փաստացի վկայություններն են Օսմանյան կայսրության հայկական վարժարանների երբեմնի գոյության:

Ժամանակավոր ցուցադրությունը եւ գիտաժողովը ֆինանսավորվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ Գիտության կոմիտեի կողմից:



Մեծանուն հայեր

Հետահայաց

Նամականիշ՝ նվիրված ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի ծննդյան 100-ամյակին

Հայ-ռուսական համալսարանում տեղի է ունեցել «Մեծանուն հայեր. ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի ծննդյան 100-ամյակ» թեմային նվիրված մեկ նոր նամականիշի մարման արարողությունը:

Նամականիշի մարումն իրականացրել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ռոբերտ Խաչատրյանը, «ՀայՓոստ» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանը, Հայ-ռուսական համալսարանի ղեկավար Արմեն Դարբինյանը եւ Ֆիլատելիստների հայկական ասոցիացիայի նախագահ Հովիկ Մուսայելյանը:

Ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը նշել է, որ Սերգեյ Համբարձումյանի ծննդյան 100-ամյակին նվիրված նամականիշի մարումն իրավամբ խորհրդանշական է, որով աշխարհին ի ցույց է դրվում հայ գիտական մտքի թռիչքը: «Հայտնի ակադեմիկոս, ԵՊՀ ղեկավար եւ բազմաթիվ այլ դասիստների արժանացած Սերգեյ Համբարձումյանին սրանով դարձնում ենք մեր ամենակարեւոր խորհրդանշաններից մեկը, որովհետեւ այսօր մենք ունենք գիտնականի գրավչության բարձրացման եւ հանրահռչակման խնդիր: Մեր երիտասարդները պետք է ակնառես լինեն, թե ինչպես են մեծարվում հայ գիտնականները»,- շեշտել է փոխնախարարը՝ շնորհակալություն հայտնելով միջոցառման կազմակերպիչներին:

ԲՏԱ նախարարի տեղակալ Ռոբերտ Խաչատրյանի խոսքով՝ այս միջոցառումը Սերգեյ Համբարձումյանի ծննդյան 100-ամյակի միջոցառումների շարքի ընդամենը մի մասնիկն է: «Յուրօրինակ այս նամականիշը, աշխարհահռչակ հայ գիտնականին մեր երախտիքն արտահայտելուց զատ, եւս մեկ հնարավորություն է Հայաստանը որպես տեխնոլոգիական զարգացման ուղի նախանշած երկիր աշխարհին ներկայացնելու հա-

մար»,- ասել է Ռոբերտ Խաչատրյանը՝ վստահություն հայտնելով, որ այն հիմք կհանդիսանա, որպեսզի Սերգեյ Համբարձումյանի անունը եւ ժառանգությունը եւս մեկ անգամ հանրահռչակվեն՝ նպաստելով հայ գիտական մտքի ճանաչելիության բարձրացմանը:

«ՀայՓոստ» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանը խորհրդանշական է համարել, որ միջոցառումը կայանում է Սերգեյ Համբարձումյանի անունը կրող գրադարանում: Նա փաստել է, որ «ՀայՓոստ» ընկերությունը մշտապես աջակցում է նման նախաձեռնություններին՝ հույս հայտնելով, որ նամականիշի մարումը էլ ավելի վառ կպահի հայ անվանի ակադեմիկոսի անունը:

Հայ-ռուսական համալսարանի ղեկավար Արմեն Դարբինյանի խոսքով՝ այսօր բացվում է նոր դարաշրջան՝ Սերգեյ Համբարձումյանի ծննդյան 100-ամյակը: «Այսօր մեզ համար խորհրդանշական իրադարձություն է՝ մեր երկրի ու պետության չափանիշներով, որովհետեւ կատարում ենք մեր բաղաբացիական պարտքը: Սա բոլորիս պատիվ է բերում եւ մեկ անգամ եւս սահմանում մի նոր՝ ազգային, պետական եւ գիտական գործիչ Սերգեյ Համբարձումյանի նշանը, որին բոլորս պետք է համա-

պատասխանենք»,- ընդգծել է նա:

Ֆիլատելիստների հայկական ասոցիացիայի նախագահ Հովիկ Մուսայելյանը ուրախությամբ փաստել է, որ Սերգեյ Համբարձումյանի անունը եւս մեկ անգամ հանրահռչակվում է նաեւ նամականիշի միջոցով, որը երկրի խորհրդանիշներից մեկն է: «Օտարագրիները նաեւ նամականիշների միջոցով են պատկերացում կազմում այդ երկրի, նրա պատմության, մշակույթի եւ ակադեմիկոս գործիչների մասին: Հուսով եմ՝ այն հիմք կհանդիսանա, որպեսզի շատերն ուսումնասիրեն մեր մեծանուն հայի կենսագրությունը»:

Նշենք, որ 220 ՀՀ դրամ անվանական արժեքով նամականիշի վրա պատկերված է հայկական մեխանիկայի դպրոցի հիմնադիրներից մեկը՝ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը (1922-2018 թթ.): Նամականիշի խորհրդանշանները ներկայացված է երեւանի պետական համալսարանը, որտեղ Սերգեյ Համբարձումյանը 1977-1991 թթ. եղել է ղեկավար:

**Թողարկման օրը՝ 22 ապրիլի 2022 թ.: Դիզայնը՝ Դավիթ Դովլաթյանի: Տպարանը՝ Cartor, Ֆրանսիա: Չափսերը՝ 40,0 x 30,0 մմ: Տպաքանակը՝ 30 000:**

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Նախագիծ

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կասեմանկի կրթական 5 մրցանակ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում կրթական մրցանակները, դրանց շնորհման եւ հանձնման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը:

Համաձայն նախագծի՝ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառը զարգացնելու, կատարելագործելու եւ խրախուսելու նպատակով սահմանվում է կրթական հինգ մրցանակ.

- լավագույն ուսանողների համար՝ «Գլխավոր մրցանակ», «Լավագույն ասպիրանտ» (1-ին եւ 2-րդ կարգ), «Լավագույն մագիստրանտ» (1-ին եւ 2-րդ կարգ), «Լավագույն բակալավր» (1-ին եւ 2-րդ կարգ),
- լավագույն աշակերտների համար՝ «Լավագույն աշակերտ»՝ 2023 թվականից:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում կրթական մրցանակների մրցանակաբաշխության ֆինանսավորումն իրականացնում է «Սինոկսիս Արմենիա» ընկերությունը՝ համաձայն ընկերության եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոց կնքված համաձայնագրի:

ԿԳՄՍ նախարարին հանձնարարվում է որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատել ՏՏ բնագավառում կրթական մրցանակի մրցանակակրի ընտրություն կատարող հանձնաժողովի անհատական կազմը եւ աշխատակարգը, լավագույն ուսանողների կրթական մրցանակների մրցանակաբաշխության մասնակից համալսարանների ցանկը, իսկ մինչեւ 2022 թվականի սեպտեմբերի 15-ը՝ «Լավագույն աշակերտ» մրցանակաբաշխության պայմանները:

Նշենք, որ ներկայում տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում կրթական մրցանակներ սահմանված չեն, եւ մրցանակների շնորհման եւ հանձնման որեւէ համակարգ չի գործում:

Հետեւաբար, ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմանը հնարավոր կդառնա բարձր առաջադիմություն ունեցող եւ ՏՏ ոլորտի տարբեր նորարարական աշխատանքներին (մրցույթներ, տպագրված հոդվածներ) մասնակցություն ունեցած ուսանողներին, ինչպես նաեւ աշակերտներին տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ամենամյա կրթական մրցանակների շնորհման նոր եւ արդյունավետ համակարգ ներդնել: «Լավագույն աշակերտ» անվանակարգի պարգևատրման չափն ու մրցանակների քանակը կնախատեսվեն մրցանակաբաշխության պայմանների սահմանումից հետո:

Հավելենք, որ քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ մայիսի 5-ը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

Ներգաղթ



2015 թվականին Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված անախատեպ ընդգրկումով միջոցառումներն ամբողջ աշխարհում մեր հարության, մեր Մեծ Վերածննդի գործընթացի մեկնարկը վկայեցին...

100 եւ սիւս եւս մեկ երկար եւ ձիգ տարիներ համբերել ենք՝ սպասել ճանաչման, դատապարտման, հատուցման... Բայց արդեն, կարծես թե, դասեր ենք քաղել պատմությունից, վերջապես համոզվել, որ մեր խնդիրը մեզ պիտի լուծենք՝ մեր մտքի ու բազկի ուժով... Ամենից երկար ու դժվար ճանապարհն անգամ սկսվում է առաջին քայլից: Բայց ճիշտ քայլից: Ուղի՝ նշող քայլից: Վաղ թե ուշ, մեր Հարցը լուծվելու է: Լուծելու ենք: Բայց երբ էլ եւ ինչպես էլ լուծենք, դրանից առաջ ու դրանից հետո մենք մեր կարիքն ենք զգալու, մեր որակի հետ մեր քանակի՝ կարիքը, մեր հայրենիքում մեր գոյությունը հավաստող, մեր գոյությունը ապահովող մեր ներկայության կարիքը...

Աստված մեզ հրաշալի երկիր է պարգևել՝ մարդու կենսագործունեության համար լավագույն վայրը երկիր մոլորակի վրա: Արեւային օրերի ամենից մեծ քանակ, լեռնային մաքուր օդ, խմելու ջրի գրեթե անհատուն պաշար, հարուստ ընդերք, բարեխառն կլիմա, բուսական եւ կենդանական օգտակար բազմազանություն... Իր ներկայիս տարածքների մեջ Հայաստանի Հանրապետությունը, համապատասխան կացութային կազմակերպման դեպքում, կարող է լավագույն կենսամակարդակ ապահովել շուրջ 5 միլիոն բնակչության համար: Արցախի Հանրապետությունը դա կարող է ամէլ 1 միլիոն մարդու համար... Ու թե մենք պահպանել ենք մեր տեսակին բնորոշ հոգեկերտվածքն ու նկարագիրը, մեր բնատուր ընդունակությունների՝ աստվածաշնորհ տաղանդի ու աշխատասիրության առկայության պայմաններում ինչո՞ւ պիտի չնստանանք ներգաղթի՝ մասին... Հզոր, որակապես՝ պատմական նոր շրջափուլ ապահովող, Հայոց Մեծ Եղեռնին հակակշիռ՝ 1.5 միլիոն հայերի հայրենադարձության մասին... Որքան էլ առաջին հայացքից խենթ, բայց իրատեսական մի երազանք-առաջարկ-ծրագիր է սա, որ հաստատ կարող ենք գլուխ բերել, եթե իրագործմանը հավատանք ազգովի ու ազգովի՝ ձեռնամուխ լինենք կատարմանը:

Մի պահ պատկերացրեք, որ պետությամբ ու ժողովրդով, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցով, հայրենի եւ ավանդական բոլոր կուսակցություններով, Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի բոլոր հասարակական կազմակերպություններով, քիչ թե շատ ֆինանսական հնարավորություններ ունեցող հայաստանցի եւ սփյուռքահայ բոլոր գործարարներով կազմակերպված եւ համակարգված աշխատանքով սկսում ենք ներգաղթի նախապատրաստումը եւ իրագործումը: Նման խանդավառությունը եւ միասնականությունը ընդամենը 3-4 տարում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում՝ 1 միլիոն, եւ կես միլիոն հայրենադարձ կարող է բնակեցնել Արցախում: Հավատացե՛ք, վերադարձող հայն իր հետ կբերի եւ կապիտալ, եւ գաղափար, եւ միտք, եւ բազուկ... Եվ չենք էլ հասցնի զարմանալ, թե ինչպես ինքնաբերաբար կստեղծվի եւ բնակարանը, եւ աշխատատեղը, եւ վաստակը: Եվ որքան՞ սքանչելի կարող է լինել գործի ավարտը՝ երբեւէ տոնած մեր ամենամեծ հաղթանակը, որ համազգային բերկրանքի հետ նաեւ Պատմական Հայրենիքի ազատագրումը կդարձնի ավելի քան իրական: Ընդամենը եւս մեկ - երկու տարվա խնդիր:

«Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, այս լեռանը կասեք՝ տեսափոխվիր այստեղից այնտեղ, եւ կտեղափոխվի, եւ որեւէ բան ձեզ համար անհնարին չի լինի», - ասում է Աստված (Մատթ. 17.19)... Միայն թե հավատանք: Միայն թե հավատանք:

Գ.Մ.

«Կրթություն», թիվ 18-19, 27.04.2016 թ.

Հիշում եմ եւ պահանջում

Գարեգին ՆԺԴԵՅ

Ասույթներ

❖ Ես տեսայ մեր վարած ճակատամարտերում, տեսայ ամենաընտիրը հայու – մեռնելու մտքի հետ հաշտուած, ամեն գնով յաղթելու անտեղիտալի վճռակամութեամբ դէպ թշնամին խոյացող հայ զինուորը:

Ճանաչեցի եւ ամենավատը հայու – վախկոտութեան յանցանքի մէջ բռնուած անարին:

Առաջինը կը մեռնէր ապրեցնելու համար իր ազգն ու նրա զենքի հմայքը, երկրորդը կ'ապրէր ամեն գնով՝ ապրեցնելու համար թշնամու փառքը:

❖ Արի է նա, ով իր մէջ սպանել է իր կաշի համար դողացող անասունը:

❖ Երբեք եւ ոչ մի տեղ առանց հոգեւոր հայրենիքի:

❖ Հայրենիք: Երկիրը անէր եւ յարգանք դէպ մեր նախահայրերի յիշատակը, դէպ մեր կրօնը, որ ցեղի սիրտն է, դէպ մայրենի լեզուն, որ հայրենասիրութեան թթմորն է, դէպ տոհմիկ գրականութիւնը եւ արուեստները, որ ցեղի մտքի եւ հոգու կեանքն են, ազգային պատմութիւնը, որ «ցեղի հոգին ամրացնելու ճիգերի պատմութիւնն է», իրար յաջորդող սերունդների՝ հայրենի հողի վրայ թափած քրտինքն ու արիւնը, գեղջուկի հորովելն ու Տիգրան Աշխարհակալի սուրը, դէպ Անիի ակերակներն ու Հայկայ եռաթեւ աղեղը, դէպ մեր հեթանոս աստուածներն ու փառատաճարները, անասան հաւատը դէպ մեր մեծ Յոյսը. Գումարի, ընթերցող, գումարի այդ բոլորը, եւ կը ստացի հոգեւոր հայրենիքը:

❖ Մարդկային ուժերից վեր է մի ժողովրդի պատմութիւնը սպանել, մի ժողովրդի հոգեւոր հայրենիքը նուաճել:

❖ Չկան մեծ եւ փոքր ազգեր: Կան հաւասար իրաւունքով անդամները մարդկութեան ընտանիքի: Եւրոպական դիւանագիտութեան կեղծ լեզուն է ստեղծել «մեծ» եւ «փոքր» անունները: Եշտարիտ մեծութիւն չէ թուական գերազանցութիւնը:

❖ Տգիտութիւն, եսականութիւն եւ աշխարհաքաղաքացիութիւն - ահա երեքը հայրենասիրութեան անհաշտ թշնամիները:

❖ Հայրենիքը պիտի սիրել անկախ քաղաքական ռեժիմից, ինչպէս եւ անկախ մեր քաղաքական համոզմունքները:

❖ Կոյր եւ բարբարոս կուսակցամուկութիւնը - մի գարիւնը ի վախ, որ պիտ թուլանայ, որ ուժեղանանք ազգովին:

❖ Եղի՛ր ուժեղ, էլի՛ ուժեղ, եւ միշտ ուժեղ: Ժողովուրդները վերջ ի վերջոյ տէր են մնում ոչ թե նրան՝ ինչ որ նրանց տրուած է, ինչ որ մուրում են, այլ միայն նրան՝ ինչի որ արժանի են, ինչ որ իրենց սեփական ուժերով ապահովել են կարողանում:



Անելիքներն ուղղված են աշխատաշուկայի պահանջները բավարարելուն

Մասնագիտական կրթություն եւ ուսուցում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը** մասնակցել է «Դուալ կրթություն/աշխատաշուկա. առկա իրավիճակը եւ հեռանկարները» խորագրով միջոցառմանը:

Ողջունելով հանդիպման մասնակիցներին՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ կրթությունը պետք է կարողանա բավարարել տնտեսության զարգացման կարիքները եւ արձագանքել դրա փոփոխություններին:

«Սա մի դաշտ է, որտեղ ունենք անընդհատ փոփոխվող մարտահրավերներ, եւ կոչված ենք միասին աշխատելու եւ գտնելու ավելի արդյունավետ մեխանիզմներ ու համագործակցության մոդելներ: Կառավարության ծրագրում հստակ ամրագրված է ՄԿՈՒ ոլորտում դուալ ուսուցման, աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շարունակական զարգացման խնդիրը, եւ այսօր այն փոխում ենք, երբ խոսում ենք կուտակված փորձի հիման վրա դրա ինտիտուցիոնալացման մասին», - նշել է փոխնախարարը՝ ընդգծելով, որ ներկայում աշխատանքային բնադրվածներ են ընթանում նախնական եւ միջին մասնագիտական կրթության մասին մոդելի նախագծի շուրջ, որտեղ արժեքի վերաբերյալ եւ դուալ կրթության կարգավորումները եւ կուտակված փորձառության հիման վրա համակարգի զարգացումը որակապես մեր մակարդակի բերելու հնարավորություններ:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ Կառավարության ծրագրում ամրագրվել է նաեւ կարելու թիրախ, որը սահմանում է ՄԿՈՒ հաստատությունների կառավարման մոդելների փորձարկման անհրաժեշտությունը՝ ընդհուպ մինչեւ մասնավոր կողմից եւ մասնավորի հետ կառավարման մոդելներ: «Այս առումով՝ մենք ունենք համատեղ գործակցության մեծ դաշտ: Փորձական կարգով նման համագործակցության հնարավորություն կունենանք Տավուշի տարածաշրջանային քոլեջի շրջանակում, որտեղ ֆրանսիացի գործընկերների հետ ներկայում աշխատում ենք մեր տիպի գյուղատնտեսական կրթահամալիր ունենալու շուրջ: Մեր անելիքները նաեւ մեր մասնագիտությունների ներդրման, դրանց վերանայման եւ անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների ամրագրման շուրջ են, որոնք ուղղված



են աշխատաշուկայի պահանջները բավարարելուն», - շեշտել է նախարարի տեղակալը եւ ընդգծել, որ ՄԿՈՒ ոլորտն այս առումով ամենաառաջադեմ համակարգն է, որտեղ ամեն տարի նաեւ գործընկերների շնորհիվ իրականացվում է տնտեսության զարգացմանը համահունչ մոդելային մասնագիտությունների ներդրում:

Այս առումով՝ Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությանը (GIZ), որը դուալ կրթության ներդրման հարցում հանդիսանում է ԿԳՄՍ նախարարության վաղեմի եւ արդյունավետ գործընկերը: Նա ուրախությամբ փաստել է, որ դուալ կրթության պարագայում ՀՀ կրթական համակարգը փոխառել է հենց գերմանական փորձը, քանի որ ՄԿՈՒ համակարգը եւ դրա մոդելներն ու գործիքակազմը շատ զարգացած են Գերմանիայում: Նա հանդիպման մասնակիցներին մաղթել է արդյունավետ աշխատանք՝ հույս հայտնելով, որ բնադրված արդյունքում կծեւալորվեն հետագա համագործակցության մեր հնարավորություններ:

Հանդիպման մասնակիցներին ողջունել է ՀՀ-ում ԳԳՀ արտակարգ եւ լիազոր դեսպան **Վիկտոր Ռիխտերը**՝ նշելով, որ Գերմանիայում դուալ համակարգն իրավամբ շատ զարգացած է: Նրա խոսքով՝ այդ համակարգն օգնել է հաղթահարել Գերմանիայի տնտեսության ճգնաժամները եւ հիմք հանդիսացել դրա հետագա զարգացման համար: Նա գոհունակություն է հայտնել, որ հայ գործընկերներն օգտվում են հենց գերմանական փորձից՝ այդ ոլորտում ՀՀ կառավարության հետ հետագա ակտիվ համագործակցության պատրաստակամություն հայտնելով: Ըննարկմանն առցանց միացած

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն. Հարավային Կովկաս» տարածաշրջանային ծրագրի տնօրեն **Թոմաս Շրապելեն** իր հերթին նշել է, որ դուալ համակարգը հաջողությամբ իրականացվում է ամբողջ աշխարհում եւ վերահաստատել է դեսպանի այն պնդումը, որ Գերմանիայում այն հաջող մոդել է ստեղծել: Թոմաս Շրապելենի խոսքով՝ Հայաստանը դասվում է այն երկրների շարքին, որոնք բավականին առաջընթաց են արձանագրել այդ ուղղությամբ:

Մասնակիցներին ողջունել է նաեւ «Գերմանական տնտեսական միավորում» ՀԿ-ի գործադիր տնօրեն **Մերի Նավասարդյանը**՝ նշելով, որ այս հանդիպումը «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի հետ իրականացվող արդեն երրորդ միջոցառումն է, որի ընթացքում բնադրվում են կրթության եւ աշխատաշուկայի զարգացման հարցերը:

Հանդիպման ընթացքում GIZ-ի TVET ծրագրի համակարգող **Յուլիա Ստակյանը** ներկայացրել է «Դուալ մասնագիտական կրթությունը եւ ուսուցումը աշխատուժի զարգացման համար», իսկ ԿԳՄՍ մասնագիտական կրթության եւ ուսուցման քաղաքականության մշակման եւ ռազմավարության բաժնի պետ **Արմենուհի Պողոսյանը**՝ «Դուալ ուսուցման ներդրումը ՄԿՈՒ համակարգում՝ որպէս ՀՀ կառավարության կողմից տարվող քաղաքականության առաջնահերթություն» զեկույցները:

Հանդիպման մասնակիցներն անդրադարձել են նաեւ աշխատաշուկայի պահանջի ու աշխատուժի պակասի համատեքստում ՄԿՈՒ ոլորտի շարունակականության ապահովման անհրաժեշտության հարցերին:

Հ. Հ.

Դպրոցական թատրոն

Օգտակար ավանդույթը շարունակվում է

Դպրոցներն իրենց բուն կրթական առաքելությունից զատ՝ իրականացնում են նաեւ մշակութային նախաձեռնություններ, այդ թվում՝ թատերական. հիշենք հայ դպրոցի դերը հայ թատրոնի ծեւավորման գործում: Այսօր էլ, հուրախություն մեզ, այս բարի, գեղեցիկ ու օգտակար ավանդույթը շարունակվում է:

Օրերս երեւանի ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Մանուկ Աբեղյանի անվան ավագ դպրոցում բեմադրվեց Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» ստեղծագործությունը. կազմակերպիչն ու բեմադրիչը կրթօջախի հայոց լեզվի եւ գրա-

կանության ուսուցչուհի **Սիրանուշ Ռշտունին** էր, դերերում՝ 11-րդ դասարանի աշակերտ-աշակերտուհիները՝ Աբիսողոմ աղա՝ **Հայկ Մանուկյան**, Մանուկ աղա՝ **Կարեն Շահմուրադյան**, կինը՝ **Ջարուհի Ղազարյան**, Շուշան՝ **Ալինա Բեգոյան**, խմբագիր՝ **Մարիամ Վարդանյան**, բանաստեղծ՝ **Լիլիթ Ալեքսանյան**, քահանա՝ **Էդգար Մանուկյան**, նկարիչ՝ **Անի Սիմոնյան**, փաստաբան՝ **Անի Խաչատրյան**, բժիշկ՝ **Տիգրան Մխիթարյան**, սափրիչ՝ **Տիգրան Ստեփանյան**, դերասան՝ **Լինա Կարազյոզյան**, դասատու՝ **Անուշիկ Մուրադյան**, պարտքատեր՝ **Լեւոն Նալբանդյան**, բեռնակիրներ՝

**Արման Էլմաջյան, Լեւոն Նալբանդյան, Հակոբ Պարոնյան՝ Օվսանա Խաչատրյան:**

Միջոցառումը բացվեց տիկին Ռշտունու խոսքով: Մանուհիներ **Սյուզաննա Բանդարյանը** եւ **Անգելինա Խաչատրյանը** համառոտ ներկայացրին Հակոբ Պարոնյանի երգիծանքը: Ապա հանդիսատեսները դիտեցին ներկայացումը: Ներկայացումից հետո դպրոցի տնօրեն **Վահրամ Սիմոնյանը**, շնորհակալություն հայտնեց Սիրանուշ Ռշտունուն, դասղեկ **Գոհար Սարիբեկյանին** ու նույն դասարանի աշակերտներին:

շարունակությունը՝ էջ 7

## «Իթվինիզ»

### Հանուն կրթության որակի

Եվրամիության «Իթվինիզ պլուս Հայաստան» ծրագիրը 10 տարեկան է: Ծրագիրը եվրամիության երկրներում սկսվել է 2005 թվականից՝ որպես «Կոմենիուս» ծրագրի բաղադրիչ, իսկ ներկայումս «Էրազմուս+» ծրագրի մաս է: Հայաստանը ծրագրին միանալու գործընթացը սկսել է 10 տարի առաջ: Ծրագրի մասնակից բոլոր երկրներում ընտրվել են գործում են աշակցող կազմակերպություններ, ՀՀ-ում որպես աշակցող կազմակերպություն ընտրվել է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը (ԿՏԱԿ):

2013 թվականից մինչ այժմ տարբեր փուլերում «Իթվինիզ պլուս Հայաստան» ծրագրին մասնակցել են Հայաստանի շուրջ 680 դպրոց եւ շուրջ 2000 ուսուցիչ: Ավելի քան 70 ուսուցիչ մասնակցել է եվրոպական տարբեր երկրներում կազմակերպված սեմինարների, վերապատրաստման դասընթացների, հանդես եկել շնորհանդեսներով ու զեկուցումներով: 2014-2019թթ. ամեն տարի Հայաստանում կազմակերպվել են միջազգային սեմինարներ, որոնց մասնակցել են եվրոպական տարբեր երկրների եւ Հայաստանի ավելի քան 350 ուսուցիչներ եւ Աջակցման ծառայությունների ներկայացուցիչներ:

Առավել փորձառու եւ հաջողություններ արձանագրած ուսուցիչներից ընտրվել են «Իթվինիզ» տարածաշրջանային դեսպաններ, որոնք ԿՏԱԿ-ի մարզային համակարգողների հետ համատեղ կազմակերպում են համակարգում են մարզերի աշխատանքները, ցուցաբերում աջակցություն ինչպես տեխնիկական, այնպես էլ բովանդակային հարցերում: 2017-2020թթ. Հայաստանի 15 դպրոցներ արժանացել են «Իթվինիզ դպրոց» հավաստագրի, որը շնորհվել է 2 տարվա համար (6 դպրոցներ հավաստագիրը ստանում են 2-րդ անգամ անընդմեջ):

ՀՀ ԿԳՄՍ նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը ծրագրի 10-ամյակի առիթով մրցանակներ է հանձնել ծրագրում ներգրավված ակտիվ դպրոցներին եւ ուսուցիչներին:

Միջոցառման մասնակիցներին ողջունել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ ժամնա Անդրեասյանը: «Իթվինիզ պլուս Հայաստան» ծրագրի արդյունավետությունը չափվում է ոչ միայն դպրոցների եւ ուսուցիչների կողմից իրականացված կոնկրետ ծրագրերի արդյունքներով, այլև նոր գործիքակազմի, մեթոդաբանության կիրառմանը, որոնք ապահովել են կրթական միջավայրի որակյալ փոփոխություն: Այդ արդյունքները հատկապես նկատելի դարձան վերջին տարի-



ներին, երբ կրթական համակարգը կանգնեց նոր մարտահրավերների եւ փորձությունների առջև: Կայանաավորված համավարակով: Կրթության շարունակականության ապահովումն այդ փուլում հանրակրթության լրջագույն խնդիրն էր: Ենթադրյալով ծրագրում ընդգրկված ընթացքում կուտակված փորձի շնորհիվ՝ նաեւ ուսուցիչներն ու դպրոցները կարողացան իրականացնել հեռավար կրթություն: Մենք ունեցանք հեռավար կրթության կազմակերպման հրաշալի օրինակներ, երբ «Իթվինիզ» ծրագրում ընդգրկված դպրոցները աջակցում էին կրթական համակարգին՝ դառնալով ռեսուրս այլ դպրոցների համար: Մենք ունեցանք օրինակելի դեպքեր, երբ տարբեր մարզերի ուսուցիչներ միավորվեցին՝ հեռավար ուսուցում ապահովելու նպատակով»,- նշել է ժամնա Անդրեասյանը: Նրա գնահատմամբ՝ կարելու է, որ տարիների ընթացքում «Իթվինիզ» ծրագրում ընդգրկվող դպրոցների եւ ուսուցիչների թիվն աստիճանաբար ավելանա՝ ապահովելով առաջադեմ փորձի տեղայնացում: Փոխ-նախարարի խոսքով՝ «Իթվինիզ պլուս Հայաստան» ծրագրում արդյունավետ գործունեություն ծավալած մանկավարժները միացել են Հանրակրթության նոր չափորոշիչի ներդրման գործընթացին, մասնավորապես՝ նախագծային ուսուցման կիրառման եւ զարգացման ուղղությամբ: «Նախարարությունը պատրաստակամ է ապահովելու աջակցություն՝ «Իթվինիզ պլուս Հայաստան» ծրագրի հետագա շարունակականության համար»,- նշել է Ժ. Անդրեասյանը՝ ընդգծելով, որ ծրագրում ընդգրկված լինելու համագործակցության եւ զարգացման արդյունք եւ հաշվի է առնվում մանկավարժի որակավորման տարակարգի շնորհման գործընթացում: Ծրագրի մյուս կարևոր դրական կողմը, ըստ փոխնախարարի, դպրոցների միջև համագործակցության խթանումն է, որը նպաստում է լավագույն փորձի տարածմանը եւ ուսուցիչների հա-

մագործակցությանը: «Ես հույս ունեմ, որ այս ծրագրում ընդգրկված դպրոցները կրառնան լավագույն փորձի տարածման դեսպանները հանրակրթության համակարգում»,- խոսքն ավարտել է ժամնա Անդրեասյանը:

2021թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով ԿՏԱԿ-ի ներկայացրած «Մեղիա գործիքներ» եւ «Համագործակցային եւ նախագծային ուսուցման մեթոդները» դասընթացները հաստատվել են որպես ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման դասընթացներ՝ ապահովելով կրեդիտներ «Մասնագիտական զարգացում» բաղադրիչից:


Յուրաքանչյուր տարվա ավարտին, ինչպես «Իթվինիզ» մասնակից բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում, կազմակերպվում է տարեկան ամփոփիչ կոնֆերանս, որի ընթացքում ամփոփվում են կատարված աշխատանքները, քննարկվում եւ նախանշվում են հաջորդ տարվա անելիքները: Իրականացվում է նաեւ Ազգային մրցանակաբաշխություն, որի ընթացքում առավել հետաքրքիր եւ նախագծերի՝ որակի եվրոպական չափանիշներով առավել բարձր գնահատականների արժանացած մասնակից ուսուցիչները ստանում են Որակի ազգային հավաստագրեր ու մրցանակներ, իսկ նրանցից լավագույնները մասնակցում են Որակի համաեվրոպական մրցույթին: Հայաստանից 117 ուսուցիչներ ստացել են Որակի եվրոպական 162 հավաստագիր: 2020 թ. համաեվրոպական մրցանակաբաշխության արդյունքներով Հայաստանի ուսուցիչներից Սոնա Արամյանը 3 ուսուցիչների հետ միասին համաեվրոպական «Իթվինիզ» մրցանակաբաշխության հաղթող է ճանաչվել 0-6 տարիքային խմբում «Busy bags in my bag» նախագծի համար: Գործարկվել է հաջողությամբ շահագործվում են «Իթվինիզ պլուս Հայաստան» ծրագրի ազգային կայքը եւ Ֆեյսբուքյան էջը:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

## Հիշում եմ եւ պահանջում

### Արշակ ԶՈՊԱՆՅԱՆ

#### «Ես ազգայնական եմ»



«Ես ազգայնական եմ - ու հպարտությամբ կը հայտարարեմ զայդ - որովհետեւ ծիվաղային պիտի նկատեի ուրիշ բան ըլլալ՝ իմ ազգիս արդի վիճակին մեջ, եւ ես գիտեմ ֆրանսացի ընկերվարականներ, անիշխանականներ, որ ըսած են ինձի. «Եթե հայ ըլլայինք, մենք անշուշտ ազգայնական պիտի ըլլայինք»: Ես ազգայնական եմ, որովհետեւ իմ պարտքս է ծառայել ամենեւն առաջ իմ ազգիս, որուն կը պարտիմ կյանքս, լեզուս, հոգվույս հիմնական գծերը: Ես ազգայնական եմ, որովհետեւ իմ ազգս դժբախտ է, ավելի դժբախտ, քան ռուս ազգ, եւ իմ պարտականությունս անոր հանդէպ ավելի մեծ է, քան ազատ եւ ուժեղ ազգի մը զավակինը դեպի իր ազգը: Ես ազգայնական եմ վերջապես՝ որովհետեւ իմ ազգս հառաջդիմության, քաղաքակրթության տարր մըն է ի բնէ, լույսի գործիք մըն է, գեղեցկության աղբյուր մըն է, ազատության կայծ մըն է: Իմ ազգայնականությունս նպատակը շրջակա ազգերուն վնասել, անոնց չբացմամբը իմ ազգս մեծցնելը չէ, այլ չեզոքացնելը հառաջդիմության խոչընդոտի դերը, զոր կը կատարեն մեզ շրջապատող հետամնաց, տգետ եւ բիրտ զանգվածները, տալ միջոցներ, որ իմ ազգս, աշխատող, արտադրող, շենցնող, ազատասեր, արվեստագետ իմ ազգս՝ իր բոլոր ծիրքերը, իր բեղուն հոգիին բոլոր ուժերը կարենա ազատորեն գործածել՝ հոգուտ ոչ միայն իրեն, այլ բոլոր արեւելքին, բոլոր մարդկության: Եվ ահա ինչու իմ ազգայնականությունս ավելի իրական ազատասիրություն է, ըլլալով ավելի գործնական, ավելի մարդկային, ավելի անմիջական...»:

«Անահիտ» 1906, թիվ 3-4-5, «Ռուսիա եւ հայերը»



## Օգտակար ավանդույթը շարունակվում է

### սկիզբը՝ էջ 6

Տնօրենը նշեց, որ Պարոնյանն արդիական է այսօր, ինչպես արդիական է հորեանցին: Տնօրենը դպրոցի տնօրինության անունից պատվոգիր շնորհեց 11-րդ դասարանի աշակերտուհի **Սյուզաննա Ղազարյանին**՝ ներկայացման ազդագիրը ձեւավորելու համար:

Խոսեց նաեւ ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի պրոռեկտոր **Հովսեփ Հովեյանը**: Վերջինս նշեց, որ աշակերտաշակերտուհիները ներկայացրին այն կերպարները, որոնք չպետք է լինեն մեր կյանքում, պրոռեկտորը շնորհակալու-



թյուն հայտնեց դպրոցին, տնօրենին, Սիրանուշ Ռշտունուն եւ 11-րդ դասարանցիներին:

Թատերախաղին ներկա էին ուսուցիչներ, դպրոցականներ եւ համալսարանի աշխատակիցներ:

«Մեծապատիվ մուրացկաններ»-ը դպրոցում բեմ էր բարձացրել նաեւ ապրիլի 1-ին. ռեկտորատի առաջարկով բեմադրությունը կրկնվել է: Հավելենք, որ սա արեղանցիների միակ թատերական նախաձեռնությունըն չէ, նրանք իրականացրել են նաեւ «Հայ կնոջ դերը Բաֆֆու» «Սամվել» վեպում» վերնագրով բեմադրությունը՝ նույն կազմակերպիչ եւ բեմադրիչի՝ տիկին Ռշտունու, եւ նույն աշակերտական խմբի ջանքերով:

Հրայր ԲԱԼՈՅԱՆ

### Եղեռն...

**Գարուն ա, ձուն ա արել...**  
 1915-ի սկզբին, մի շարք գաղտնի խորհրդակցություններից հետո, թուրքական կառավարությունը (Թալեաթի, Էնվերի, Ջեմալի գլխավորությամբ) որոշեց, անկախ սկսված համաշխարհային պատերազմի ելքից, բնաջնջել արևմտահայությանը: Մշակվեց գործողությունների հստակ ծրագիր. որ քաղաքում, որ գյուղում, երբ եւ ինչպես, ինչ միջոցներով: Նախեսառաջ 18-45 տարեկան հայ տղամարդկանց գորահավաքներ անցկացվեցին, ապա նորակոչիկներին եւ բանակում մինչ այդ ծառայող հայ զինվորականներին մաս-մաս ոչնչացրեցին: Հաջորդը մտավորականությունն էր: Ապրիլի 11-ի գիշերը (իհն տոմարով) Պոլսում առանձին-առանձին դավադրաբար ծերբակալվեցին 800 հայ մտավորականներ: Նրանց բոլորին գազամաքար սպանեցին: Նրանց մեջ էին... Զարմանալի՜ զուգահեռություն. թերեւս երբեք այդքան պայծառ դեմքեր մի-մասնանակ չէին ապրել ու ստեղծագործել, ինչպես այդ եղբերական տարիներին:


Հայ զինվորականների գնդակահարություններին, մտավորակա-

նության նահատակությանը, մի խումբ ազգային գործիչների մահապատժին (կախաղանի միջոցով) հաջորդեցին զանգվածային տեղահանությունները եւ կոտորածները... Ինչպես՝ հաշվել՝ որքա՞ն մահացան, որքա՞ն կին, որքա՞ն ծերեր, որքա՞ն մտքի եւ կամ որքա՞ն հոգի մշակներ... Ու այդպես մինչեւ տարեվերջ՝ 1.500.000... Ու յուրաքանչյուրին՝ ամենաբիրտ տանջանքներով ու մարդկային լեզվով անպատմելի եղանակներով... Ցեղասպանությունը կատարվում էր եւ Արեւմտյան Հայաստանում, եւ Օսմանյան Թուրքիայի այլ տարածքներում: Հիրավի, ինչպես հիշորտացել էր Թալեաթը, երեք ամսում ավելին արվեց, քան արյունարբու սուլթան Համիդը արել էր 30 տարում...  
 Ողջ Արեւմտահայությունը կամ կոտորվեց, կամ արտոլվեց ու զոհվեց ճանապարհներին, մի մասն էլ արտաքսվեց ի սփյուռս աշխարհի, ուր կարողացավ գոյատևել առայսօր՝ սպասելով հատուցման օրվան:

... Սրանք հանրագիտարանային տվյալներ են, որ ծանոթ են յուրաքանչյուր հայի: Ու ամեն անգամ

յուրաքանչյուր հայաստանցի, բարձրանալով Ծիծեռնակաբերդ, գլուխ է խոնարհում Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին ու ամեն անգամ ցավով հայտնագործում, որ անդամնալի են մեր կորուստները... Կորցրած հողը կարելի է հետ նվաճել: Հայրենիքը երբեք չի կորչում: Վաղ թե ուշ այն կրկին իր տիրոջն է պատկանելու: Նոր մահուկներ են ծնվելու հայոց աշխարհում, բայց զոհված ու չկայացած մահուկ հանճարների կորուստը անդամնալի է: Նոր Կոմիտասներ են ստեղծագործելու հայոց աշխարհում, բայց այն, ինչ պիտի աներ միայն **Կոմիտասը**, այլևս ոչ ոք չի անելու... Ու նաեւ **Ջոհրապետը**, **Վարուժանը**, **Սիամանթոնը**... ու բոլոր 1,5 միլիոնը՝ հատ-հատ: Նրանք են մեր կորուստը... ու նրանց գավակները, նրանց գավակների գավակները, որ մեզ այսօր այնքան պետք են ու չկան, ու չեն լինելու երբեք...  
 «Արեւելքում մեռնում է մեր քույրը... մեռնում է միայն այն բանի համար, որ մեր քույրն է: Նրա հանցանքն այն է, որ նա բաժանել է մեր զգացմունքները, սիրել է այն, ինչ սիրել ենք մենք, մտածել է այնպես,

ինչպես մենք եւ մեզ նման ընկալել է ինաստույթուն, բանաստեղծություն ու արվեստ: Դրա մեջ է նրա հանցանքը...», - գրել է մեր ժողովրդի բարեկամ **Անատոլ Ֆրանսը**: Բայց գուցե մեր հանցանքը դա՞ չէր միայն, այլ այն, որ մենք առաջինն էինք ստեղծել քրիստոնեական քաղաքակրթություն ու սնել նույն եվրոպայի: Եվ եթե նույնիսկ նա լինե՞ր ոչ թե պաշտպանի, այլ անաչառ դատավորի՞ դերում... Բայց մեր հանճարի, մեր կենսունակության, տնտեսական բարգավաճման առանձնահատուկ շնորհիքի պատճառով մենք վտանգավոր էինք, ու մեր անկախությունը մոտակա մրցակցության ակնկալիք է ծնունդ պատմության ասպարեզի վրա ճեմող պետությունների դիվանագիտական ուղեղներում, եւ նրանց ձեռնտու չէ մեզ ունենալ իրենց հավասար իրավունքներով... Գոյության կոչվ է...  
 Մի բանում անվերապահորեն ճիշտ է Անատոլ Ֆրանսը. «Հայաստանը մեռնում է, բայց նա կվերածնվի... նրան մնացել է շատ քիչ բան, թանկագին արյուն, որից կծնվի մի հերոսական սերունդ»:



### Չարիկ, լառ, զարկոդին՝ գա՛րկ...

1915 թվականին Արեւմտյան Հայաստանի մի շարք գավառներում եւ քաղաքներում հերոսական ինքնապաշտպանության դիմեց ժողովուրդը եւ արարեց խիզախության գարնանահարաշ դրվագներ: Եվ եթե թուրքական կառավարությունը դիվանագիտական աջակցություն չունենար, եւ հայ զանգվածներն էլ ապավինած լինեին միայն սեփական ուժերին եւ նախօրոք լինեին պատրաստ, 1915-ը հնարավոր է երջանիկ տարեթիվ դառնար...  
 Վանի, Շապին-Գարահիսարի, Մուսա լեռան, Տարոնի, Ուրֆայի... հայ քաղաքները տասնապատիկ ավելի թանկ վաճառեցին ռազմիկի իրենց կյանքը՝ դառնալով Թուրքիային հավերժական սարսափ, իրենց սերունդներին՝ անշեշ օրինակ:

### Յերոսամարտեր...

թուրքական հրոսակների (թվով՝ 5-6 հազար) գործերը: Այդ առասպելական դիմադրությունը թուրքերը հաղթահարում են միայն խորամանկ դավադրությամբ...

### Տարոն

Տարոնի նահանգի (Բաղեշ, Մուշ, Սղեթ, Կենճ, Սասուն, Մանազկերտ) ինքնապաշտպանության կազմակերպիչներն էին **Ռուբենը**, **Կորյունը**, **Կոմսը**՝ իրենց խիզախ ընկերներով: Առավել տեսական էր դիմադրությունը Մուշում եւ Սասունում՝ 1915-ի մայիսից մինչեւ 1916-ի փետրվար: Թշնամին պարտվում էր, բայց նորանոր կանոնավոր ուժեր էին ներգրավվում... Այնուամենայնիվ, հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ բնակչության զգալի մասը, ապաստանելով լեռներում, փրկվում է կոտորածից:

### Ուրֆա

Միջագետքի հյուսիսում էր գտնվում Ուրֆան (Ուռհա, Եղեսիա), որ ուներ շուրջ 30.000 հայ բնակչություն... Ուրֆայի հերոսամարտի կազմակերպիչներն էին **Սկրտիչ Յոթնեղբայրյանը** եւ **Հարություն Ռասթելեյանը**...

### Վան

Վանի հերոսամարտի եռանդուն կազմակերպիչներից էր 1915-1919 թվականների հայ ազատագրական պայքարի եւ գաղափարական խնդրումների ամենապայծառ դեմքերից մեկը՝ **Արամ Մանուկյանը**: Նրա հետ էին Խրիմյան Հայրիկի՝ դեռես Վարազա վանքի վանահայրության ժամանակներից հայրենասիրության դասեր առած վառ ոգով եւ նարտական նկարագրով մի խումբ կորովի այրեր: Նրանց ջանքերով Վանի եւ նրա արվարձան Այգեստանի ինքնապաշտպանությունը տևեց

### Շապին-Գարահիսար

Այս գյուղաքաղաքում ազգային խնդրումները սկսել էին 1880-ական թվականներից: Այստեղ են ստացել իրենց առաջին ֆիդայական մկրտությունը **Անդրանիկը** եւ **Մուրադը**:  
 ... 1915-ի հունիսի 2-ից 20-ը քաղաքի փոքրաթիվ ինքնապաշտպանական ջոկատը (150 մարդ) անօրինակ խիզախությամբ հետ է մղում

### Մուսա լեռ

Մուսա լեռը գտնվում է Միջերկրականի արեւելյան ափին: Նրա բարձունքների վրա վեց հայկական գյուղեր կային: Այդ վեց գյուղերի 4231 բնակիչներ (1171 կին, 1237 այր, 1883 անչափահաս) նախընտրեցին անապատներում մեռնելու փոխարեն խուսափել տարագրությունից, մնալ իրենց լեռան վրա եւ կռվել թշնամու դեմ: 1915-ի օգոստոսից մինչեւ սեպտեմբեր (40 օր) ծգվում է հերոսական պաշտպանությունը եւ ավարտվում ֆրանսիական մակերի օգնությամբ մուսալեռցիների անվտանգ գաղթով: Մամրամասները շարադրված են Ֆրանս Վերֆելի հայտնի գրքում: Ասեմք միայն, որ ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարն էր 21-ամյա **Մովսես Տեր-Գալստյանը**:

## Արդարահատույց...

### Եղեռնյա գրչով վրեժ երգեցի...

Հայ ազգային-ազատագրական պայքարը ծնեց ֆիդայիների՝ ազգային հերոսների մի լուսավառ համաստեղություն: Ֆիդայական շարժման մասին պատմական ճշմարտությունը քիչ թե շատ ծանոթ է ընթերցողին: Սակայն կա ազգային հերոսների մի այլ աստղաբաշխ, որոնց մասին շատ կցկրտոր տեղեկություններ կան հրատարակված մեզանում. հայ վրիժառուները, որ շարունակեցին մեծ հայդուկների գործը՝ նոր պայմաններում ու նոր ձեւերով: **Արաբոյի**, **Աղբյուր Սերոբի**, **Քեռու**, **Անդրանիկի**, **Մուրադի**, **Գեւորգ Չաուշի**, **Հրայրի**, **Սաքոյի**, **Մախլուտոյի** եւ այլոց անունների հետ հայ սերունդները երախտապարտ փառաբանելու են **Արամ Երկանյանին**, **Սողոմոն Թեխլերյանին**, **Արշավիր Շիրակյանին**, **Ստեփան Ծաղիկյանին**, **Միսաք Թորլաքյանին**...

### Ստեփան Ծաղիկյան

տանի 85 անդամների...  
 1919-ին գնում է Պոլիս՝ Թալեաթի հետքերով: Այնուհետեւ Բեռլին: Հաստատվում է որպես ուսանող: Ճշտում է Թալեաթի նոր անուն-ազգանունը, հասցեն... 1921թ. մարտի 15-ի առավոտյան, երբ Թալեաթը դուրս է գալիս բնակարանից եւ սկսում առաջանալ փողոցով, Թեխլերյանը ընդառաջ է դուրս գալիս եւ դիմա-հար կրակում մարդասպանի գլխին... Այնուհետեւ Սողոմոնը ձերբակալվում է եւ երկարատե դատավարությունից հետո ազատ արձակվում: Մահացել է 1960թ., Ամերիկայում:

### Ստեփան Ծաղիկյան

Ծնվել է 1886-ին, Դարանայաց գավառում: 9 տարեկան հասակում ընտանիքով մեկնել է Երզնկա: Եղեռնի ընթացքում կորցրել է իր գերդաս-

հային առաջին պատերազմի ընթացքում գտնվում էր Խարկովում: Այնտեղից անցնում է Կովկաս, միանում կամավորներին: Հայաստանի խորհրդայնացումից հետո մնում է տեղում իրականացնելու չիրագործված մահապատիժներ: 1922թ. հունիսի 21-ին Թիֆլիսում գնդակահարել է Ջեմալ փաշային: Չեկայի կողմից ձերբակալվել է եւ անհետ կորել:

### Արամ Երկանյան

Կարնեցի է, ծնված 1900թ.: Եղեռնից մազապարծ ապաստանել է Կովկասում: Մասնակցել է Բաշ-Ապարանի ճակատամարտին: Հայաստանի Հանրապետության օրերին եղել է ՀՀԿ կուսակցության տրամադրության ներքո: Թիֆլիսում ահաբեկել է (1919 եւ 1920 թթ.) Ղախիբեկովին եւ Սարաֆովին: 1922թ. Բեռլինում ահաբեկել է Բեհաեդդին Շաքիրին: Այնուհետեւ ապրել է Ռուսիայում, Արգենտինայում... Մահացել է 1934-ին:

### Սողոմոն Թեխլերյան

Սողոմոն Թեխլերյան  
 Ծնվել է 1886-ին, Դարանայաց գավառում: 9 տարեկան հասակում ընտանիքով մեկնել է Երզնկա: Եղեռնի ընթացքում կորցրել է իր գերդաս-

### Արշավիր Շիրակյան

Տակավին պատանի, Պոլսից մեկնում է Հոմս եւ հետապնդում Սայիդ Հալիմին, որի վարչապետության օրոք էր տրվել 1915-ի կոտորածների որոշումը: 1921թ. դեկտեմբերի 5-ին ցատկում է փողոցով սուրացող կառքի ելքի աստիճանի վրա եւ սպանում նախկին վարչապետին: Իտալական թերթերը կախարդական հերոսություն են նկատում կատարվածը: Այնուհետեւ Հոմսից անցնում է Բեռլին, Արամ Երկանյանի հետ հետամուտ լինում Բեհաեդդին Շաքիրին եւ Ջեմալ Ազմին: Միեւնույն օրը, երբ Երկանյանը ահաբեկում է Շաքիրին, նույն պահին էլ Շիրակյանը գնդակահարում է Ջեմալ Ազմին:

### Ստեփան Ծաղիկյան

Ծնվել է 1886-ին, Խոտորցուրի Մոխրկուտ գյուղում: Համաշխար-

### Միսաք Թորլաքյան

Ծնվել է Տրապիզոնում: 1916-ին կամավոր: Ապա անցնում է Պոլիս, հետապնդում Բաքվի հայկական կոտորածի պատասխանատու Ջիվանջիրին, որին էլ դիմախար գնդակահարում է 1921թ. հուլիսի 8-ին:  
 \* \* \*  
 Ծագումով դարաբաղցի, քաղաքացիական կռիվների հրամանատար, Միջին Ասիայում բասմաչների դեմ մարտերի հերոս **Հակոբ Մելքունովը** 1922թ. օգոստոսի 4-ին գնդակահարում է Ենվերին:



### ... 3 տարի անց

#### Ազատությունը բախում էր մեր դուռը, իսկ մենք պատրաստ չէինք...

Կա ավանդական մի չափանիշ. պատկերացնելու համար հաղթանակի մեծությունը շեշտվում է հակառակորդի ուժը... Մեր հակառակորդը տարիներ, դարեր նա էր, որի մասին Յուզոյի թեալոր խոսքը հնչում է այսպես. *այստեղով թուրքը է անցել, մնացել են միայն ավերակներ*: Իսկ այդ հակառակորդը, թշնամին, թեև ոչ ուղղակիորեն, այնուամենայնիվ, օժանդակություն ստացավ եւ Ռուսաստանից, որին ապավինել էր մեր ազգի կեսը եւ որին հավատում էր մյուս կեսը եւս, եւ Եվրոպայից, որը Հայկական հարցին մայրում էր միայն որպես մշտական կռվան թուրքիայի վրա ճնշում գործադրելու...

Ուրեմն որքան հերոսական պետք է լիներ 600 տարի իր պետականությունը կորցրած ժողովուրդը, որ հաղթահարել էր բեմն խաչվող, երբեմն զուգահեռ ընթացող այդ երեք ուժերը: Եղեմն անգամ չկասեցրեց ոչ միայն նրա գոյատևումը, այլև կորցրածը հետ բերելու անսասան կամքը եւ տվյալ պահին խիստ անհրաժեշտ հավատը սեփական ուժերի նկատմամբ:

Հայոց մեծ եղեռնից երեք տարի անց տեղի ունեցավ Սարդարապատի ճակատամարտը... 1915-ին

անայսպես էր Արեւմտյան Հայաստանը: Բայց դեռ կար Արեւելյանը... 1917-ի Ռուսաստանի հեղափոխությանը տասնամյակ էր ցարական իշխանությունը, եւ Արեւելյան Հայաստանը իրերի բերումով հայտնվել էր ինքնուրույն դրության մեջ: Վերջին 600 տարիների ընթացքում առաջին անգամ հայության մի հատվածը ազատվել էր կապանքներից եւ, թեև արյունաքամ, քայքայված տնտեսությամբ, բայց արդեն միայն իր սեփական, թեկուզեւ նվազագույն, ուժերը տնօրինելու հնարավորությամբ... Բնական էր ստեղծված իրարդրության մեջ թուրքական նոր արշավանքը: Արեւմտյանի ճակատագիրը կարող էր կրկնվել եւ Արեւելյան Հայաստանում... Բայց... Սարդարապատի հաղթանակը իր ունեցած նշանակությամբ իրավացիորեն համեմատվել է Ավարայրի հետ: Հայ ժողովրդի համար չափազանց վճռորոշ այդ հաղթանակը պարզապես պարզեցեց գոյատևումը... Հաղթանակից ընդամենը 2-3 օր անց հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը: Պատկերացնել է պետք հայոց ոգեւորությունը. Եղեմնից երեք տարի անց, եղեռնագարկ, լիովին քայքայված, կողոպտված եւ լքված, վերջին ուժերը Սարդարապատում փորձարկած Արեւելյան Հայաստանը իրագործում է իր 600-ամյա երազանքը. անկախ պետա-

կանությունը վերականգնվում է... 1918-ի մայիսի 28-ից սկսվում է Հայ դատի պահանջատիրության (Հայկական հարցի) նոր փուլը: Առաջինը իր քառասունամյա տարեգրությամբ ավարտվել էր եղեռնով... Երկրորդը տեւեց ընդամենը երկուսուկես տարի եւ ավարտվեց Հայաստանի խորհրդայնացումով...

1918-ի մայիսի վերջին Հայկական Հանրապետության տարածքը կազմում էր ընդամենը 10.000 ք. կիլոմետր: Երկու տարի անց 1920-ի կեսերին՝ 70.000 ք. կիլոմետր: Յոթնապատիկ այս հաջողությունը ամենից մեծ կռվանքն է հօգուտ որեւէ ազգի անկախության: Ընդամենը երկու տարի հայ ժողովուրդը ապավինել էր միայն սեփական ուժերին եւ կարճ ժամանակամիջոցում հաղթահարել ռազմական, տնտեսական, քաղաքական բազում դժվարություններ ու առաջադիմել նաեւ դիվանագիտության մարզում: 1920թ. օգոստոսի 10-ին կնքված Սեւրի դաշնագրով Հայաստանին հատկացվում էր եւս 100.000 ք. կիլոմետր տարածք. գրեթե ամբողջությամբ լուծվում էր Հայկական հարցը... Սակայն, Ավետիս Ահարոնյանի հստակ բնորոշմամբ, ազատությունը բախում էր մեր դուռը, իսկ մենք պատրաստ չէինք նրան ընդունել... Նորից կողմնորոշումներ, տարածայնություններ, չհաղթահարված ստրկախո-

ղութություններ...

Հայաստանի Հանրապետության թիկունքում սկսվում է ռուս-թուրքական քաղաքական մի նոր խաղ. ցարական Ռուսաստանի Հայաստանի հանդեպ ունեցած նկրտումներն այս անգամ դրսեւորվում են արդեն բոլշեւիկյան Ռուսաստանի համաշխարհային հեղափոխության շահերով... Կնքվում են ռուս-թուրքական պայմանագրեր, Ռուսաստանը նորից իր ձեռքն է վերցնում Հայաստանի եւ Հայկական հարցի տնօրինումը... Օտար երկրորդ մեծիմաստ ասպիւնելու հին հիվանդությունը խարխուլում է հայոց միասնությունը:

Անդրամիկի հաշվարկներով Հայաստանը 65.000 զորաբանակով կարող էր իրականություն դարձնել Սեւրի դաշնագրով արտոնված Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանը, սակայն գաղափարական տարածայնությունները քայքայում են Ռուսիայի արկածախառն շարժումը, եւ Հյուսիսի ու Հարավի ճնշման միջեւ Հայկական Հանրապետությունը ստիպվում է ոչ միայն իրաժարվել նոր տարածքներից, այլև ընդհանրապես անկախ պետականությունից...

Հայ դատի պահանջատիրության երրորդ փուլը (1920-1965) որեւէ նշանակություն պարունակում է միայն Սփյուռքի գործողություններում: Մայր հայրենիքում սկսվում է մի երկարատև լուծություն...

### ... 50 - ամյակ

#### Թող որոտա իմ գլխին...

1965 թվականով սկսվեց հայ դատի պահանջատիրության նոր հանգրվանը: Մինչ այդ եղել էր 1937-ը, հետո՝ 1949-ը, հետո եկել էր 1953-ը: Մի ամբողջ 45 տարի «Եղեռն» կամ «Հայկական հարց» արտահայտությունները ուղղակի հանված էին մեր բառապաշարից, ինչպես ժամանակին օսմանյան թուրքիայում արգելված էր «Հայաստան» բառի գործածությունը: Միայն 1965-ին ժողովուրդը, մի խումբ ընտրյալների շրջանակում, նշեց Հայոց Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցը: Եղան հանրահավաքներ, բազմամարդ ցույցեր, երթեր, կիզակետում էին իրապարակները, Կոմիտասի անվան զբոսայգին... Սա առաջին համաժողովու-

ղական պոթեթիկումն էր խորհրդային Հայաստանում: Նույնիսկ «Պրավդան» այդ օրերին հոդված տպագրեց եղեռնի մասին: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին մայր հայրենիքում եղեռնի 50-ամյա տարելիցի նշման ողջ նշանակությունը: 1965-ից հետո մեզանում սկսեցին լույս տեսնել բազմաթիվ գրքեր՝ հայոց ցեղասպանության մասին: Իհարկե, դեռևս չէր վերհանվում ողջ ճշմարտությունը, սակայն մեր պատմության այդ մի դրվագը եւս մտավ մեր մշակութային շրջանառության մեջ, մեր հիշողության մեջ, ու արդեն գիտեինք, որ ունենք Հայ դատ ու պահանջատիրություն:

1965-ը անհամեմատ մեծ ընդգրկումով նշվեց Սփյուռքում: Ոգեւորչման արարողություններ կատար-

վեցին Լիբանանում, Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում, Արգենտինայում, Կանադայում, Իտալիայում եւ այլուր: Արտասահմանյան բազմաթիվ երկրներում, հատկապես՝ թուրքական դեսպանատների առջեւ, տեղի ունեցան ցույցեր, քայլարշավներ... Բեյրութում հրատարակվեց «Հուշամատյան Հայոց Մեծ Եղեռնի» մեծածավալ աշխատությունը... Ամենատարբեր երկրներում եւս լույս տեսան բազմաթիվ գրքեր, հոդվածներ:

«Սոնդ» թերթում հրատարակված իր հոդվածում հայագետ Յրեղեթիկ Յեյրից գրեց. «Բոլոր մարդերում մեջ, հակառակ իրենց փոքր թվին, հայերը կնպաստեն քաղաքակրթության համաշխարհային գործին»:

«Յունանիտեն» նշեց, որ «Հայե-

րի մասսայական կոտորածը ցեղասպանության առաջին ոճիրն էր 20-րդ դարի սկզբին, 1914-18 թթ. պատերազմի ընթացքում: Եվ այդ ոճիրը երբեք չդադարեց ու չդադարեց»:

Ժամ Սարի Գառզուն իր «Մի իսկական ցեղասպանություն» գրքում հանգամանորեն ներկայացրեց Հայոց Մեծ Եղեռնը, վերլուծելով նրա հետևանքները:

Իվ Տեռնը Հայաստան այցելելուց հետո հրատարակեց «Հայեր. մի ցեղասպանության պատմություն» աշխատությունը...

Հարկ չկա բոլորը թվարկել: Հայությունը չէր մոռացել իր պատմությունը, իր դատը, աշխատում էր օրնիքում, փնտրում ու գտնում կատարվածի արդար հատուցման համակիրներ:

### ... 2սպանակ

#### Ձեզ ո՞վ էր ասում՝ մեզ սեղմե՞ք այդքան...

Ի՞նչ կար Հայաստանում 1965-88 թվականներին: Երկրում «ժողովում» էր «լծացումը»: Հայաստանում այն ուներ մի ուրիշ երանգ եւս. ծովանում-ամբարվում էր ժողովրդի հիշողությունը, որ այլևս արթնացել էր ստալինյան «անհատի պաշտամունքի» պսակագերծումից ու մանավանդ 1965-67թթ. ժողովրդական ընդվզումներից հետո... Եիշտ է, դա արտահայտվում էր ոչ զանգվածայնորեն, հատկապես՝ գրական-մշակութային եւ պատմագիտական ոլորտներում, բայց, այնուամենայնիվ, գոյատևող ժողովուրդը այլևս թեւակոխել էր իր արդար պահանջատիրության նոր փուլը եւ ապրում էր մի յուրատեսակ նախապատրաստական շրջան: Այդ տարիներին ստեղծագործական վերելքներ ապրեց Հովհաննես Շիրազը, ի հայտ եկան մշակութային այնպիսի հզոր երեւույթներ, ինչպիսիք էին Պարոյր Սեւակը, Մինաս Ավետիսյանը, Սուշեղ Գալշոյանը... Ավելացնենք Հրանտ Մաթևոսյանի արծակը, Տիգրան Մանուկյանի երաժշտությունը, Համո Սահյանի պոեզիան, Սերո Խանգալ-

իանի պատմավիպասանությունը... Բոլորը չեն թվարկվում էին արժեքներ, որոնցով կրթվում էր նոր սերունդը, մանավանդ որ պատմագիտության բնագավառում եւս դրական տեղաշարժերն ակնհայտ էին (Ջոն Կիրակոսյան եւ ուրիշներ): Եվ մտալուտ գարնան շունչը զգացվում էր օրավուր: 1967թ. նոյեմբերի 28-ին տեղի ունեցավ Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա կառուցված՝ 1915թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Հուշարձան-կոթողի բացումը: Մի քանի ամիս անց, այս անգամ՝ պատշաճ օրը, 1968-ի մայիսի 25-ին, հանդիսավորապես բացվեց Սարդարապատի ճակատամարտին նվիրված հուշահամալիրը: Այդպիսով նշվեց մեր պատմության փառահեղ այդ իրադարձության 50-ամյակը եւ «Եղեռն» բառ-հասկացության հետ շրջանառության մեջ դրվեց «Սարդարապատ» հասկացությունը: Իհարկե, պատմական ճշմարտությունները դեռևս կարելի էր քաղել միայն Սփյուռքում լույս տեսնող գրքերից ու պարբերականներից, իսկ մայր հայրենիքում լրկ դրանց, ասենք, Հանրային գրադարանում պահպանվող եզակի օրինակներից:

Նույն՝ 1968-ի հոկտեմբերի 18-ին

հանդիսավորապես նշվեց Երևանի հիմնադրման 2750-ամյակը: Ոգեւորությունը համազգային էր: Ու թեև մի Պի-նոտրովսկի (անշուշտ, մեր գիտնականների օժանդակությամբ) կարողացավ աշխարհին զարմացնել, թե տեսե՞ք, մի նոր, անհայտ աշխարհ եմ հայտնաբերել, մի Ուրարտու, մի առանձին քաղաքակրթություն, հայ ժողովուրդը մեծ խմբերով բարձրանում էր Արին-Քերդ բլուրը, դեպի Երեբունի ամրոցը, եւ բնավ չէր կասկածում, որ Երեբունին Երևանն է եւ նույնքան հայկական, որքան Վանը, Տիգրանակերտը, Վաղարշապատը... Իսկ բլրան ստորոտին շրջիկ-վաճառողները ազգային կիրառական արվեստի նմուշներ ու նաեւ Անդրանիկի լուսանկարներն էին վաճառում... Դե գնա ու ասա, թե Ուրարտուն Արարտուն է, Հայաստանը չէ, թե հայոց լեզուն 6 հազար տարեկան է, բայց հայ ժողովուրդը... ընդամենը 2,5 հազար, որովհետեւ 3,5 հազար տարի կազմավորման ընթացքի մեջ է եղել... Ժողովուրդներ են եկել ու գնացել պատմության թատերաբեմից, իսկ հայերը ժողովուրդ չեն եղել, ազգ չեն եղել, այլ ինչ-որ անհայտ ու տարանուն ցեղերի մի խառնարան-ամբոխ... Այդպիսի անհեթեթությունների միայն «գիտնականները» կարող են

հավատալ: Ժողովուրդը հո գիտի, մեկին գունդանում մեկի պես պարզ է կար հայոց լեզուն, ուրեմն կար եւ այդ լեզվով խոսող, այսինքն հայ ժողովուրդը... Եվ հետո՝ հո լծացումը անսահման չէ՞ր տեսելու: Անցնելու էր եւս քսան տարի, եւ Անդրանիկին հավասար Նժդեհն էր պաշտվելու, եւ սուտ «ուրարտացի» բառին փոխարինելու էր ճշմարիտ «արիացին»...

1978թ. ապրիլի 14-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը հաստատեց Հայկական ԽՍՀ սահմանադրությունը: Լծացում էր, բայց ժողովուրդն արդեն ընդվզել գիտեր ու իր կամքով ստիպեց սահմանադրության մեջ կրկին վավերացնել, որ Հայկական ԽՍՀ պետական լեզուն հայ ժողովրդի մայրենի լեզուն է, հայերենը...

Նույն թվականի աշնանը պետականորեն նշվեց Ռուսաստանի հետ Արեւելյան Հայաստանի միավորման 150-ամյակը, Հայաստանը 3-րդ անգամ պարզեցատրվեց Լեւոնի շքանշանով: Բայց թե ժողովուրդն արդեն հոգնել էր կեղծ պատմություններից, անհիմն եւ անարդար «ինտերնացիոնալիզմներից», բայց ինքնիշխանի ուժով «լծացումը» դեռ շարունակում էր գոյատևել, եւ նրան բնորոշ կարգախոսն էր՝ «Շիրակո շազայետ Ազեր-

բայքան», որ համահունչ էր երկրի հիմնին՝ «Շիրակա ստրանա մայա...»... 1967թ.-ից սկսած, արդեն թույլատրված կարգով, ամեն տարի ապրիլի 24-ին ժողովուրդը գնում էր Ծիծեռնակաբերդ: Պատմաորդ անմահ «Հայոց պատմություն» Կարենի հավասար Նժդեհն էր պաշտվելու, եւ սուտ «ուրարտացի» բառին փոխարինելու էր ճշմարիտ «արիացին»... 1978թ. ապրիլի 14-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը հաստատեց Հայկական ԽՍՀ սահմանադրությունը: Լծացում էր, բայց ժողովուրդն արդեն ընդվզել գիտեր ու իր կամքով ստիպեց սահմանադրության մեջ կրկին վավերացնել, որ Հայկական ԽՍՀ պետական լեզուն հայ ժողովրդի մայրենի լեզուն է, հայերենը... Նույն թվականի աշնանը պետականորեն նշվեց Ռուսաստանի հետ Արեւելյան Հայաստանի միավորման 150-ամյակը, Հայաստանը 3-րդ անգամ պարզեցատրվեց Լեւոնի շքանշանով: Բայց թե ժողովուրդն արդեն հոգնել էր կեղծ պատմություններից, անհիմն եւ անարդար «ինտերնացիոնալիզմներից», բայց ինքնիշխանի ուժով «լծացումը» դեռ շարունակում էր գոյատևել, եւ նրան բնորոշ կարգախոսն էր՝ «Շիրակո շազայետ Ազեր-

# Փետրվար...

## Գարուն ա, արեւ ա արեւ...

Արցախահայությունը, իբրև անբակտերի մասը հայության, նույնպես անցավ 19-րդ դարավերջի ու 20-րդ դարասկզբի թուրքիզներով (հատկապես՝ 1918-21թթ.): Հայոց ազգային-ազատագրական պայքարի՝ Արցախի բաժինը կասեցվեց 1921թ. հուլիսի 5-ի Կոմիտրոտի տիրապետչական որոշումով: Սակայն մի՞թե հնարավոր է ժողովրդի կամքը ոտնահարել եւ զսպառարկել մեջ պահել մշտապես... 1923թ. ստեղծված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Արցախի մի հատվածում (անկուշտ հարեւանը միշտ աչք է տնկում ունեցվածքի, ու երբ դատավորը կաշառառու է, պատան-պատան կողոպտում է հողը) պահպանեց իր գոյությունը, շարունակական ցեղասպանությունների պայմաններում (վկա՝ Նախիջեւանը) անաղարտ պահեց իր հայեցի նկատառումը ու մի կերպ խորհրդավոր «տիրոջ», մեղմ ասած, իրաւունքներին, սպասեց իր «աստեղային ժամին», որ գալու էր անպայման... 1988 թվականի փետրվարի 20: Երեւանի Թատերական իրապարակում հարյուր հազար հայաստանցի հայեր՝ առաջին անգամ մայրաքաղաքում հանրահա-

վաքի եկած, սպասում են Արցախից լուրերի. Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի արդյունքներին... «Աղբբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Արցախից ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ անցնելու վերաբերյալ Աղբբեջանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջեւ միջնորդելու մասին, ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին...», ու թնդում է Թատերական իրապարակը հազարաձայն «միացում»-ից, ու երկինք բարձրացած բռունցքներից, թվում է, դողում է մեր մոտ անցյալի ճակատագիրը...

Ու հաջորդ օրը, ու մյուս օրը, ու յոթ օր շարունակ, թվում է, ողջ հայությունն է Թատերական իրապարակում, որ դրանից հետո Ազատության վերանվանվեց: Հայաստանը, թվում է, տեսանելի լարերով մեկ ակնթաթում կապվել է ողջ սփյուռքահայության, ողջ աշխարհի հետ... 100.000, 500.000, 700.000 ու ավելի մարդիկ, հայեր, միական, միաբռունցք իրենց պահանջատիրություն են ավելտում Մոսկվա, Նյու Յորք, համայն մարդ-

կությանը: Ու արձագանքներ ու շարժումներ, թվում է՝ ողջ Եվրոպան մեր միտինգներից է ցնցվում. ոչ մի օրինազանցության դեպք, մի ծաղիկ անգամ չի տրորվել, բժիշկները օգնության են հասնում վայրկենապես, անվճար ուտելիք եւ ըմպելիք են բաժանում... Ու այսպես մի շաբաթում դառնում ենք Միասնական ազգ, Ազատ ժողովուրդ... Այն ո՞վ էր ասում, թե միաբան չենք: Այդ ի՞նչ էր, ուրեմն, հրա՞ջք, մի շաբաթվա մեջ ինչպե՞ս միացանք: Միասին էինք միշտ, ժամը պիտի գար, որ ելնեինք ոտքի...

... Ու միանգամից, մի քանի օր, մեկերկու ամիս, փոխվում է քաղաքը, փոխվում է Հայաստանը, ու Սարոյանը էլ չի ասում, թե՛ հայերը Հայաստանում ապրում են այնպես, ինչպես Ամերիկայում, այսինքն՝ իրենց ապրելով այդ երկիրը Հայաստան չեն դարձնում...

Հիմա Սարոյանը հարցնում է. «Աս բոլորը հայե՞ր են», ու երբ դրական պատասխան է լսում, հրճվում է մանկան պես, իր կիսված սրտի սման մի օր իր հայրենիքն էլ է միացյալ դառնալու, ու բացականչում է. «Ապա մի փորձեք կործանել այս ցեղը, ասացե՛ք՝ դարձյալ 1915 է՛ն, ու աշխարհի աչքը պատերազմի ծխով բռնված: Կործանեցե՛ք Հայաստանը, տեսե՛ք՝



Կկարողանա՞ք: Իրենց շեն տներից քչեք նրանց անապատ: Չմոռանաք խել ձեռքների հացն ու ջրի վերջին ունայր: Իրենց ու իրենց Աստծո տները վառեցեք: Տեսե՛ք, թե նրանք դարձյա՞լ չպիտի ապրեն: Տեսե՛ք՝ ցեղը դարձյա՞լ չպիտի հառնի, երբ նրանցից երկուսը իրար գտնեն մի գարեջրատան մեջ, թեկուզ տասը, թեկուզ հարյուր տարի հետո, եւ խնդան ու խոսեն իրենց մայրենի լեզվով: Ջանացեք, տեսե՛ք՝ կարողանա՞ք պիտի, շանոր-

դիներ, արգելել նրանց, որ չծաղրեն ձեր մեծ-մեծ ճոճուս գաղափարները, որ աշխարհում երկու հայ չխոսեն իրար հետ, փորձեք ջնջել նրանց... Փետրվարը, լինելով արթնացած հայոց ոգու վառ արտահայտությունը, ինչ-որ մի տեղ դեռ արտաքին հուզական փայլ էր լույ, ձեւ, որ անպայմանորեն պայմանավորեց եւ բովանդակությունը, առջեւում Գործն էր, որ արդեն ունեցավ իր առաջին շոշափելի արդյունքները:

# Ազատագրում...

## Պիտի կերտեք նոր արշալույս

Ղարաբաղյան շարժմանն ի պատասխան՝ արթնացանցիները կազմակերպեցին հերթական ցեղասպանություն Սոււմայիթում: Նույն ծանոթ ձեռագիրը. թուրք խուժանը հագուրդ է տալիս իր արնախումբ բնագրին՝ իր իշխանության սցենարով... Աղբբեջանի հայաշատ բնակավայրերից կրկին ելան գաղթականների քարավաններ: Թալանված, հալածված, մազապուրծ բազմաթիվ հայեր (հարյուր հազարավորներ՝ միայն Բաքվից) մի կերպ հասան Հայաստան՝ ճանապարհին թողնելով ոչ միայն տասնամյակների աշխատանքով ձեռք բերված ունեցվածք, այլեւ հարազատների մարմինները... Մի՞թե կրկնվելու էր պատմությունը...

Մինչ Հայաստանում քաղաքական նորագույն խնդրումները ձեւավորում էին ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը, 1988-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժը հերթական անդամներ էր աղետը բերեց հայ ժողովրդի գլխին... Բայց, օ՛՜ ճակատագիր. 1915-ից երեք տարի անց՝ 1918-ին հիմնադրվել էր Առաջին Հանրապետությունը, եւ ահա, 1988-ի աղետից դարձյալ երեք տարի անց, 1991-ի սեպտեմբերի 21-ի հանրաքվեով հիմնադրվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: Մինչ երկրի պատրաստվում էր պետական շինարարության, ազերի վայրենի սանձազերծեց պատերազմ արցախահայության դեմ՝ նախահարձակ լինելով նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Սակայն, ի հեճուկս թշնամու, 1992-

94թթ. տեղի ունեցած մարտական գործողությունների հետեւանքով ազատագրվեց Արցախի մարզը՝ հարակից շրջաններով... Սարդարապատից 74 տարի անց ճակատագիրը մեզ արտոնեց հպարտանալ մի նոր՝ Շուշիի հաղթանակով: Հաղթանակը ձեռք բերվեց հայ ազատամարտիկների արյան գնով: Կնքվեց զինադադար... Սակայն պատերազմը դեռ ավարտված չէ: Արցախի հիմնախնդիրը, որ համայն հայության կենսականն է ու Հայկական հարցի մերօրյա առանցքային բովանդակությունը, լուծված չէ իրատեսությամբ, եւ ազատագրումը դեռ վավերացված չէ միջազգային իրավական դաշտում... Մասնավաճ, որ ոտնից դեռ վնգստում է... Արցախյան ազատամարտը ընթացավ անկախացած երկրի վերաշի-

նության առաջին քայլերին զուգահեռ: Անկախության խորհրդանիշները, պետականության հիմնական հաստատությունները մեկը մյուսի ետեւից դարձան իրողություններ: Տարիներ անց մի նոր աղետ՝ 1999-ի հոկտեմբերի 27-ը փորձեց կասեցնել ստեղծագործ աշխատանքով երկրի վերականգնման գործընթացը... Սակայն, ի պատիվ ժողովրդի, իշխանությունների ու ընդդիմության, ճգնաժամը հաղթահարվեց... Տարածաշրջանում ամենաժողովրդավարական հասարակությամբ, դեռեւս ամենամարտունակ բանակով, վերականգնվել սկսվող ու զարգացող տնտեսությամբ եւ, ամենակարեւորը, համազգային միասնությամբ՝ Հայաստանը քայլ առ քայլ ամրանում ու մոտենում է իր ապագային:




# Երկու ծաղկով գարուն

## Իմ նոր Հայրենիք, Հզոր Հայրենիք...

Հայաստանը արեւելյան եւ արեւմտյան հատվածների առաջին անգամ բաժանվեց 387թ.-ին (Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ): Ծիշտ է, հետագայում տարբեր վարչական բաժանումներ ունեցավ Հայաստանը, վերականգնեց պետականությունը իր պատմական հայրենիքում (922-1045, Բագրատունյաց հարստություն), սակայն այդ, ասես, ճակատագրով նախասահմանված սահմանագիծը այդպես էլ չանհետացավ հայոց երկրի ու քարտեզի վրայից: Հետագայում Բյուզանդիային փոխարինեց Օսմանյան Թուրքիան: 1828 թվականին Արեւելյան Հայաստանը միավորվեց Ռուսաստանին: Արեւմտյան Հայաստանը դատապարտվեց կործանման: 1895-1923թթ. ցեղասպանություններից հետո Արեւմտյան Հայաստանը ամառացավ գրեթե ամբողջապես, արեւմտահայությունը սփռվեց աշխարհով մեկ՝ ստեղծելով նոր գաղթօջախներ եւ կամ ստվարացնելով նախկինում եղածները: Հայության երկու հատվածները արդեն կոչվեցին, դարձան Սփյուռք ու Մայր Հայրենիք...

Սեզ բաժանել են, որ տիրեն: Մենք գոյատևելու ենք մեկս մյուսով: Առանց Մայր Հայրենիք՝ Սփյուռքը դատապարտված է ուժեղացման: Առանց Սփյուռք՝ Հայրենիքը տկար է եւ միայնակ: Այսօր մենք արդեն ունենք միասին լինելու գիտակցությունը: Չէ, ոչ երկրաշարժը, Արցախյան շարժումը, ազգային Ջարթոնքը բերեց մեզ մեկ ժողովուրդ, մեկ հավատ, մեկ լեզու, մեկ հայրենիք ինքնագիտակցությամբ: Ղարաբաղը արթնացրեց Սփյուռքին, իսկ մեզ հուշեց՝ նրան պահպանելով նրան ապավինելու կարելությունը: Երկրաշարժը, որ ցնցել էր արդեն իսկ ողջ աշխարհը, սրտահույզ գթասրտության ալիք տարածեց սփյուռքով մեկ. այդ ինչպե՞ս, ուրեմն մեր հայրենիքը կարող է եւ չլինե՞լ... Ու Ղարաբաղով արթնացած սփյուռքահայոց ոպից շարժեց նաեւ սիրտը սփյուռքահայոց... Անշուշտ, դա այդպես է: Բայց մեզ միացնողը, ավելի ճիշտ՝ մեր միջեւ եղած անջատումները (մի ազգի երկու մասերի միջեւ «ջերմ կապեր») հասկացությունն անգամ սառն է հնչում) վերացնողը եղավ մեր ազգային Ջարթոնքը: Նորից վերարթնացան հայոց երազները, հայոց իղ-

ծերն իրագործելի ծրագիր դարձնելու ելքեր որոնվեցին: Հայոց դատի պահանջատիրությունը որչափ Սփյուռքինը, նույնքան եւ ավելի դարձավ Մայր Հայրենիքինը: 1992-94 թթ. եւ ապա 2016թ. ապրիլի 2-5-ը Արցախյան ազատամարտում տարած մեր փայլուն հաղթանակներն ամրապնդեցին Արցախի անվտանգությունը՝ աննախադեպ ոգևորություն պարգեւելով աշխարհասփյուռ հայության բոլոր հատվածներին եւ մեզ դարձնելով պատմականորեն միասնական ազգ նաեւ նոր ժամանակներում (բացառյալ վերջին դավադիր պատերազմը եւ մեր առեղծվածային պարտությունը): Երբ միասին ենք, հաջողություններն ակնհայտ են: Մասնավաճ, որ հասկացել ենք, որ պիտի ապավինեց միայն մեր սեփական ուժերին... Սփյուռքի եւ Մայր Հայրենիքի միացյալ ուժերով պիտի ամբողջացա մեր կիսատված տունը, շենանա Թումանյանի երազած մեր «Նոր հայրենիք, հզոր հայրենիք...»:



պիտի գա: Հայրենիքի ու Սփյուռքի՝ ամեն ձեռնարկ ու խնդիր լուծելիս միշտ միասին լինելու դիրքորոշմամբ կկարողանանք հասնել Հայ

դատի պահանջատիրության ցանկալի հանգրվանին եւ, ի վերջո, լուծել Հայկական հարցը:

Գ. Ս.

# Համընդհանուր խռովքի թելադրանքով Կամ՝ մի քիչ թվաբանություն

սկիզբը՝ էջ 4

**Դու արդեն ելել ես Ազգավարից:** Վկա՝ Քո 25-ամ-  
յա անկախությունը: Ե՞րբ պիտի մոռանաս «բարեկամ»  
օտարի գոյությունը, որպեսզի այլևս երբեք չպարտվես  
ոչ բարեկամ օտարներին... Թույլ տուր՝ հավատամ, որ  
այսօր, ապրիլյան այս վերջին քառօրյա պատերազմում  
Քո հերթական հաղթանակից հետո, Դու վերջնականա-  
պես սթափվել ես Քո հազարամյա նիրհից ու Քո **արքա-  
յական** արժանապատվությամբ քայլ առ քայլ վերա-  
կանգնելու ես նաեւ Քո **Մեծ Հայրենիքը**: Քո՛, միայն Քո  
մտքով, ու Քո, միայն Քո բազկի ուժով, ամբողջությամբ,  
առանց որեւէ զիջումի, որովհետեւ Դու Քո բոլոր զիջում-  
ներն արել, ապրել ու սպառել ես արդեն հազար տարի...

... Տասը տարի առաջ՝ հունվարի առաջին օրերին,  
լրատվամիջոցները տեղեկացրին ադրբեջանցիների  
հերթական բարբարոսական արարքի մասին... ցու-  
ցադրվում էին Իրանի տարածքից նկարահանված կադ-  
րեր, որոնցում ազերի զինվորները հսկա մուրճերով  
ջարդուխորդ էին անում հայկական մշակույթի վերջին  
բեկորները՝ նախիջեւանյան 10.000 խաչքարերի վերջին  
մասունքները... Քանի՞ եկեղեցի, քանի՞ խաչքար, հայ-  
կական մշակույթի քանի՞ անգին վկայագիր է ոչնչացվել  
1920-ից ի վեր... Ո՞վ է հաշվել: Այդ թվականից սկսած  
ռուս բոլշևիկների կողմից արհեստականորեն ստեղծ-  
ված Ադրբեջան վարչական միավորին բռնակցված Նա-  
խիջեւանում (փառք Աստծո, Արցախն այսօր ազատագր-  
ված է) քանի՞ հայ է սպանվել, տարհանվել... Պատմագի-  
տական տվյալներն ու իրողությունները չթվարկեցրե-  
ցան: Մանավանդ որ պատմությունը չունեցող եւ այդ պատճա-  
ռով էլ պատմագիտություն չսիրող մեր սինվերո թշնամու  
մի ներկայացուցիչ (հիշո՞ւմ եք 80-ականների վերջերին  
ազերիների գրողների միության Անար անունով նախա-  
գահին) կարող է բարբառել, թե հայերը մազդիսիստ են...

«*Լավը չես, խեղճ ես, լավը չես, զավակս, որդիս,  
առաջնեկս, իմ հույսս, իմ թանկս, լավը չես, մեջդ վրեժ  
չկա... Ինչ իմացողի հարցնում եմ՝ գովում ու ծիծաղում է  
- իբր թե լավն ես, խղճով ես, եւ եղ ծիծաղն իմ սրտին դա-  
նակ է դառնում, զավակս, զավակս... մարդ չպիտի էն-  
քան քաղցր լինի՝ որ կուլ տան ու չպիտի էնքան դառը լի-  
նի՝ որ թքեն: Քեզ կուլ են տվել ու գովում են, զավակս,  
քեզ կուլ են տալիս: Ասում են խիղճ, բայց խիղճը գիտե՛ս  
երբ է խիղճ - երբ գազանի մեջ է: Քոնը խիղճ չի, խեղճու-  
թյուն է», - ասում է Զրանտ Մաթեոսյանը... Ինչո՞ւ խղճա-  
ցիկը: Պահը եկել էր՝ դարավոր ոսոխի այդ մի հատվածը  
աշխարհի երեսից ի սպառ ջնջելու... Էլ ինչո՞ւ ենք պաշ-  
տում **Նժդեհին**. «Ուժն է ծնունդ իրավունք», եթե չպիտի  
լինենք նրա պես վճռական: Էլ ինչո՞ւ ենք հպարտանում*

պատմությամբ ու հիշում պատմահորը. «Սահմանք քա-  
ջաց՝ զենք յուրյանց», եթե... շիրմաքար պղծողին պետք  
է պարզապես ոչնչացնել... Լույս իջնի հոգուդ, **Խրիմյան  
Հայրիկ**, «երկաթե շերեփի» Քո դասը դեռ չենք սերտել  
ինչպես որ հարկն է ու դարձյալ ապավինում ենք թղթե  
«շերեփներին»... Մինչեւ ե՞րբ...

Մշակութային այդ եղեռնագործությունից օրեր անց  
հայ սպային Եվրոպայի կենտրոնում կացնահարած  
սինվերո մարդասպանին Ադրբեջանը հռչակեց տարվա  
մարդ... Ի՞նչ մարդ... Իր հավաքական ամբողջության  
մեջ լույսի թշնամի, խաղաղության հակոտնյա ոսոխը  
(թուրք, թե ազերի) չի կարող հանդուրժել եւ ոչ մի **բարի  
գոյություն**՝ անգամ իր տիրապետության ներքո... Իր  
**չար** բնույթը թույլ չտվեց հանդուրժել անգամ նախիջե-  
ւանյան խաչքարերի վերջին փշուրների լուռ վկայությու-  
նը իր **գողացած տարածքում**... Ո՞րը թվարկել եւ ինչո՞ւ  
թվարկել: Ամեն օր, ամեն ժամ իր վայրագ դեմքը թաքց-  
նել անգամ չփորձող գազանը եղել եւ մնում է վտանգա-  
վոր, քանի դեռ ոչնչացված չէ **ի սպառ**...

... Ուզենք, թե չուզենք, մենք ականա մերքաշված ենք  
մեծ պատերազմի մեջ: Այն սկսվել է 1000 տարի առաջ,  
երբ առաջին անգամ թուրք տարրը մտավ Հայկական  
Լեռնաշխարհ: Չենք ուզեցել, չէ՞, բայց նա տարիներով,  
դարերով խնել է մեր արյունը, մեր հայրենիքում ստեղ-  
ծել է պետություն, երկիր, ոչնչացրել է մեզ ու մեր ստեղ-  
ծած քաղաքակրթությունը 1000 տարի՝ ընդհուպ մինչեւ  
ցեղասպանություն... 1000 տարի մեր խաղաղասեր եու-  
թյան թելադրանքով մենք մեզ միշտ խաբել ենք, թե պա-  
տերազմն ավարտվել է, թե վերջապես մեզ բաժին մնա-  
ցած այս մի փշրանք հողակտորի վրա գոնե կարող ենք  
ապրել ու ստեղծել խաչով ու գրչով, բաժով ու մուրճով,  
մտքով, քանքարով...

Ավա՛ղ... պատմության դասերն այդպես էլ մինչեւ  
վերջ չենք սերտում ու մերթնդմերթ ստիպված ենք լի-  
նում ինքներս մեզ հիշեցնել, որ ազգերի միջեւ, ինչպես  
բնության մեջ, գործում է **գոյության կռվի սկզբունքը**:

Մանավանդ, որ գողը մտել է տունդ, դու, ուզես, թե  
չուզես, նա գիտի, որ գող է, նա վախենում է քեզանից:  
Որքան էլ դու մոռանաս, նա չի մոռանում, վախից կծում  
է... անընդմեջ, անընդհատ, ամեն անգամ, երբ երախը  
հասնում է կրնկիդ... Իսկ դո՞ւ... «Թե՞ էղքան դուրեկան է  
ծնկներն օջախին դեմ անել, ժպտալով ննջել ու հուսալ  
ու հավատալ, թե աշխարհը բարի է», - դարձյալ ասողը  
Զրանտն է... Չգիտեմ... Գուցե ավելո՞րդ են զգացական  
այս դատողությունները, որ կարող են լինել ու կան յու-  
րաբանչյուր հայի գիտակցության մեջ: Բայց ինչո՞ւ մեր

փորձը, մեր քաջությունը, մեր հայրենասիրությունը, մեր  
ազատասիրությունը արդեն 1000 տարի չեն դառնում  
թշնամուն չներող ու արժանի հարված հասցնող իրա-  
կան ուժ (բացառյալ աստեղային ժամերին դրսևորվող  
բռնկումները): Նույնիսկ Արցախն ազատագրելուց հետո  
էլ (կարծես թե մեղավոր ենք եղել, որ հաղթել ենք մեր  
դեմ սրով ելածին) մեր ենթագիտակցության մեջ երբեմն  
գլուխ է բարձրացնում փոխզիջման գաղափարը: Ի՞նչ  
փոխզիջում, Տե՛ր Աստված... Հաղթողին չեն դատում:  
Իսկ եթե փորձում են դատել, հաղթողը կրկին է հաղ-  
թում... ու այնքան, մինչեւ որ այլևս չեն դատում...

Ուզենք, թե չուզենք, քնենք, թե արթուն մնանք, թշնա-  
մին չի՛ քնում երբեք: Ուրեմն, ուզենք, թե չուզենք, ստիպ-  
ված ենք լինել զգոն, արթուն, արագ եւ համապատաս-  
խան հարված հասցնող... «Ուժեղի մոտ միշտ էլ թույլն է  
մեղավոր»... Հերիք է, որքան արդար եղանք, փորձենք  
լինել նաեւ ուժեղ: Այլընտրանք չունենք: Պատերազմը  
չի՛ ավարտվել: Իսկ եթե պատերազմ է, չխաբվենք զինա-  
դադարներին: Պատերազմի ժամանակ իրավունքի՛ խն-  
դիր չկա, կա միայն հարվածելու, ամեն գնով ու միջոցով  
թշնամուն ոչնչացնելու խնդիր: Մանավանդ որ հակա-  
ռակորդը հենց այդպես էլ վարվում է մեզ հետ արդեն  
1000 տարի:

1994 թվականին կնքված զինադադարից հետո Աստ-  
ծո գրեթե յուրաքանչյուր օր այն խախտվել է՝ ընդհուպ  
մինչեւ 2016-ի ապրիլյան ուխտադրուժ հարձակումը, որ  
եւ անսպասելի էր, եւ սպասելի... Պետք չէ զարմանալ,  
առավել եւս՝ վրդովվել: «Գորշ գայլը» իր կաշին չի փո-  
խել արդեն հազար տարի: Եվ արդեն հազար տարի պա-  
տերազմ է հայտարարել մեզ եւ գործում է՝ ինչպես պա-  
տերազմում: Եվ պետք է իրերին նայել, առավել եւս՝ հա-  
կառակորդի հետ մեր հարաբերություններն ընկալել ոչ  
թե մեր խաղաղասեր ոգու տեսանկյունից, այլ պատկե-  
րացնել եւ ետադարձել՝ ինչպես պատերազմում:

Աշխարհը փոխվում է: Փոխվում են հարաբերություն-  
ների ձևերը, բայց մնում է մրցակցությունը, գոյության  
կռիվը... Փոխվում են պատերազմի զենքերը, բայց չի  
փոխվում թշնամին, մանավանդ, եթե գոյատևում է քե-  
զանից զավթած քո հայրենիքում եւ պիտի քեզ հարվա-  
ծի՝ քանի դեռ դու կաս, եւ քանի դեռ ինքը պարտված չէ  
վերջնականապես:

**Զա՛րկ, լաո, զարկողին՝ զա՛րկ:  
Պատերազմում՝ ինչպես պատերազմում:**

Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ

«Կրթություն», թիվ 17, 20.04.2016 թ.



Փոճի՛ր մտապահել

սկիզբը՝ նախորդ համարում

144) Մրջյունի թվաքանակ «Բանականությունը» Հավաքական մտածողություն



Կենդանի եակների թվաքանակը բանականության անենահետաքրքիր օրինակներ կարելի է հանդիպել միջատների մոտ: Մեծ տարածություններում է գործում մրջյունների, կրեմների ու մեղուների ընկերակցություններ կազմելու, սննդի հետապնդող արջուրների մասին միմյանց տեղեկացնելու, թշնամիների հարձակումները կույտի մեջ տեղադրելու ընդունակությունը: Դարեր շարունակ համարում էին, որ այդ միջատները կարողանում են միլիոնավոր սերունդների ընթացքում հաստատված բնազոյաին ժառանգականությամբ: Հասուն միջատն իր կյանքի ընթացքում այլևս չի կարող հարմարվել նոր, չնախատեսված հանգամանքներին: Նրանք միայն մեխանիկորեն կրկնում են այն, ինչ մեկընդմիջտ մտցված է նրա խիստ ծրագրավորված ուղեղի մեջ:

Իսկ ահա առեւտների, մարդանման կապիկների, շների, ձիերի ու դելֆինների ուղեղում եղած ծրագրերը ոչ թե մեկընդմիջտ հաստատված, այլ ճկուն են, եւ այդ կենդանիները կարող են համարվել վարժեցվող ու արտաքին միջավայրի փոփոխություններին հարմարվող: Այդ դեպքում կենդանիների բնազոյները ծրագրավորված են գեներով եւ դրսեւորվում են կենդանու անհատական զարգացման ընթացքում՝ անկախ կենդանու փորձից:

Այժմ մի քիչ մարդու ուղեղի մասին: Մարդու ուղեղի չափերը անփոփոխ է մնացել վերջին 100000 տարում: Իսկ մինչ այդ այն աճել է: Առաջին նկատելի «այաթյունը» եղել է մոտ 2 միլիոն տարի առաջ, երկրորդը՝ 500000 տարի առաջ: Իսկ 3 հազար տարի առաջ ուղեղը հանկարծ սկսել է փոքրանալ: Ինչո՞ւ: Էվոլյուցիայի հանելուկն է: Չարմանալի է, բայց ապացուցված փաստ. ժամանակակից գրագետ մարդու, օրինակ՝ գիտնականի ուղեղը ավելի փոքր է, քան նրա նախապատմական նախնունը, որ վազում էր մամոնտի ետեւից:

Գիտնականները կարծում են, որ պատճառը կոլեկտիվ մտածողությունն է: Պետք է այլևս ամեն ինչի համար սեփական միտքը լարել. կա հավաքական մտածողություն, կա մարդկության կուտակած փորձ, գիտելիքով փոխանակվելու հնարավորություն: Մարդկանց խումբը միշտ ավելի խելացի է, քան անենախելացին այդ խմբում:

Ուղեղը փոքրացել է, դառնալով ավելի խնայող: Էներգետիկ տեսանկյունից ավելի ձեռնտու է հենվել կոլեկտիվ բանականության վրա, քան սեփական խելքի: Նման ֆենոմեն կա միջատների մոտ: Նրանք հաստատ խելացի են իրենց կոլեկտիվ խելքով: Դիտումները ցույց են տալիս. ինչքան մրջյունանոցն ավելի կազմակերպված է, այնքան ուժեղ է այնտեղ աշխատանքի բաժանումը, այնքան փոքր է նրա բնակիչների, գլխավորապես՝ աշխատավոր մրջյունների ուղեղը:

Բանաստեղծներն են հուշում

Սոցիալապես մարդիկ այնքան էլ չեն տարբերվում մրջյուններից. եւ մենք, եւ նրանք ունենք աշխատանքի բաժանում, դրա արդյունքների պաշտպանություն, սննդի համատեղ արտադրություն (պաշարների կուտակում), լուծումների խմբային ընդունում: Մրջյունները միշտ են այդպիսին եղել, իսկ մարդիկ այդպիսին են դարձել վերջերս՝ 12000 տարի առաջ, որին նախորդող փուլը տեւել է մոտ 2,6 մլն տարի:

...Նկարում՝ մրջյանոց: Մրջյունները զարգացած բնազոյներով հասարակական միջատներ են: Մրջյունների գաղութը սովորաբար կազմված է ձու ածող մեկ կամ մի քանի էգերից («բազուկիներ»), սեռապես չզարգացած բազմաթիվ էգերից («աշխատավորներ») եւ թեւավոր արուններից ու էգերից («աշխատավորներ»): Վերջիններիս վրա են դրված բույն կառուցելու, սնունդ հայթայթելու, մատղաշներին կերակրելու, թշնամիներից պաշտպանվելու պարտականությունները: Մրջյունները երբեք չեն քնում:



Կրետներ: Մեզքը՝ բարակ, իրանը՝ մուրք ու տարբերակող թաղանթաթեւավոր խայթող այս միջատը հստակորեն այսպիսի գործողությունների շարք է կատարում. որտեղ է դաշտային ծղրիղ, բայց չի սպանում, այլ միայն կաթմածահարում է իր խայթոցով: Ծղրիղին իր բնիկը մտցնելուց առաջ կրետը նրան թողնում է մուտքի մոտ եւ ինքը մտնում ներս: Ապա նա դուրս է գալիս ու ներս տանում ծղրիղին: Եթե նրա բնիկում գտնվելու ժամանակ փոքր-ինչ տեղաշարժվե մուտքի մոտ թողած ծղրիղին, ապա նա, բնիկից դուրս գալուց հետո ծղրիղին կբերի-կհասցնի բնիկի մոտ, ինքը ներս կմտնի եւ դա կկրկնի ինչքան անես շատ անգամ, եթե ծղրիղին բնի մոտ չգտնի՝ ներս տանելու համար. այսինքն՝ չի հիշի իր նախորդ գործողությունը:

145) Պատահականությունն արվեստում

«...Պատահաբար են պատահում կյանքում, Անհրաժեշտաբար հրաժեշտ տալիս»:

«Անհրաժեշտությունն այն է, ինչ որոշ պայմաններում անխուսափելիորեն պետք է կատարվի: Պատահականությունն իր հիմքերն ունի ոչ թե տվյալ երեւույթների փոխազդեցության մեջ»:

Հայկական հանրագիտարան

1. Նախ դիտարկենք անկենդան բնության ստեղծածը: Դիտարկենք մեկ օրինակ՝ ծյունափաթիլը: Թեպետ չկան երկու բոլորովին նման փաթիլներ, բայց դրանք բոլորն ունեն ինչ-որ ընդհանուր բան: Հետեւաբար, փաթիլների գոյացումը ենթարկվում է որոշակի կանոնի, չնայած վերջինս ենթակա է պատահականությունների անթիվ բազմությունը: Ատոմների միջեւ գործող ուժերը սառցի բյուրեղների մոլեկուլներին միավորում են միակ ձեւով, այնպես, որ թվածնի ու ջրածնի ատոմները պետք է կազմեն կանոնավոր քառանկյաններ: Այդպիսի քառանկյանների միավորման դեպքում

ստացվում են սառցի պարզագույն բյուրեղներ, որոնք մոլեկուլյար ուժերի շնորհիվ ստացվում են վեցանիստի ձեւով:

Եթե բյուրեղների գոյացման եւ աճի պայմաններն առանձնապես բարենպաստ են, դրանց ձեւը դառնում է կայուն եւ ստացվում են խոշոր վեցանիստ բյուրեղներ: Բայց այդպիսի պայմաններ հազվադեպ են լինում: Փաթիլների ձեւավորման պրոցեսում, պայմանների (օրինակ՝ ջերմաստիճանի կամ խոնավության) պատահական փոփոխություններից կախված, տարրական բյուրեղներն իրար են միանում ամենաբազմազան ձեւերով: Այնուամենայնիվ, բյուրեղների մոլեկուլների ու ատոմների միջեւ միշտ կան կարգավորված փոխազդեցություններ, եւ դա իր կնիքն է դնում վերջնական արդյունքի վրա. յուրաքանչյուր փաթիլ ունի վեցառանցք համաչափություն:

Ամեն մի փաթիլի նրբագեղ ձեւը տարրերի ներդաշնակ կապակցությունը պայմանավորող ֆիզիկական ուժերի կարգավորված ազդեցության, ինչպես նաեւ նրա գոյացման ժամանակ եղած պատահական պատահարների շղթայի առաջացրած խառնաշփոթության արդյունքն է: Փաթիլի գեղեցկությունը ներդաշնակ համաչափության եւ պատահականությունների առաջացրած կարգավորվածության ու բազմազանության մեջ է:

2. Այժմ քննարկենք, թե ինչպես «ընտրության կանոնների» օգնությամբ կարելի է համակարգչային տեխնոլոգիաներով տարրերի քառույց ստեղծել ինչ-որ կարգավորված, ժամանակակից քանդակ հիշեցնող մի բան:

Դիցուք ունենք հատուկ արկղում խառնվող մի քանի տասնյակ մետաղյա սնամեջ խորանարդներ: Եթե խորանարդների միջեւ ձողակալան ու վառողական ուժերը չկան, ապա արկղը թափահարելով ու հետո այն բացելով, կտեսնենք խորանարդների մի անկանոն կույտ: Դրանցից մի քանիսը կարող են պատահաբար շարված լինել իրար վրա: Բայց պատահականության դերն այստեղ այնքան մեծ է, որ այդ կույտի մեջ որեւէ կարգավորվածություն գտնելն անկարելի է:

Սակայն, կարելի է անկախ կերպով մագնիսացնել խորանարդի ամեն մի նիստն այնպես, որ նիստերից մի քանիսի մագնիսական ուժազդերն ուղղված լինեն դեպի դուրս, իսկ մյուսներինը՝ ներս: Եթե նիստերը մագնիսացնենք այնպես, որ յուրաքանչյուր խորանարդի երեք կից նիստերը մագնիսացված լինեն դեպի դուրս, իսկ մնացածները՝ դեպի ներս, ապա կունենանք ընտրության մի կանոն, որի համաձայն հարեւան խորանարդներն իրար կմիանան այնպես, որ կից նիստերը կունենան մագնիսական հակադիր ուղղություն: Խորանարդների առանձին խմբեր իրար կմիանան կախված յուրաքանչյուր խմբի խորանարդների արտաքին նիստերի մագնիսացվածություն ուղղությունից:

Եթե այդ ձեւով մագնիսացված խորանարդները լցնենք արկղն ու խառնենք, ապա կծագի կարգավորված կառուցվածք, որը կբավարարի վերացական քանդակագործության պահանջները: Ընդ որում, եթե ցնցենք արկղը, կստեղծվի մի նոր տարբերակ, եւ այդպես շարունակ:

3. Անձեռակերտի ու ձեռակերտի նմանությունը:

Մագնիսացված խորանարդների այսպիսի խմբի գոյացման եւ փաթիլի գոյացման պրոցեսների միջեւ եղած համանմանությունն ակնհայտ է: Երկու դեպքում էլ կառուցվածքի հիմքում ընկած են պարզ տարրեր, երկու դեպքում էլ տարրերի միջեւ գործում են այդ տարրերի հնարավոր միացությունները սահմանափակող ուժերը, երկու դեպքում էլ կառուցվածքի վերջնական ընտրությունը պատահական է եւ երկու տիպի կառուցվածքներն էլ պատկանում են



գոյացումների այն դասին, որում միաժամանակ երեւում է թե համաչափությունը եւ թե տարատեսակությունը: Այս իմաստով երկու կառուցվածքներն էլ կարելի է արվեստի գործեր անվանել:

4. Այլ «պատահական» գեղեցկություններ:

Մեզ շրջապատող աշխարհում կարելի է նման շատ օրինակներ գտնել: Գեղանկարիչներն ու կոմպոզիտորները կանխամտածված ձեւով իրենց ստեղծագործությունների համար ընտրում են երկրաչափական համակցություններ, այնուհետեւ դրանք մշակում այնքան, մինչեւ հասնում են «բավարար» արդյունքի: Որպես օրինակ՝ կարող է ծառայել կուբիզմը: Կամ Ի. Ս. Բախի այսպես կոչված «հայելային» ֆուգաները, որոնց հորինման ժամանակ օգտագործվել են ձայնանիշների գրության երկրաչափական ուրվագծումները, որոնք այնուհետեւ, տակտ առ տակտ, ձայն առ ձայն «վերածվել են» այնպես, որ ստացվեն դրանց հայելային արտապատկերումները: Այդ ֆուգաները լոկ գվարճանք չեն: Հակառակ դեպքում Բախը դրանք չէր հրապարակի: Ձայնանիշերի որոշակի հաջորդականությունների հորինման պրոցեսը հիմնված էր հայելային արտապատկերման սկզբունքի վրա: Բայց միայն հանճարը կարող է ըստ արժանվույն գնահատել ստացված արդյունքը:

...Նկարում՝ Պիտ Սոնդրհան, «Կարմիր ծառ» (1909թ.): Նկարիչը նկարում էր իրատեսություն, առավել վառ գույներով ու պարզեցված ուրվագծերով: Համարվում է վերացական կուբիզմի գործ: Կուբիզմը սկիզբ է առել Պոլ Սեզանի այն մտքից, որ նկարիչը աշխարհին պետք է նայի գնդի կամ քառակուսու միջով:

146) Պի (π) թվի հմայքը

π թիվը մաթեմատիկայի մեծագույն առեղծվածներից մեկն է: Ներհայեցողությունը հուշում է, որ որեւէ շրջանագծի երկարությունն ու տրամագիծը իմացության համար հավասարապես մատչելի մեծություններ են: Թվում է, որ առանց էվկլիդեսի պոստուլատներից հակասելու՝ կարող ենք շրջանագիծը պատկերել որպես փռված ուղիղ գիծ: Բայց այդպիսի պատկերացումը խաբուսիկ է: Չէ որ եթե դա մեզ հաջողվեր, ապա մենք կստանայինք երկու ուղիղ գծեր՝ շրջանագծի փռվածքն ու տրամագիծը, որոնց երկարությունները հավասարապես որոշելի կլինեին, իսկ այդ երկարությունների հարաբերությունը վերջավոր քանակությամբ թվանշաններ պարունակող մեծություն կլիներ: Սակայն շրջանագծի երկարության հարաբերությունը տրամագծին այդպիսի թիվ չէ: π ստառվ նշանակվող այդ հարաբերությունն անվերջ թվով տասնորդական միջեր է պարունակում եւ պատկանում է իռացիոնալ կոչվող թվերի դասին: π թվի այդ արտասովոր հատկությունը հուշում է այն մասին, որ կոր եւ ուղիղ գծերի երկարության բացարձակ ճիշտ համեմատությունն անհնարին է: Այդպիսի համեմատությունը միշտ էլ մոտավոր կլինի: Ահա թե ինչու մենք π թվի հմայքը:

Հարունակությունը՝ էջ 13

# Բանաստեղծներն են հուշում

սկզբը՝ էջ 12


Կա այսպիսի գիտական վարկած. Երկրի մակերեսային հորիզոնական եւ ուղղահայաց ուղղությամբ մասնատված ձեւերի բոլոր համակցությունները՝ բարձրություններ, իջվածքներ, սարահարթեր, լեռներ, դաշտավայրեր, իրար հետ կապված են  $\pi$  թվի միջոցով:

Բայց մի՞թե կա ինչ-որ մեկ օրենք, որով ծնվում են ռելիեֆի ձեւերը: Արդյո՞ք դրանք Երկրի ներքին էներգիայի, քամու, ջրի, տաքի ու պաղի հետեւանք չեն: Թե՞ ռելիեֆի բոլոր ձեւերը ալիքային պրոցեսների արդյունք են:

Այդ դեպքում  $\pi$ -ն դառնում է այդ ալիքային պրոցեսների քվանտ: Երկրի ռելիեֆի ու կառուցվածքի քվանտ: Երկրակեղևը բաբախում է: Դյունները, բարխանները, լեռները, օվկիանոսային իջվածքները՝ քարացած ալիքներ են:

Ռուս գիտնական Վ. Պիտորովսկին կարծում է, որ շան գլուխը թաղված է Երկրի շառավղի մեջ: Չէի՞ն կարող բոլոր ալիքները տարածվել միայն մակերեսային: Հնարավոր է, որ դրանք եկել են Երկրի խորքից ու պատկի են նրա շառավղին: Պիտորովսկին կարծում է, որ Երկիրն ու շրջապատող տիեզերքը կառուցված են մեկ միասնական օրենքով, որի հիմքում ալիքային պրոցեսներ են: Այդ օրենքը պայմանականորեն կարելի է անվանել  $\pi$  թվի օրենք:

Մի հետաքրքիր դիտարկում: Հայտնի վարպետների՝ Ստրադիվարիուսի, Գվարներիուսի եւ այլոց գործիքներում ջութակի կորպուսում կարելի է առանձնացնել որոշ «օղի ծավալ»: Այդ «գունդը» ուղիղ երեք անգամ է տեղավորվում գործիքի երկու ռեզոնատորներում: Ջութակի վարպետները գործիքը չէին պատրաստում իրենց պատկերացրած չափից ոչ մեծ, ոչ փոքր. «*էտալոնային*» ծավալը մեջտեղում, եւ 3 այդպիսի ծավալներ աջից ու ձախից. նորից 3, օրգետեւ 3,14:



Ջութակի թեմայով հեշտ է երեւակայել: Ենթադրենք, օրինակ, որ ձայնային ալիքներն ավելի լրիվությամբ են տալիս իրենց էներգիան այն ժամանակ, երբ տարածվում են օղից մի ծավալում, որը 3 անգամ ավելի մեծ է, քան այն, որում ծնվել են: Թերեւս սա է պատճառը, որ ջութակն ավելի կատարյալ գործիք է համարվում, նրանով հնչող երաժշտությունն էլ՝ ընտիր:

Արևի թռիչքի կորը, վառողի այրման կախումը ճնշումից, գազային թթվածնի մոլեկուլների բաշխումը՝ կախված ջերմաստիճանից, ռադիոակտիվ նյութի մասնիկների ֆլուկտուացիան, զարկերակի պատերի բաբախումային տատանումները հաստատում են այդ օրինաչափությունը: Նորից պարզվում է, որ այդ կորերում ամենամեծ վերելքի գիծը բաժանում է արցիսը 1:2 հարաբերությամբ: Այլ կերպ ասած, առանձնանում է մի հատված, որը 3 անգամ տեղավորվում է որոշակի երկարության վրա:

Հնարավոր է, բնության մեջ գոյություն ունի «ամենափոքր վերակառուցման» օրենք: Բնությունը բոլոր վերակառուցումները կատարում է կոկիկ՝ ամենամեծ տն-

տեսումով: Դա վերաբերում է եւ Երկրի ընդերքին, եւ կեղեւին, եւ օդին:

...Նկարում  $\pi$  թիվը «հայտնաբերել են» ջրածնի ատոմում. այն ճշտորեն արտացոլում է ջրածնի ատոմում բոլոր հնարավոր ուղեծրերի դիրքը:  $\pi$  թվի ֆիզիկական իմաստի հայտնաբերումը հաստատում է մաթեմատիկայի վերացական աշխարհի եւ ֆիզիկայի իրական աշխարհի կապը:

## 147) Բնագր

«Ծիծեռնակը բույն էր շինում, ե՛վ շինում էր, ե՛ւ երգում...»

Ղազարոս Աղայան



Բնագրը (միջազգայնորեն ընդունված եզրույթով՝ ինստիմուս, որ լատիներենից թարգմանաբար «մղում», «ներշնչում» է նշանակում) կենդանիների բնածին վարքի դրսևորում է, որ իրականացվում է խստորեն որոշակի պայմաններում կենսաբանորեն անհրաժեշտ պահանջումների ազդեցությամբ (սննդի, սեռական, պաշտպանական եւ այլն): Դա բարդ ոչ պայմանական ռեֆլեքս է:

Ռեֆլեքսը՝ օրգանիզմի հակազդեցությունն է արտաքին դրդիչների կամ փոփոխությունների նկատմամբ, որ իրականացվում է նյարդային համակարգի միջոցով: Ռեֆլեքսն է ընկած կենդանիների եւ մարդու հոգեկան գործունեության հիմքում: Այն իրականանում է մի քանի նեյրոններից բաղկացած ռեֆլեկտորային աղեղով, որ միանում են սինապսներով:

Սինապսների կազմավորման համար անհրաժեշտ են երկու բջիջներ: Դրանցով են կատարվում նյարդային իմպուլսների փոխանցումները:

Բնագրը սահմանում են նաեւ այսպես. բնածին պահանջումներ՝ պլյուս դրանց բավարարման բնածին ծրագրեր: Այդ ծրագիրն իր մեջ ներառում է առանցքային խթաններ, որոնք գործողության մեջ են դնում որոշակի վարք ու շարժողական ակտերի միահամռություն: Շների համար, օրինակ, առանցքային խթան է շարժումը. նրանք հետապնդում են այն ամենին, ինչը շարժվում է:

Բնագրային ռեակցիաները զարգանում են առանց բանականության կամ վարքի ձեռքբերողի ձեւերի մասնակցության եւ վերահսկելի են հարաբերականորեն նեղ սահմաններում:

Մարդկանց մոտ առանց գիտակցության կարգավորման ընթացող հոգեբանական պրոցեսները բացատրելու համար օգտագործում են նաեւ ենթագիտակցություն հասկացությունը: Դրա տակ հաճախ հասկանում են արագ հիշողության մեխանիզմները, երբ մարդու ուղեղը ինքնավար կերպով արձագանքում է կրկնվող, անցյալից, նույնիսկ հեռավոր նախնիներից եկող մտքերը: Այդ դեպքում ուղեղը չի օգտագործում շատ ժամանակ վերոհիշյալ մտքերը վերլուծելու համար եւ միանգամից որոշումը կատարում է նախկին ալգորիթմներից ելնելով: Մտքերի այդօրինակ «ավտոմատացումը» կարող է օգտակար լինել եւ

արագ ճշգրիտ որոշում կայացվել: Բայց կարող է եւ սխալի հանգեցվել, երբ ավտոմատացվում է անտրամաբանական միտք: Այնուամենայնիվ, մարդուն առավել հատուկը (մյուս կենդանիներից տարբերողը) վերացական մտածողությունն է, թեպետ դրա տարրերով առանձին կենդանիներ եւս օժտված են:

Բնագրները հաճախ լինում են շատ բարդ եւ բաղկացած են բազմաթիվ փուլերից, ինչպես, օրինակ, մեղուների վարքն է նեկտար հավաքելիս: Բնագրների հիման վրա կարելի է կազմակերպել վարժեցում (ուսուցում): Կեր տալու միջոցով ստիպել (շահագրգռել) կենդանիներին կատարել որոշակի գործողություններ՝ սա վարժեցման միջոցներից մեկն է: Երկրորդը՝ ծեծելով ստիպելն է. ինքնապաշտպանության բնագրը կենդանիներին ստիպում է հնազանդվել:

Գիտնականների մեծ մասը կարծում է, որ մարդիկ եւս օժտված են բնագրներով (օրինակ՝ նորածնի լացը եւ ինքնապաշտպանական ռեակցիան եւ սոված լինելու ահազանգ): Ուրիշները կարծում են, որ բնագրը մարդու համար չէ, եւ դրա բացակայությունը մեր էվոլյուցիոն առավելությունն է. այն մեր վարքին ճկունություն է տալիս: Մենք հարմարվում ենք այն փոփոխվող պայմաններին, որում հայտնվում ենք, եւ դա է մեր գոյապահպանության կենսունակ ուժը:

Պահանջումներից բացի՝ մարդու վարքի վրա էական ազդեցություն ունի ինֆորմացիան, որ ստանում ենք արտաքին միջավայրից:

## ... Նկարում ծիծեռնակի բույն:

Սուր նեղ թեւերով, սպիտակ կրծքով, մկրատածեւ պոչով, արագաթռիչ, չվող ու բնագրով հին բույնը վերադարձող այդ փոքրիկ թռչունը սիրված է հայերի մոտ: Ծիծեռնակն են անվանում նաեւ որեւէ բանի երեսան գալու առաջին նշանը: Իսկ ծիծեռնակի կաթ արտահայտությունը գործածվում է ցույց տալու համար մի բան, որ անկարելի է գտնել: «Արդարություն» ծիծեռնակի կաթն է դարձել, ոչ մի տեղ չես գտնի» (Բաֆֆի):

## 148) Ակնթարթ եւ հավերժություն

«Կա՛նգ առ, ակնթա՛րթ, դու հիասթա՛նջ ես»:

Գյոթե

«Կյանքի ժամերն ապրի այնպես, որ քեզ բաժին ընկած ժամերին չավելացնես աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ժպիտով ընդունես նրա անսահման լույսն ու խորհուրդը»:

Վիլհամ Մարոյան

Ստուգաբանորեն՝ ակնթարթը մի անգամ աչքը թարթելու տեւողությունն է, ֆիզիկական իմաստով՝ այն ամենափոքր ժամանակամիջոցը, որ զգում է մարդկային զգայարանը. այդ առումով՝ մոտ 0,3 վրկ տեւողությամբ պահն է դա: Պատկերավոր ասած՝ ակնթարթը նաեւ կարճ թվացած, անցած-գնացած ժամանակն է: Հավերժությունը մշտնջենականությունն է. «Մշտահունդ, անմիճ, հավերժորեն հոսում, աղմկում է ահա հուզումների լեզուն» (Ե. Չարենց): Թեւավոր խոսքով ու փիլիսոփայորեն է միավորել ակնթարթը, կյանքն ու հավերժությունը Ավետիք Իսահակյանը. «Կյանքն ակնթարթ է հավերժության դեմ»:

Կյանքն ու իրական, քվանտային աշխարհի շատ կարեւոր իրադարձություններ մեր զգայարաններով չափվող ժամանակամիջոցներ են նաեւ ֆառելիորեն մեծ ու ակնթարթից շատ պակաս տեւողություններ կարող են ունենալ: Կա նույնիսկ «կյանքի տեւողություն» տարրողունակ գիտական եզրույթ: Խոսքը տարրական մասնիկների ու անկայուն ատոմների միջուկների գոյու-

թյան միջին տեւողությունն է: Օրինակ, ազատ նեյտրոնը թույլ փոխազդեցություններով պայմանավորված՝ տրոհվում է 15,3 րոպեում, իսկ ամենակարճ ապրող մասնիկները ռեզոնանսներն են, որոնց կյանքի տեւողությունը 10<sup>-24</sup> վ է:

Միջուկային ֆիզիկայում կյանքի ժամանակը ուղիղ համեմատական է կիսատրոհման պարբերությանը եւ հակադարձ համեմատական՝ տրոհման հաստատունին. այն փոփոխվում է վայրկյանի միլիոնավոր մասերից մինչեւ մի քանի միլիարդ տարի սահմաններում:

Կյանքի ժամանակը ֆիզիկայում սահմանվում է նաեւ որպես քվանտային համակարգի հաստատուն էներգիայով վիճակում գտնվելու միջին տեւողություն: Ամեն դեպքում՝ ֆիզիկորեն կյանքի ժամանակն հավասար է այն ժամանակամիջոցին, որի ընթացքում տվյալ վիճակում գտնվող քվանտային համակարգերի թիվը փոքրանում է e անգամ, որտեղ e-ն բնական լոգարիթմի հիմքն է:

... Խորհրդային լավագույն հեռուստատերիալ է համարվել «Գարնան 17 ակնթարթը», որը պատմում է նացիստական Գերմանիայի բարձրագույն զինվորականության մեջ գործող խորհրդային հետախույզի մասին: Ֆիլմի երաժշտության հեղինակը Միքայել Թարիվերդիեն է (հայ հռչակավոր երգահան, արցախյան արմատներով ու թիֆլիսյան ծնունդով), տեքստը կարդում է Եֆիմ Կոպեյանը (երբ նրան ու Ա. Ջիգարխանյանին է Քեոսայանը հրավիրեց խաղալու «Անորսակի վրիժառուներում», ռուսական մամուլը գրեց. «Շատ հասկանալի է. մի ազգություն, արյան մի ստեղծագործական խումբ. հանրությունը շատ սիրեց «տարօրինակ հայկական ազգանունով արտիստին»):

...ՄԻԳ է կոչվում խորհրդային ռազմական հռչակավոր օդանավերի դասը, որոնցով գրանցվել է 55 համաշխարհային ռեկորդ: Անվանումը երկու կոնստրուկտորների (Միկոյան, Գուրելիչ) ազգանունների սկզբնատառերից է, բայց նաեւ խորհրդանշական է. "ալնթարթ, որ ակնարկում է ինքնաթիռների մեծ, կայծակնային արագությունը:

Ամփոփենք փիլիսոփա Անդրեյ Բելիի խոսքով. «Արտաքին անհրաժեշտության պայմանները խզում են ակնթարթը: Հավերժությունը տրոհվում է ակնթարթների ջրվեժի, կյանքի տեսիլքը տրոհվում է հաջորդական պատկերների, կյանքի կերպը՝ հազարավոր ձեւերի»:



... Նկարում՝ Ա. Դալի, «Բարձր ակնթարթ»: Նկարում պատկերված է հեռախոսափող՝ ձվածեղով ափսեի վերելում, ծովի հեռապատկերի վրա: Կտավը գտնվում է Շտուտգարտի պատկերասրահում:

Չարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Շիրակի մարզի Արթիկի  
հ. 3 ավագ դպրոցի  
ուսուցչուհի, բնագետ

Վիդա ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Շիրակի մարզի Արթիկի  
հ. 2 հիմնական դպրոցի  
ուսուցչուհի, բանասեր

Գրականագիտական

Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը

սկիզբը՝ նախորդ համարում

Մոսկվա մեկնելու հանգամանքները. մայրը կողմ էր, հայրը՝ դեմ. «Համաձայնվեցին, որ գնան սովորելու եւ միաժամանակ Արգար աղայի մոսկովյան գործակալ դառնան՝ գործակալականության գծով: - Տո, ե՛ս... ու առեւտրական գործակալ... խնդրեց ինքն իր վրա, - ինչ արած, համաձայնվեցի: Արգար աղան ռոճիկ նշանակեց, ճանապարհածախս տվեց, էփեջա [բավականին] փող ընկավ ձեռք» («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», 1961, էջ 102):

Ըստ Կ. Քոթանջյանի «Չարենցը Մոսկվա եկավ 1916 թ. աշնանը, եթե չեն սխալվում սեպտեմբերի վերջին եւ ընդունվեց Շանյավսկու համալսարանի պատմադրական ֆակուլտետը: Այդուհանդերձ մի շատ փոքր սենյակում, որտեղ կար մահճակալ, սեղան եւ երկու աթոռ: Շատ պատկառելի եւ զգայուն տանտիրուհի ուներ, նա միշտ բողոքում էր, թե Եղիշեն օր ու գիշեր նստած գրում է ու գրում, առանց սնվելու, ընդունելով միայն քաղցր թունդ թեյ եւ ուրիշ ոչինչ: Խնդրում էր ինձ հաճախ այցելել եւ նրան դուրս բերել տնից: <...>: Չարենցը Մոսկվայում մնաց մինչեւ 1917 թ. մարտ ամիսը» («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», 1986, էջ 44-45):

1916, 28 օգոստոս - «Համբավաբեր»-ում (թիվ 28) Վ. Խորենին գրախոսում է Դավիթ Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870)» (հատոր Ա., Բաքու, 1916) գիրքը:

1916, սեպտեմբեր - 1917-ի մարտի կես - Չարենցը ուսանող է Մոսկվայում: Այստեղ էլ դիմավորում է Փետրվարյան հեղափոխությունը:

1916, «սեպտեմբերից հետո» - Մոսկվայում գրում է «Վահագն», «Աթիլա» երկերը: Առաջինը տպագրվել է «Համբավաբեր»-ում, 1917, թիվ 33: Երկուսն էլ զետեղվել են ԵԺ, II հատորում (1922):

«Սեպտեմբերից հետո»-ն ըստ Ա. Զաքարյանի 1963 թ. ծանոթագրությունների, բայց սհա 1997-ին գրում է. «Վահագն - Աթիլաներ թվագրելով 1916, հասկանալի գզուշավորությամբ ցանկացել է գրության թվականը վերագրել ցարի ժամանակներին: Իրականում «Վահագն», «Ազգային երգ», «Հատված», «Աթիլա» հաջորդականությամբ գրությունները պետք է լինի 1917-ի վերջերից 1918-ի ամառ-աշուն (Ա. Զաքարյան, «Եղիշե Չարենց: Կյանքը, Գործը, Ժամանակը», I, Ե., 1997, էջ 499):

Բանաստեղծի թվագրությունն ինչ-ինչ հարմարեցումներով պայմանավորելու նախապայմանը ենթադրություն է: Ուստի՝ հարկ չկա խմբագրելու հեղինակին:

Ս. Չորյան. «Բելու օրինակով գրեց նաեւ «Աթիլան», եւ, ըստ իս, ավելի լավ, քան Բելին» («Հուշեր Եղիշե Չարենցի մասին», 1986, էջ 82):

Ուշագրավ զուգահեռություն. Թունանյանն իր «Parodia»-ի բնաբան ընտրեց Հովհաննիսյանի «Իմ հայրենիքը տեսե՛լ ես, ասա՛...»

տողը եւ ամբողջովին ժխտեց հիացական բովանդակությունը, Չարենցը նույն բանաստեղծից բնաբան ընտրեց «Փրկության արեւ Վահագնիդ տեսար» տողը եւ հիմնահատակ բացասեց փրկության որեւէ հույս:

«Հին աստվածներ»-ում իշխանը Վահագնին դիմում է «Վահագն արի», նույն մակդիրն օգտագործել է նաեւ Չարենցը «Օ, Վահագն արի»: Զուգահեռությունն է, թե՞ Շանթից մնացած հետք...

1916 - Մոսկվայում ավարտում է «Հրո երկիր» գրքից: Սկսել էր 1913-ին Կարսում: Բաղկացած է 10 բանաստեղծությունից: Ժամանակին չի տպագրվել: Ինքնագրերը պահպանվել են Գ. Լեւոնյանի ֆոնդում: Վերջինիս հասցեագրված 11. IX. 1920 թվակիր նամակում Չարենցը տեղեկացնում է, որ գործերից մեկը՝ «Վերադարձ»-ը, արդեն տպագրվել է, իսկ մյուսները չեն բավարարում իր ճաշակը եւ չեն համապատասխանում իր ըմբռնումներին: Խնդրում է հնարավորության դեպքում նյութերն ուղարկել իրեն, «հակառակ դեպքում թող Ձեզ մոտ մնան - մի օր կվերցնեն» (ԵԺ, VI, էջ 370):

1916, 25 հոկտեմբեր - «Մշակ» լրագրում (թիվ 238) լույս է տեսնում Գարեգին Լեւոնյանի «Ե. Չարենց, «Դանթեական առասպել»» լուրջ ու ծավալուն գրախոսությունը: Չարենցին համարում է «պատանի Դանթե»: Բարձր է գնահատում «սահուն եւ պատկերավոր ոճը», «տաղաչափական արվեստը», բարեխիղճ հայերենը, անկեղծությունը. «Չարենցը իր դեռատի հոգով չէր կարող չազդվել «գուլունի երկրի» այն հիրավի դիվային տեսարաններից, ինչ որ իրանց սարսափներով մոռացնել են տալիս Դանթեի դժոխքը»:

1916, 8 դեկտեմբեր - Ժնեից Լեւոնյանին հղած նամակում Իսահակյանը խնդրել է իրեն ուղարկել «Դանթեական առասպել»-ը. «...ուղարկիր, եթե ուզում ես, Գ. Զալաշյանի նոր ժողովածուն եւ գրախոսածը «Դանթեական առասպելը»... Տեսնենք երիտասարդների մեջ ի՞նչ կա» (Ա. Իսահակյան, ԵԺ, VI, էջ 165):

1916, 30 դեկտեմբեր - Հայ գրողների ընկերության երեկույթում Սուրխաթյանը դասախոսում է հայոց նոր բանաստեղծության մասին: Կենտրոնում Տերյանն էր, շուրջըլորը՝ նրա հետերդրուհիները: «Տերյանը օժտված է մեծ քաղաքի սրտային մտավորականի բարդ հոգեբանությամբ: Նա բերավ մեծություն, շվարում, երազանք ու պատրանք»:

1916 - Չարենցը գրում է «Պոետ» բանաստեղծությունը: Տպագրվել է ԵԺ, I հատորում (1922): Բանաստեղծի տարրչազորության հրաշքն է, հռետորական այսպիսի հարցումով. «Ո՞վ կհասկանա պոետի ուղին...»: Բանաստեղծի ճակատագրի հարցումի ժամանակով մերձավոր արձագանքն է «Դուրսը քամին թափառում է, անմխիթար դեգերում» տողով սկսվող բանաստեղծությունը...

Այս եւ այս տարվա ընթացքում գրած այլ գործերի («Գիշերապա-



հը», «Պատահական անցորդին», «Դահիճը կարմրագետ», «Հիշում եմ...», «Շամիրամ», «Կան անտես հյուրեր...», «Գիտեմ, որ մի օր կմեռնեն ես էլ», «Արտիստը») պատկերաչափ մեջ եփվում-հատնանում է թե՛ ուղեմիջ բառապաշարը՝ խելագար, երագ-երագանք, տենչ, արեւ, աստղ, փողոց, քաղաք, գորշ առօրյա, գիշեր, աշխարհ, ճանապարհ, ուղի, հուշ, մշուշ, իրիկուն, կարմրագետ դահիճ, կյանք, մահ, մղձավանջ, լեգենդ, գերեզման, ժամանակ, հավերժություն, անդարձություն... թե՛ կյանքի հարվածներին դիմակայելու հոգեբանական գաղտնիքը. «Օրհնություն քեզ, կյանք: Հրա՞ջք էիր դու...»:

1916 - «Արմյանսկիյ Եստնիկ»-ը (թիվ 24) գրախոսում է «Դանթեական առասպել»-ը: Գիրքը համարվում է «արժեքավոր ներդրում հայ գրականության գանձարանում»:

1916 - Ս. Յա. Շարտիի թարգմանությամբ Սարատովում լույս է տեսնում «Հայ բանաստեղծներ» գրքի 1-ին հատորը, 2-րդը՝ 1917, Թիֆլիս, «Պրոգրես» տպարան:

1916 - Մոսկվայում լույս է տեսնում Վ. Բրյուսովի խմբագրած «Հայաստանի պոեզիան» ժողովածուն: 1915-1917 թթ. Բրյուսովը հանդես է գալիս նաեւ Հայաստանին նվիրված ինքնուրույն բանաստեղծություններով՝ «Հայաստանին», «Հայերին», «Արարատին», «Արարատը Երեւանից», «Տիգրան Մեծ», «Հաղթանակ Կարուն», «Ճանփորդական նշումներ», «Հովհաննես Թումանյանին»: Ավելացնենք «Արքայի աղոթքը» թատերական պատկերը:

1916 - Մաքսիմ Գորկու խմբագրությամբ Պետերբուրգում լույս է տեսնում «Հայ գրականության ժողովածու»-ն:

1916 - Լույս է տեսնում Եմիլ Վերհարնի «Ռազմի կարմիր թևերը» ժողովածուն՝ Հայաստանին նվիրված «Աղաղակ», «Ազգաջինջ Գերմանիա» բանաստեղծություններով:

Հանում հայության իրենց ձայնն են բարձրացնում նաեւ Հանրի Բարբյուսը, Անատոլ Ֆրանսը, Ֆրիտյոֆ Նանսենը, Յուրի Վեսելովսկին, Ալեքսեյ Ջիվելեգովը, լեհ Վալերի Յազվեցկին...

1916 - Թիֆլիսում գործող վրաց բանաստեղծների «Կապույտ եղջյուրներ» խմբակցությունը հայտարարություններից հետո խորհրդապաշտությունից վերջնականապես անցնում է ապագայապաշտության:

Թիֆլիսում իրենց հավաքատեղին ունենին նաեւ ռուս ապագայապաշտները Ալեքսեյ Կրուչենիխի ղեկավարությամբ, նա իր բանաստեղծություններն արտասանում էր ոռնալով ու ձեռքերի հարված-թափահարումներով: Ընդհանրապես, Թիֆլիսը ապագայապաշտների այցելության հանգրվաններից էր՝ 1914-ից սկսած:

Չարենցը հաճախակի էր լինում Թիֆլիսում եւ բնավ անտարբեր չէր գրական իրողությունների հանդեպ (ավելի մանրամասն տես՝ Դ. Գասպարյան, «Հայկական ապագայապաշտություն», 2009):

1916 - 1917 - Կովկասի հայերեն եւ ռուսերեն մամուլը («Русское слово», «Кавказское слово», «Армянский вестник») անտարբեր տպագրում է հայ ժողովրդի պատմական ճակատագրով ներշնչված բանաստեղծություններ, ակնարկներ, նոթեր. Մարիետա Շահինյան «Հայ ազգին», Վասիլի Նեմիրովիչ-Դանչենկո (հայտնի բեմադրիչ եղբայրը, որոնց մայրը հայ էր) «Եփրատի ափերին», «Երգեր Արեւմտյան Հայաստանի մասին»: Իսկ Հակոբ Հակոբյանն այս արյունոտ օրերին, գրիչը մուրճ դարձրած, «Ազգայիններին» (1916) բանաստեղծությունը իր ճանապարհն էր հարթում դեպի պրոլետարականություն.

Նման չեն ես ձեր սիրելի պոետներին, Ձեր քուրմերին երգս օտար - մի խորք հնչում... <...>: Ես երգեցի գործարանի սեւ աշխատանք եվ ճարճատված պողպատ մեջքերն արեւի տակ...

1916 - 1917 - Գրում է «Հարդազողի ճամփորդները» բալլադը: Չոնված է «Սիրելի Կիվանին»: Կիվանը (Անուշավան Ջիդեջյան) այդ կապակցությամբ մտաբերում է «համաշխարհային» ճամփորդության իրենց ծրագիրը հետեւյալ երթուղով՝ Վաղիկավկազ-Իրկուսու-Վլադիվոստոկ-Ճապոն-Հնդկաստան: Ժամանակն արդեն պետք է 1918 թվականը լինի. «Ու վաղ գարնան արեւոտ մի օր վերցրինք մեր իրերը, որոնց մեջ մի ծանր սնդուկ՝ գրքերով ու ձեռագրերով լիքը եւ բարձրացանք Ֆուրգոն, «Չարենցի հետ»: Հուլիս», 2008, էջ 23): Գանապարհին հիանում են Դարիալի կիրճի գեղեցկությամբ: Հասնում են Վաղիկավկազ, այդտեղից՝ Արմավիր, եւ գնացքն այլևս առաջ չի շարժվում, որովհետեւ Ցարիցինում կռիվներ էին: Արմավիրում էլ ավարտվում է նրանց «համաշխարհային» ճամփորդությունը:

Դժվար ժամանակներ էին. Չարենցը ծու է խաղում եւ հաղթում. մի քառասունի չափ դնում է դիմքում ու եստի՝ համեցեք կանչում: Այստեղ հանդիպում է հարազատներին եւ միանում նրանց, իսկ Վիվանը բարձր ջերմությամբ հայտնվում է հեռավոր ծանոթներից մեկի հարկի տակ, ով վստահեցնում է Չարենցին, որ հիվանդը ապահով ձեռքերում է:

Վիվանն ու Չարենցն իրար վերագտնում են Աղբալյանի հայտնի դասախոսությունից հետո եւ հանդիպում մինչեւ 1920-ի գարուն:

Անապավեն, անտերունց, անմխիթար, հուսահատ, միայնակ, տրտում, հոգնաբեկ, ամեն ինչ կորցրած եւ այդ ցավից անկարելի խնդության երագանքով թափառումների մատնված խելագար սերունդի երգն է.

Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ, - Ու խնդացին լուսավոր մեր աչքերին, Բութեզնեցին մեր կարոտները հրկեզ - Ու հեռացան: Ու ոչ մի լույս չբերին: Քույրը խնդաց, բարեկամը ծիծաղեց, Օտար մարդիկ հայիոյեցին ու անցան: Միայն պոռնիկը մշուշում համբուրեց Ու խելագար բարեկեց կիսածայն (ԵԺ, I, էջ 63):

1916 - 1917 եւ մինչեւ 1922 - Չարենցի անհագ ընթացափորությունն այս եւ առաջիկա տարիներին շարունակվում է. այս տարիներին նախապատվությունն ավելի տալիս է փիլիսոփայական, առասպելաբանական, աստվածաբանական գրականությանը:

Անպակաս են հայագիտական հրատարակությունները: 1916-ին Թիֆլիսում ձեռք է բերում Լեոյի «Հայ հայրենիք», «Հայոց հարց վավերագրեր» գրքերը: Նրա գրադարանում կան 1910-ական թթ. Խորենացու, Բուզանդի, Եղիշեի մատյանների հրատարակությունները:

Գեղարվեստական գրականությունից բացի՝ հետաքրքրվում է փիլիսոփայությամբ, մշակույթով, պատմությամբ, լեզուներով, հոգեբանությամբ, առասպելաբանությամբ, մարդաբանությամբ, հին աստվածներով, հուսկական իդեալաբանությամբ, Արեւելքով, կրոններով, սուրբ գրքերով, Հիսուս Քրիստոսով, Բուդդայով, Մուհամեդով, հին եգիպտական քաղաքակրթությամբ, հին աշխարհի խորհրդանշաններով, ամուսններով, դրանց նշանաբանությամբ ու իմաստաբանությամբ, «Մեռյալների գիրք»-ով, միստիցիզմով:

Կարդում է Ասվազուշայի «Բուդդայի կյանքը» (Асвагоша, «Жизнь Будды», Կ. Բալունտի թարգմանությամբ, Մոսկվա, 1913, ձեռք բերելու ժամկետը նշված չէ), Բ. Պրոսի «Փարավոն» վեպը, Դ. Շտրաուսի «Հիսուսի կյանքը»: Ահա ձեռք բերած գրքերից եւս մի քանիսը՝ Ի. Գ. Ֆրանկ-Կամենեցկի, «Как научились читать египетские письмена» («Ե. 2., Մոսկվա» նշումով), Վ. Վ. Ռոզանովի «Темный лук («Метафизика христианства»)»...

Գրադարանի գրքերի թիվը. «Պահպանվել է գրադարանի հազիվ կեսը (հազար վեց հարյուր գիրք), որի հիմնական մասը այժմ պահվում է բանաստեղծի տուն-թանգարանում, իսկ որոշ գրքեր էլ դեռ մնում են անձնական արխիվներում» («Չարենցյան ընթերցումներ», V, 1988, էջ 203):

«Չարենցը եւ գիրքը», «Չարենցի գրադարանը» առանձին ուսումնասիրությունների նյութ են:

Հարունակությունը՝ էջ 15



# Եղիշե Զարեանի կյանքն ու ժամանակը

սկիզբը՝ էջ 14

## 1917 թվական

**1917, 2 հունվար** – Բաքվի «Արեւ» օրաթերթում Ավ. Գուլյանը տպագրում է «Յայ գրականությունը 1916 թ.» ամփոփիչ հոդվածը, որի մեջ ակնարկ կա նաեւ Զարեանի «Դանթեական առասպել»-ին:

**1917, հունվար** – Թիֆլիսի Արքունական թատրոնում պեղծերեկոներով հանդես է գալիս Իգոր Սեւերյանին: Բացառված չէ Զարեանի ներկայությունը:

**1917, 18 հունվար** – «Աշխատանք» (թիվ 73) թերթը ՕՏՆԻԿ ստորագրությամբ տեղեկատվության մեջ հայտնում է. «Անցյալ չորս քաղաքային հրկիւն քաղաքային ակունքի սրահի մեջ բանաստեղծ Վահան Տերյան դասախոսությունը կարողացավ հայտնել շրջանի բանաստեղծության լեզվի ու ոճի զարգացման մասին»:

Տերյանը ժամանակակից աշխարհաբարի հիմնադիրներ է համարում Աբովյանին «Վերք...»-ով և «Յուսիսափայլ»-ը: Յայ գրագետները գրաբար թե հայ ռամիկ գավառաբարառն ընդունելու կամ մերժելու տատանումների մեջ «գտած են որոշ երջ մը, հեմակետ ունենալով երկու սկզբունք՝ մերժել գրաբար ամբողջականը, բայց միշտ օգտվել անոր ճոխ բառազանգներն ընդունել աշխարհաբարը՝ ձգտելով սակայն դարձնել զայն գրական ու ըմբռնելի անենի համար»:

Ապա դասախոսը նկատողության ու զնահատումի առավ Աբովյանի, Աղայանի, Պատկանյանի, Շահագազի եւ ապա նորագույններու՝ Յովհաննիսյանի, Թումանյանի, Իսահակյանի եւ Դեմիրճյանի ոճն ու լեզուն»:

Վերջում «Տերյան կարողացավ սեփական «պոեզիան» (կարծես մեծ սխալ կ'ըլլար ու մեղանջում արվեստի դեմ, եթե բուն հայեցի բանաստեղծություն կամ քերթված բառը գրվեր հայտարարության մեջ)»:

**1917, 14 փետրվար** – Նեսևկի պողոտայում տեղի է ունենում Պետրոգրադի բանվորների հզոր ցույցը հետեւյալ կարգախոսներով՝ «Կորչի՛ ինքնակալը», «Կորչի՛ ինքնակալությունը», «Կորչի՛ պատերազմը», «Կորչի՛ կառավարությունը», «Չլաց, հաշտություն, ազատություն»:

Այս «Կորչի»-ները փողոցից մտան գրականություն, հասան նաեւ Զարեանին. երկու տարի անց փորձեց «Կորչի» վերնագրով ամսագիր հրատարակել, իսկ 1927-ին դարձավ Առաջին համաշխարհային պատերազմի 10-րդ տարեկիցի կապակցությամբ պատերազմին կորչի՛ ասող ագիտացիոն գրքուկի հեղինակ:

Փողոցն այդուհետեւ ուղղորդիչ դեր ունեցավ գրականության մեջ՝ զանգվածային շարժումներ, փողոցային երթեր, փողոցի լեզու, փողոցային կարգախոսներ, փողոցային հետադարձություն, մաե անփույթ վարք... Արվեստը, որ ժամանակի ընթացքում դեռեւս Բ. ժ. ա. 5-րդ դարի Դիոնիսյան տոների նոխազերություններից հեռացել էր փողոցից եւ պատասպարվել թատրոններում, արվեստանոցներում, համերգասրահներում, սալոններում եւ ստեղծել իր

փողոցային աշտարակը, գահավիժեց իր բարձունքներից, տրորվեց, գռեհկացավ, նորից խնդիր առաջացավ ճշտելու արվեստի ու իրականության, արվեստի ու քաղաքականության սահմանները եւ այդ ճշտման կոշտ, դաժան, արյունոտ ճանապարհով ընթացան 1920-1930-ական թվականները:

**1917, փետրվար** – Զարեանը «1917 թ. փետրվարին եղել են Մոսկվայում: Շանյավսկու համալսարանի ուսանողների խմբում մասնակցել են Բուտիրյան բանտից քաղաքատարկյալների ազատմանը: 1917 թ. հոկտեմբերը դիմավորել են Կարսում <...> Տաճկահայաստանից ետ գրավված նահանգող զորքերի վերահսկողության գոտում» (ԳՄ, էջ 305):

**1917, 26 փետրվար** – «Վան-Տոսպ» (թիվ 14) շաբաթաթերթում տպագրվում է Վշտունու «Մահերգ» բանաստեղծությունը.

Օ՛, մահ իմ, մահ իմ,  
ես քեզի մեղա՛,  
Քու դեմ խիզախող,  
այաքարող մ'եղա,  
Պարտված եմ հիմա,  
դալո՛ւն եմ, վտա՛ր,  
Յաղթողը դուն ես, եկա՛ր,  
ինձ գտա՛ր.  
Մենք իրար ծանոթ,  
մենք իրար օտար,  
Գրկե՛ ինձ մահ իմ,  
ես տար ինձ, օ՛ տար...  
Համազգային համատարած սգո ձայնն է...

**1917, մարտ** – Զարեանը Մոսկվայում լույս է ընծայում «Բանաստեղծություններ: Ծիածանը» ժողովածուն (տպարան՝ Ե. Ավետիքյանի): Մի առիթով խոստովանել է, որ գրաշարն ինքն է:

Գրքի ստեղծագործական ժամանակը թվագրել է. «Կարս, 1916 թ. հուլիս – Մոսկվա, 1917 թ. փետրվար»: Զետեղվել է Եժ, Լ հատրում (1922): Նախադիր «Ես աստղային մի պոետ...», «Յոգին չի մեռնում...» բանաստեղծություններին հաջորդում են «Ծիածանը» (5 գործ), «Ոսկին» (10 գործ), «Մանուշակագույն» (6 գործ), «Յրաժեշտի երեկոն» (4 գործ), «Գագելներ» (25 գործ) շարքերը:

Մեծարեցի «Ծիածան» ժողովածուից տասը տարի անց հայոց պոեզիայի երկնակամարում գոտի է կապում մի նոր «Ծիածան»:

Գիրքն ունի ծոն՝ «Իրիկնային քրոջս – Կարինե Քոթանճյանին»: Նրա հանդեպ սիրո խոր ներշնչանքով է գրված ամբողջ գիրքը՝ շարքը բացող առաջին իսկ «Լուսամփոփի՛ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով» բանաստեղծությունից սկսած:

Ծանոթ էր արդյոք Զարեանը Լեւոն Լարեանի «Լուսամփոփը» (1908) բանաստեղծությանը.

Լուսամփոփը՝  
արտեւանունը լամբարին,  
Վարդի թերթեր  
կը թափե վար մեղմորեն,  
Այնքան նախշուն,  
այնքան աղու, թրթռագին,  
Որ հուրիներն  
անոնց վրա կը թառին:

<...> Անբերույթ այլ  
խընկելի մատներն  
Կրգզամ բուրումն  
Անոր մարմնին հեռակա,  
Ու կը շնչեն  
լուսամփոփը վարդաշեն,

Որուն մեքեն  
ես կը տեսնեմ զԱնիկա:  
Չուզահեռն ակնհայտ է:

Անմիջապես հաջորդ բանաստեղծության մեջ Զարեանը հանդես է գալիս «աստղային պոետի» կերպարանով, ում հոգին «մեռած աստղի փայլ է»: Վերնագրի իմաստը բացահայտվում է այս տողերով.

Երեք ճաճանջ, երեք երանգ,  
երեք գույն,  
Որ անցան –  
Քոյր, կապել են քո աչքերում,  
ին հոգում –  
Ծիածան (Եժ, Լ, էջ 72):

Երեք ճաճանջի՝ եռագույնի կապակցությամբ Կարինեի հիշողություններից մտաբերենք աննշան թվացող մի նուրբ պատառիկ. Զարեանը որպես «առեւտրական գործակալ», Մոսկվայում հորից ծանրոց է ստանում դանակներ ու փուշներ: Փուշներին, այսինքն գլխաշորերից երեքը՝ տարբեր գույնի, տեղումտեղը նվիրում է Կարինեին: Սա եւս երեք ճաճանջ, երեք գույնի նախադրյալ է: Եվ չնոռանանք Զարեանի «Ծիածան»-ի բանաստեղծական գույները՝ կարմիրը, կապույտը, ոսկին, մեկ տարի անց դարձան հայոց նոր պետականության դրոշի գույներ:

Ինչպես նշել ենք՝ Կարինե Քոթանճյանի հետ Զարեանը ծանոթացել էր 1914 թ. Կարսի այգում: Ծանոթությունը նախածենել էր աղջիկը: Դրանից հետո հաճախակի հանդիպել են, զբոսնել այգում, նավակ նստել, Քոթանճյանների տանը ներկայացումներ բեմադրել: Կարինեի անդրադարձն այդ ծանոթությանը. «Ես զգում էի, որ այնքան էլ լավ հասարակական կարծիք չէր ստեղծվում իմ շուրջը: Ես նախորոք գիտեի, որ այդպես է լինելու: Յազվի չէի առնում, քանի որ Զարեանի մեջ տեսնում էի տաղանդ: Վախենում էի մի բանից՝ որ չսիրահարվի ինձ, եւ ես ստիպված չլինեմ հեռանալ նրանի» («Յուրեղ եղիշե Զարեանի մասին», 1986, էջ 28):

Կարինե Քոթանճյանը (1. IV. 1897, Կարս – 16. IX. 1976, Երեւան, թաղված է Թոխմախ լճին մերձակա գերեզմանատանը) աչքի ընկնող դեմք էր: Յայրը՝ Սարգիսը, ուսուցիչ էր: Լավ երգել իմանալու շնորհիվ Մկրտիչ Խրիմյանն ու Կոմիտասը հորդորում են դառնալ քահանա, 25 տարվա մանկավարժությունից հետո հագնում է հոգեւոր սքեմ, ստանում է Կորյուն հոգեւոր անունը եւ քահանայություն անում: Ուներ հինգ աղջիկ, երկու տղա՝ Սաթենիկ, Սիրանուշ, Կարինե, Յրանուշ, Արաքսյա, Ցուլակ, Պարտեւ, ըստ Կարինեի նաեւ հոգեորդի՝ Շավարշ Բասենցյանը (1874-1937), որ այնքան էլ հավանական չէ, որովհետեւ Շավարշն ուներ ծնողներ եւ Կորյուն քահանային որպես ծանոթ-բարեկամ է հիշում: Ահա ազգային գործիչ այս հերոսի կերպարն էլ Զարեանը հետո պիտի կերտեր «Խմբապետ Շավարշը» պոեմում:

Ըստ Կարինեի հուշերի տարբերակի Շավարշը որպես հայրուկ, «մատուցելով փրկեց Զարեանի ամբողջ գրականությունը, իմ եւ Զարեանի կյանքը՝ մեզ կերակրելով: Նա ինձ հավատում էր, երբ ասում էի. «Եղբայր, նա տաղանդավոր տղա է: Իր մատուցած գործը յայնքան մեզ աշխատանքի տարավ



մանկատուն եւ միշտ կնոջը՝ տիկին Սաթենիկին, պատվիրում էր. «Սաթենիկ, եղիշեն, որ կզա տուն, կուշտ կկերցնես, չնոռանաս, արաղ էլ տուր» (Շ. Բասենցյան, «Արկածալի կյանք», 2006, էջ 249):

Կարինե կապուտաչյա էր, ուսանել է Կարսի ռուսական գիմնազիայում, որը պատերազմի օրերին տեղափոխվում է Թիֆլիս: Որպես գթության քույր կամավոր աշխատել է Թիֆլիսում, Էջմիածնում: 1915-ին հոգեկան խազարումներ է ունեցել խելագարություն. «Բժիշկներն իմ այդ հիվանդությունը անվանում են շիզոֆրենիա...» («Յարեանի հետ: Յուրեղ», 1997, էջ 37): Բուժվել է: 1916-ին մեկնել է Մոսկվա՝ ուսանելու, իր դրողնով 1916-ի աշնանը Մոսկվա, Շանյավսկու համալսարան ուսանելու է մեկնել նաեւ Զարեանը եւ ընդունվել է պատմագրական բաժանմունք: Ատեստատ չէր պահանջվում: Բնակվել է փոքր մի սենյակում՝ մահճակալ, սեղան, երկու աթոռ: Մշտապես գրել է, ծնվում էր «Ծիածան»-ը: Միասին ժամանակ են անցկացրել Գորկայում, այցելել թատրոններ, Չեխովի գերեզման, մասնակցել են Կոստանդին Բալմոնտի, Անդրեյ Բելիի, Իգոր Սեւերյանին գրական երեկոներին, եղել են հեղափոխության ելածների շարքերում:

Զարեանի նյութական վիճակը ծանր էր, բայց երեք դրամից չէր խոսում: Այդ պայմաններում դրամ է ետ զգում տպագրելու «Ծիածան»-ը:

Կարինե նրան այսպես է հիշում. «Զարեանի մեջ թագավորում էր նվաճման տենչը: Նրա բարդ հոգեբանությունը ամենքը չեն կարող հասկանալ: Փոքրուց, թե ընտանիքում եւ թե դրսում իրեն լքված համարելով, նրա մեջ չարն էր հուրի-րատել, միախառնություն էր գտնում օղու եւ բարեհոգի կանանց մեջ:

Յետադարձ հայացքով կարող եմ նաեւ ասել, որ ընտանիքում Զարեանը դաժանություն էր տեսել: Յայրը նրան արհամարհում էր որպես գրող-մրողի: Սոր գրականի դրամները գնում էին գրադարանի ծախքերին: Ըստ այն ընկերների, որոնք եղել էին նրանց տանը՝ նա հարուստ գրադարան է ունեցել՝ արտասահմանյան հեղինակների գրքերով հագեցած» («Զարեանի հետ: Յուրեղ», 1997, էջ 47):

Զարեանը նրան նվիրել է ժամանակին տարածված «Մուրկատե երգի սկավառակը:

1918-ին, ինչպես նշել ենք, Կարինե անուսանցել է Գուրգեն Զատիկյանի հետ, ով նույն թվականին գոհվել է: Ավելի ուշ կյանքը կապել է թալինցի Գեորգ Տեր-Գեորգյա-

նի հետ (եղել է իրավաբան, միկայետ): Երեխաներ չի ունեցել:

Կարինե հետագայում ապրել է Իրինոյում, 1973-ից՝ Երեւանում Զորաբլուրում, զբաղվել է մեդիաբանությամբ:

Կարինեի վկայությունները «Ծիածանը» ժողովածուի ստեղծման կապակցությամբ. «Այդ օրերին Զարեանը գրում էր «Ծիածանը»: Ինձ ոչինչ չէր ասել մինչեւ ավարտելը. հետո բնագիրը տվեց ինձ եւ խնդրեց կարդալ միասին: Նույն օրերին նա հորից ծանրոց ստացավ: Յայրը գրել էր, որ դրամ չի կարող ուղարկել, ուղարկում է գրական դանակներ եւ պարսկական փուշներ: Մեծ էր եղիշեի ուրախությունը. Մոսկվայում նա շատ սուղ էր ապրում եւ հետո մտածում էր խնայած դրամներով հրատարակել «Ծիածանը»:

Սակայն այդ դառն օրերին, ինչպես եւ հետո, Զարեանը երբեք չէր սիրում խոսք բացել նյութական մասին, տրտմալ աղքատությունից: Չափազանց հպարտ էր, արժանապատվությամբ լի, դրամ ունենալիս ծախսում էր առանց որեւէ հաշվենկատության, հետո նորից մնում առանց դրամի խմելով շատ սիրած պարսկական թեյը:

Փուշներից երեքը՝ տարբեր գույնի, նվիրեց ինձ, ասելով, որ նվիրում է, որպեսզի հագնեմ ես ու համոզվեմ, որ իմ աչքերը հազուստներիս համապատասխան փոխվում են, ընդունում տարբեր երանգ, որի համար գրել ու ինձ է նվիրել «Ծիածանը» («Յուրեղ եղիշե Զարեանի մասին», 1986, էջ 44-45):

Զարեանի այս տարիների խոհեր. «Վերջին հաշվով կեղծ բան է բանաստեղծությունը, փոխանակ անմիջական զգացումը արտահայտելու, ինչպես մարդ անում է կյանքում, նստում են տանը, պատրաստում են խոհեր, հույզում են պատկերներ, հանգեր են մշակում, այդ ամենը չափի մեջ են դնում, թե՛, հանեցեք՝ ձեզ զգացումներ»: Անմիջական չէ: Բայց առանց դրան էլ ձեւը չես գտնի» («Յիշողություններ եղիշե Զարեանի մասին», 1961, էջ 104):

Մոսկվայում Զարեանը մնում է մինչեւ 1917 թ. մարտ: Կարինե նրան ուղեկցում է կայարան: Զարեանը նրա համար կարդում է նոր գրած «Յեռացումի խոսքեր»-ը: Վերադառնում է Թիֆլիս, այնտեղից՝ Կարս: Կարինեին հիշում է «Զարեան - նամ»-ում (1922) «Յիմա՛ր Կարին... Մշո՛ւշ Կարինե...», նաեւ անդրադառնում «Ծիածանը» գրքին.

«Ծիածանը...  
Արեւն է այնտեղ –  
Նայիրյան թախիծի միջից,  
Յրկիզված իմ հոգին բանտել  
Եվ ուզում էր անդարձ չիջի:  
Իրանի արեւն էր շոգ –  
Լացակունած կապույտը  
Նայիրի...

Ու թախիծ – խեղդող, ճնշող, –  
խառնված ոսկեման հրին:

(Դեռ չկա՛ր աշխարհում  
անշող  
Դեռ չկա՛ր արեւ-Նայիրին)  
(Եժ, Լ, էջ 163):

## Հարունակելի

**Դավիթ ԳԱՄԱՐՅԱՆ**  
բանասիրական  
գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր





Փորձիր լրացնել


Հայոց թագավորներ

Ուղղահայաց

1. Հայոց թագավոր, ով գահակալել է Կոմագենեում, մ.թ.ա. 2-րդ դարում... Բ Երվանդունի: Նա հետնորդներին պատգամ է թողել «Հողն օժիտ չեն տալիս» խրատականը: 2. Հայոց թագավոր... Ա Բագրատունի, ում կնոջ՝ Կատրանիդե թագուհու կնախքը (ոտքերը խաչված փրկչի նման) գերեզմանից հանել է Նիկողայոս Մառը (Անիի պեղումների ժամանակ): 3. Հայոց թագավոր... Բագրատունի, ով կնոջ՝ Մարիամի հետ Կարս քաղաքում կառուցել է Առաքելոց եկեղեցին, որը կանգուն է մինչև այսօր: 4. Վանի թագավոր մ.թ.ա 620-610 թթ., ով կնոջ անունը (Մաճանույշ) փոխել է ու դրել Ծիրանե՝ ասելով. «Ես ուզում եմ, որ դու ինձ ու մեր տերության համար ծիրանի բուրմունք ունենաս»: 5. Վանի թագավոր... Բ, Արգիշտի Առաջինի որդին (գահակալել է մ.թ.ա 764-735 թվականներին): 6. Հայոց Արտաշիր Երվանդունի արքայի կինը, ով արքայի պալատի ճակատին փորագրել էր տվել «Օտարից ոչ կին առ, ոչ էլ սննդամթերք» խրատականը: 7. Հայոց Երվանդ Գ թագավորի կինը, ում մասին արքան ասել է. «Իմ հաղթությունների համար ես շատ բանով պարտական եմ իմ...ին»: 11. Հայքի թագավոր... Կոտակ (գահակալել է 330-338 թվականներին): 13. Վասպուրականի թագավոր 977-1003 թվականներին... Խաչիկ Արծրունի: 17. Երվանդունիների արքա, ում կինը՝ թագուհի Ծովիմարը ամուսնու մահվան բոթը լսելով թույլ է խնամել եւ ինքնասպան լինում: 20. Արտաշես Բ թագավորի (գահակալել է մ.թ.ա. 30-20 թթ.) հայ տիկնանց տիկինը, ով հավատարիմ մնալով ամուսնուն, նրա մահից հետո տղամարդկանց հետապնդումներից խույս տալով, ինքնասպան է լինում՝ թույլ խնելով: 22. Հայոց դրածո թագավոր Որմիզդ... ով Պարսից Շապուհ Առաջինի որդին էր, գահակալել է 261-273 թվականներին: 24. Լոռու հայոց թագավոր... Անիողին, ով գահակալել է 996-1084 թվականներին: 26. Հայոց Հովհաննես Սմբատ Բագրատունի (գահակալել է 1020-1041թթ.) թագավորի ազգությամբ հույն կինը: 31. Վասպուրականի թագավոր (գահակալել է 958-968թթ.) Աբուսալի-Համազասպ Արծրունու տիկնանց տիկինը: 33. Արտավազ Առաջին արքայի (գահակալել է մ.թ.ա. 160-115թթ.) յոթ կանանցից: 36. Հայոց արքայից արքա՝... Բ Մեծ, ում օրոք (մ.թ.ա 95-55թթ.) Հայաստանը աշխարհի 2-րդ հզոր տերությունն էր: 37. Պարսից Շապուհ Առաջինի որդին՝ հայոց դրածո թագավոր, ով գահակալել է 273-287 թվականներին (նա հաջորդել է եղբորը): 41. Ծովիքի թագավոր... Երվանդունի, ով թագավորել է մ.թ.ա. 2-րդ դարում: Նա հարձերին անվանել է տղամարդու սիրտը եղծողներ: 42. Աղվանքի թագավոր 480-510 թվականներին, ում կնոջ՝ Շուշանիկի անունով Արցախում կա գետ Շուշան, որը սկիզբ է առնում Քիրս լեռան լանջերից: 43. Այդպես են անվանում Կյուրիկյան թագավորության հիմնադիր՝ Լոռու Գուրգեն թագավորին, ով գահակալել է 966-991 թվականներին: 47. Կիլիկյան Հայաստանի թագավոր... Ա (գահակալել է 1308-1320թթ.), ում կինը՝ Չարլուն թագուհին, մահացել է 1310թ. որդուն՝ Լեոնին ծննդաբերելուց անմիջապես հետո: 49. Վանի թագավոր Սարգուհի Գ-ի (գահակալել է մ.թ.ա 645-635 թթ.) կինը, ով արքային ասել է «Ես կհամաձայնվեմ քո կինը դառնալ միայն այն դեպքում, եթե մի հրասախ վազքում առաջ անցնես ինձնից»: 50. Հայոց Մազետա թագուհու ամուսինը՝ հայոց արքա... Արշակունի (գահակալել է 161-163թթ.): 51. Ատրպատականի եւ Մեծ Հայքի դրածո թագավոր Արտավազդ Դ-ի (գահակալել է 4-5 թվականներին) տիկինը:

Հորիզոնական

8. Աբգար-Օսրոյենեի հայոց թագավոր... Թ, ով (թագավորել է 179-214թթ.) երկար տարիներ ապրելով կնոջ՝ Սոփի թագուհու հետ, չգիտեր կնոջ քրիստոնյա լինելու մասին: 9. Կիլիկյան Հայաստանի թագավոր... Դ (գահակալել է 1345-1363թթ.), ով եղել է Նոր բերդի տեր Բաղդինի որդին: 10. Կիլիկյան Հայաստանի թագավորը 1296-1298 թվականներին, ում երկրորդ կինը մոնղոլուհի էր՝ Զինգիլխանի ծոռնուհին: 12. Հայաստանի թագավոր... Ա (գահակալել է 52-75 թթ.), ում կանանցից երկուսը (Բակուրադուխտ եւ Գերմակուհի) տիկնանց տիկնոջ տիտղոս ունեին: 14. Կիլիկյան Հայաստանի թագավոր... Բ, ում մահանալուց հետո (1219թ. մայիսի 2) կտակի համաձայն սիրտը թաղեցին Ակներում, իսկ մարմինը՝ Սիսում: 15. Կարսի հայկական թագավորության հիմնադիրը... Առաջին (գահակալել է (963-984թթ.): 16. Հայոց թագավոր 338-350թթ., ով կյանքի վերջին տարիները (արդեն կուրացած) կնոջ՝ բամբիչի հետ անցկացրել է Արագածոտն գավառի Կուռաշ(Կոշ) գյուղում: 18. Հայաստանի թագավոր 37-38թթ, ում կինը՝ Մայան, գտարյուն հռոմեոսի էր: 19. Հայոց թագավոր... Երվանդունի( թագավորել է մ.թ.ա 190-175 թթ.), ում կինը կրել է հայոց թագավորության աստվածուհու՝ Աստղիկ անունը: 21. Արցախի եւ Ուտիքի թագավոր (գահակալել է 5-րդ դարում): 23. Հարմա մահապետի որդին՝ առաջին հայը, ում գլխին թագ է դրվել եւ հռչակվել որպես թագավոր: 25. Կիլիկյան Հայաստանի թագավոր... Առաջին (գահակալել է 1294-1295թթ.), ով ամուսնացել էր Կիպրոս Հուգոն թագավորի դուստր Մարգարիտայի հետ: 27. Հայոց թագավոր... Ա Սակավակյաց ով թագավորել է մ.թ.ա 570-560թթ. կինը: 28. Վանի թագավոր Ինուշպուրայի՝ Մենուայի որդու (գահակալել է մ.թ.ա 788-786թթ.) կինը: 29. Հայոց թագավոր 370-374թթ., ով 371թ. Նպատ լեռան լանջից ղեկավարել է հայոց զորքերի ճակատամարտը պարսիկների դեմ՝ Չիրավի դաշտում: 30. Ծովիքի թագավոր (գահակալել է մ.թ.ա. 2-րդ դարում), ում կինը՝ Լուսատիկին թագուհին լսելով ամուսնու մահվան լուրը անցել է հայոց զորքերի գլուխը եւ, մարտադաշտ իջնելով, խիզախաբար մարտնչել ու հայկական տերության սահմաններից վերել է թշնամուն: 32. Հայոց թագավոր... Արշակունի



(գահակալել է 374-378թթ.), ով Հռոմում անուն էր հանել որպես կրվամարտի օլիմպիական խաղերի հաղթող: 34. Վանի թագավոր՝ Իշպուհի (գահակալել է մ.թ.ա 825-810թթ.) կինը, որին արքան այնքան շատ էսիրել, որ աստվածներին երկրպագելիս առաջինը տվել է կնոջ անունը եւ արելատություն հայցել նրա համար: 35. Վանի թագավոր Արգիշտի Գ-ի (գահակալել է մ.թ.ա. 625-620 թթ.) կինը, ով առաջինը ինքն էր ուտելիքը կամ ըմպելիքը ճաշակում եւ նոր հրանցնում իր արքա ամուսնուն: 38. Տրդատ Գ Մեծի կինը, ով եղել է առաջին հայ քրիստոնյա թագուհին: 39. Հայոց թագավոր 110-113 թվականներին՝ Աշխադար կամ..., ում կինը դաիրին հուշել է արքունի հիշատակարանում գրելու իր խրատականին. «Յուրաքանչյուր թագուհի պետք է գնահատի իր արժանապատվությունը եւ մաժիշտների հետ զրուցելիս չխոսի ամուսնու քնայքների մասին»: 40. Կիլիկյան Հայաստանի թագուհի, ով գահակալել է 1219-1222թթ.: Նա 1241 թվականին Սիս մայրաքաղաքում կառուցել տվեց մի հիվանդանոց՝ անտիրական հիվանդներին խնամելու համար: 44. Հայոց 141 թագավորների մեջ միակ տիրակալը, ով գահ է բարձրացել 3 անգամ: Նա ասել է «Աշխարհին եւ մարդկանց... անունով ներկայացա, որպես կին, բայց ուսերիս վրա կրեցի 7 տղամարդ արքաների բեռ»: 45. Հայոց արքա՝... Բ, ում ոտքերը պարսից Շապուհ արքան կապում է երկաթե շղթաներով ու բանտարկում Անիուշ բերդում: 46. Կիլիկյան Հայաստանի թագավորը... Բ, ով գահակալել է 1289-1296 եւ 1399-1301 թվականներին: 48. Արարատյան թագավորության թագավոր մ.թ.ա. 860-840-ական թվականներին՝ Եպիգե (Լասմա) թագուհու ամուսինը: 52. Հայոց թագավոր Սոմեոսի կինը, ով երկար տարիներ ապրել է Հայաստանում, բայց չի սովորել հայոց լեզուն: 53. Հայոց թագավոր Հովհաննես Սմբատ... (գահակալել է 1020-1041թթ.), ում կնոջ Շուշանի անունով էջմիածնի թանգարանում արժաթյա մի խաչ կա՝ երկաթագիր արձանագրությամբ: 54. Կիլիկյան Հայաստանի թագավոր Լեւոն Գ-ի կինը՝ ամենաբազմազավակ (15 երեխա) թագուհին:

Կազմեց Վոլոդյա ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ

### Ուսման հրավեր

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգյան հոգևոր ճեմարանը (Աստվածաբանական համալսարան) հայտարարում է 2022 -2023 ուստարվա ընդունելություն

Գեորգյան հոգևոր ճեմարան (Աստվածաբանական համալսարան) եւ Սեւանի Վազգենյան հոգևոր դպրանոց կարող են ընդունվել 33 եւ այլ երկրների մինչեւ 25 տարեկան արական սեռի այն քաղաքացիները, ովքեր ունեն միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթություն եւ զավակն են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Դիմել կարող են նաեւ Հայաստանի գիմված ուժերում ծառայությունն ավարտած, զորացրված քաղաքացիները:

Գեորգյան Հոգևոր ճեմարանում 2022 - 2023 ուստարվա ընդունելությունը կանցկացվի հետևյալ առարկաների ընդությամբ:


- Հայոց լեզու (գրավոր)
- Հայ գրականություն (բանավոր)
- Հայոց պատմություն (բանավոր)

Դիմորդները ճեմարանի տեսչության հետ ճաշադրական բնույթի գրույց կունենան նաեւ հետևյալ թեմաների շուրջ.

- Սուրբ Գրքի իմացություն,
- Հայ Եկեղեցու պատմության մասին գիտելիքներ,
- Եկեղեցական փորձառություն,
- Հայ գրականություն,
- Ինքնաարտահայտվելու կարողություն,
- Երաժշտություն (երգեցողություն, լսողություն, ռիթմի զգացողություն),
- Օտար լեզու (անգլերեն, ռուսերեն):

Ընդունելության համար դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

- դիմում ճեմարանի տեսչի անունով (լրացվում է տեղում),
- միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթության



վկայական (բնօրինակը),

- զինվորական դրության մասին փաստաթուղթ (բնօրինակը),
- տեղեկանք թեմի առաջնորդից կամ շրջանի հովվից,
- բժշկական վավերացման տեղեկանք,
- բնութագիր (դպրոցի տնօրենից),
- տեղեկանք բնակավայրից,
- մկրտության վկայական,
- ինքնակենսագրություն,
- անձնագրի պատճեն,
- 2 լուսանկար (3X4):

Դիմումներն ընդունվում են մինչև օգոստոսի 20-ը՝ շաբաթվա բոլոր օրերին՝ ժամը 10:00-15:00-ը: Հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գեորգյան Հոգևոր ճեմարան: Հեռախոսներ՝ (+374 10) 517-321, (+374 98) 085403: Էլեկտրոնային հասցեն՝ gevorgianseminary@gmail.com

### Հայտարարություն

ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1569-Ն որոշմամբ հաստատված՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 4-րդ կետի համաձայն՝ «Երեւանի պարավեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար: Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը,
  - 2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
- Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
- 1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով,
  - 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
  - 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
  - 4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թրջային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան,
  - 5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1569-Ն որոշմամբ հաստատված՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 9-րդ կետի համաձայն՝ մասնակցության հայտերի բացակայության պատճառով «Երեւանի պարավեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար փաստաթղթերի ընդունման եւ մրցույթի անցկացման ժամկետը երկարացվում է տասնհինգ աշխատանքային օրով՝ 2022 թ. ապրիլի 20-ից մինչև մայիսի 11-ը ներառյալ:

Փաստաթղթերն ընդունվում են ապրիլի 20-ից մինչև մայիսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից, Երեւանի պարավեստի պետական քոլեջում, հասցեն՝ ք. Երեւան, Բայրոնի 5:

Մրցույթը տեղի կունենա մայիսի 20-ին՝ ժամը 11:00-ին, Երեւանի պարավեստի պետական քոլեջում: Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 56-44-26 հեռախոսահամարով, էլեկտրոնային հասցեն՝ armballet@mail.ru:

### «Կրթություն», 2022 թ. թիվ 16 համարի խաչբառի պատասխանները

- Ուղղահայաց
1. Բոլ, 2. Լիտկե, 3. Մյուր, 4. Ֆոյն, 5. Փեթեն, 6. Դադ, 10. Ամարա, 12. Աշխեն, 14. Նուբար, 22. Սալգարի, 24. Վանեվան, 25. Սագան, 26. Հելեն, 27. Սմբատ, 29. Արուճի, 30. Գրանտ, 40. Բոյուս, 41. Պիթեաս, 43. Հենրի, 49. Ամալի, 50. Ասլան, 52. Ինգա, 53. Տիտո, 54. Բագ, 55. Եգր:
- Հորիզոնական
7. Սոմիկ, 8. Գեղամ, 9. Կատրանիդե, 11. Գիսանե, 13. Նանսեն, 15. Բալայան, 16. Անխել, 17. Ռիբեկ, 18. Գագարին, 19. Կոնտի, 20. Մուրեա, 21. Ասք, 23. Եվա, 26. Դյոգ, 28. Թելա, 31. Ֆլենդինգ, 32. Գալյազ, 33. Բատուտա, 34. Սարաեվո, 35. Նիկե, 36. Դալի, 37. Ռիդ, 38. Էնն, 39. Քեբուտ, 42. Վահկա, 44. Հալիձոր, 45. Բեյնա, 46. Ժաննա, 47. Մագելան, 48. Գարսիա, 50. Ալիշան, 51. Մագիստրոս, 56. Քարլա, 57. Գառզոլ:

### Հայտարարություն

Մրցույթ՝ Բուլղարիայի Հանրապետության բուհերում կրթություն ստանալու համար

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը 2022-2023 ուստարվա համար հայտարարում է մրցույթ՝ Բուլղարիայի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար բարձրագույն կրթություն ստանալու նպատակով (4 տեղ): Մրցույթը հաջողությամբ հաղթահարած թեկնածուների ուսուցումը կիրականացվի ամբողջությամբ անվճար՝ Բուլղարիայի Հանրապետության բյուջեի միջոցների հաշվին:

Ուսուցումն իրականացվելու է բուլղարերեն, ուստի լեզվին չտիրապետող ուսանողներն անցնում են լրացուցիչ մեկ տարվա լեզվի դասընթաց (նախապատրաստական):

Մրցույթին կարող են մասնակցել հանրակրթական դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների եւ բուհերի շրջանավարտները, ավարտական դասարաններում կամ կուրսերում սովորող եւ օտար լեզուներին տիրապետող ՀՀ քաղաքացիները:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել միայն մեկ մասնագիտության եւ մեկ կրթական աստիճանի համար:

Քննությունները տեղի կունենան 2022 թվականի մայիսի 9-13-ն ընկած ժամանակահատվածում:

Մրցույթը կկազմակերպվի երկու փուլով՝ մասնագիտական քննություն եւ հարցազրույց:

Կրթաթոշակներին հավակնող դիմորդները պետք է ներկայացնեն.

- 1) դիմում եւ դիմում-հարցաթերթիկ մրցույթին մասնակցելու համար, որտեղ պետք է նշվի նախընտրած մասնագիտությունը,
- 2) բուլղարական կողմից ներկայացված հարցաթերթիկ,
- 3) ավարտական փաստաթղթի՝ ատեստատի կամ դիպլոմի եւ դիպլոմի հավելվածի (միջուկի) պատճենները՝ անգլերեն թարգմանված եւ նոտարական հաստատմամբ՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից հաստատված (սպոստիլ),
- 4) ավարտական դասարաններում սովորողները՝ առաջադիմության թերթիկ (ակադեմիական տեղեկանք)՝ նոտարի կողմից անգլերեն թարգմանված եւ նոտարական հաստատմամբ՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից հաստատված (սպոստիլ),
- 5) բակալավրի ավարտական կուրսերում սովորողները՝ ակադեմիական տեղեկանք ամբողջ ուսումնառության վերաբերյալ՝ նոտարի կողմից անգլերեն թարգմանված եւ նոտարական հաստատմամբ՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից հաստատված (սպոստիլ),
- 6) բժշկական տեղեկանք (հավելված)՝ նոտարի կողմից անգլերեն թարգմանված եւ նոտարական հաստատմամբ՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից հաստատված (սպոստիլ),
- 7) ինքնակենսագրություն (CV) (անգլերեն),
- 8) անձնագրի պատճենը,
- 9) 3x4 չափի 3 գունավոր լուսանկար,
- 10) արական սեռի անձին՝ զինվորական գրքուկի կամ կցագրման վկայականի պատճենը կամ գրականության տեղամասից համապատասխան տեղեկանք:

Պահանջվող փաստաթղթերի բնօրինակների փաթեթը պետք է ներկայացնել 2 օրինակով՝ պատճենի հետ (1+1):

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2022 թվականի մայիսի 6-ը՝ ներառյալ, երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-ից 17:00-ը: Ընդմիջում՝ ժամը 13:00-14:00:

Մրցույթին մասնակցել ցանկացողները փաստաթղթերը պետք է ներկայացնեն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության արտաքին կապերի եւ սփյուռքի վարչության արտաքին կապերի բաժին (հասցե՝ ք. Երեւան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 311 եւ 313 սենյակներ, հեռ.՝ +37410-59-96-44; +374 10-59-96-46): Լրացուցիչ տեղեկությունների համար կարելի է դիմել վեբ-էջին՝ հեռախոսահամարներով:

Քննությունները կկազմակերպվեն՝ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի»:

Մագիստրոսական կրթության համար դիմորդների մրցույթը կկազմակերպվի՝ համաձայն ՀՀ կրթության եւ գիտության նախարարի՝ 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N1193-Ն հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության եւ ուսուցման կարգի»:

Ծանոթություն. արական սեռի ՀՀ քաղաքացիների՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով եւ «Գիտության եւ կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը եւ պայմանները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ 2002 թվականի օգոստոսի 29-ի N1394-Ն եւ 2015 թվականի փետրվարի 5-ի N117-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ 2000 թվականի հունվարի 13-ի N15 որոշումն ուժը կորցրած ծանաչելու մասին»՝ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ:

Միջազգային համաձայնագրերի հիման վրա օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից գործուղված քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում չի տրամադրվում:

Հաշվի առնելով նոր տիպի կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված համաճարակային իրավիճակը՝ գիտելիքների ստուգման ժամանակացույցը կարող է փոփոխվել:









# Սպարապետ Նժդեհ

**Խոսքը եւ երաժշտությունը  
ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺՇՏԻ**

Արաքսից անդին մեր Ավարայրըն է,  
Այս ասիին քո սուրբ ծընընդավայրն է:  
Վարդանանց ոգով՝ սրբազան ու վեհ,  
Ձորացել ես դու՝ Գարեգին Նըժդեհ:

Երբ հուսահատված, հայերը ցրված  
Ելք էին փնտրում, ոսխից գարկված,  
Դու ժողովեցիր՝ սըրտիդ մեջ հըրդեհ,  
Գոչեցիր՝ «Ի գե՛ն», սպարապետ Նըժդեհ:

Խուստուփի լանջին կանթեղ է վառված՝  
Հյուսիսի դըժնի «վիրապից» հառնած՝  
Հերոսիդ անմահ մասունքն է լուսե՝  
Գալիքի փարոս՝ նահատակ Նըժդեհ:

Գործը քո սուրբ էր, երկընթից օրհնված,  
Պատգամըդ լըսեց հայ ազգըդ փրկված:  
Արյան կաթիլներ կըդառնան վարդեր,  
Ճակատիդ պըսակ, հաղթանակ Նըժդեհ:

- ❖ Ինքն իրեն հարգող ժողովուրդը իր ինքնապաշտպանության հույսը դնում է նախ իր բազուկի, ի՛ր գե՛նքի վրա:
- ❖ Հայրենապաշտպան դաստիարակություն - ահա մեր փրկության խարիսխը:

**Գարեգին Նժդեհ**



22 *f*  
Գո - չե - ցի՛ր՝ «Ի գե՛ն», սպա - րա - պե՛տ Նըժ - դեհ: Խուս - տու - փի լան - ջին կան - քեղ է վառ - ված՝

27 *mf*  
Հյու - սի - սի դըժ - նի «վի - րա - պից» հառ - նած՝ Հե - րո - սիդ ան - մահ մա - սունքն է լու - սե՛

31 *f*  
գա - լի - քի վա - րոս՝՝ նա - հա - տակ Նըժ - դեհ:

36  
Գոր - ծը քո սուրբ էր, եր - կըն - քից օրի - նը - ված,

39  
Պատ - գա - մըդ լը - սեց հայ ազ - գըդ փրկ - ված: Ար - յան կա - թիլ - մեր

42  
կը - դառ - նան վար - դեր, ճա - կա - տիդ պը - սակ, հաղ - րա - կան Նըժ - դեհ:

Վեհ (♩ = 46-50)

1 *mp*  
Ա - րաք - սից ան - դին մեր Ա - վա - րայրն է, Այս ա - փին քո սուրբ ծը - նըն - դա - վայրն է Վար - դա - նանց ո - գով՝

8 *mp* *mf*  
Ա - րաք - սից ան - դին մեր Ա - վա - րայրն է, Այս ա - փին քո սուրբ ծը - նըն - դա - վայրն է Վար - դա - նանց ո - գով՝

13 *f*  
սըր - րա - գան ու վեհ, Ձո - րա - ցել ես դու՛ Գա - րե - գին Նըժ - դեհ: Երբ հու - սա - հատ - ված, հա - յե - րը ցըր - ված,

18 *mf*  
Ելք է - ին փն - տրում, ո - սո - խից գարկ - ված, Դու ժո - դը - վե - ցիդ՝ սըր - տիդ մեջ հըր - դեհ,

ISSN 1829-2593  
771829 259108



**ՀԻՄՆԱԴԻՐ՝  
ՀՀ ԿԳՆ  
«Կրթություն» թերթի  
խմբագրություն» ՊՓԸԸ**

Գրանցման վկայական՝ 01Ա-049349,  
Տրված է՝ 11.01.2001թ.  
Դասիչ՝ 69312,  
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ Մեծի 67,  
E-mail: krtutun@yandex.ru  
Հեռ. 57 49 56

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում:  
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:  
Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ Մեծ»  
իրատարակչության տպարանում:  
Տպաքանակը՝ 2000:  
Ծավալը՝ 6 տպագրական մամուլ:  
Ստորագրված է տպագրության՝  
26.04.2022թ.  
Գինը՝ 400 դրամ:

Համարի պատասխանատու՝  
**Գլխավոր խմբագիր՝  
Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ**